

## ՉԵԶՈՔ ԳՈՏԻ

ՅԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԲԵԼ ԱՐԾԱԹԲԱՆՅԱՆ՝ շինարարական արվեստի հետագուստը. Անի ավերակ քաղաքի Մեծ Մայր Տաճար վանքի վաճահայր Միքայել ՎԱՐԴԱՊԵՏԸ ճարտարապետի ընկերը. ՄիՄՈՒ՝ վանքի ծառան.

ՇՈՒԵՐ՝ Սիմոնի կինը. ԱԲԵԼ՝ Սիմոնի-Շողեթի տղան. թափառական կույր ԱՇՈՒԴ, պրա ԹՈՌԸ. չգիտես խոտհարքի աճուրդի<sup>9</sup>, Կաթուղիկէ Մեծ Մայր Տաճար ուխտի<sup>10</sup>, թե՞ գեղջկորեն միաժամանակ աճուրդի ու ուխտի եկած ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ, ԱՍԱՏՈՒՐ, ՄԱԳԹԱՐ. ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲ, ԱՐՁԱԿԱԿ. ԳՅՈՒՂԱՑԻ ՕՂԵՎԱԾԱՌ, ՍԱՐՍԱՍԱՊԱՅ ԶՈՐՔԵՐԻ ՄՊԱ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՐԱԹՐՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ<sup>11</sup> Երիտասարդ ճարտարապետներ, Աբել Արծաթբանյանի աշխատանքով հետաքրքրվող հանձնախմբի անդամներ, ԾՎԵԴՈՎ ՆԻԿՈԼԱՅ ՎԱՍԻԼԵՎԿԻ<sup>12</sup> արևելագետ-հայագետ, ԱՐԴԻՒՅՅԱՆ-ԱՐԳՈՒՏԻՒՆՍԿԻ ՍԵՄՅՈՆ՝ հանձնախմբի ղեկավար, ՎԱՐԿԱՌ ՏՈՒՄԱՆՈՎԱ ազնվականուիի, Բահարյանի հարսնացուն, արվեստի հովանավորուիի, կարելի է անվանել ՕՐԵՈՐԴ ԿԱՐԵԿՑԱՆՔ, ԹԻՖԼԻՍԵԳԻ հարուստի ժառանգ ԱԼՏՈՆ ԱԹԱԲԵԿՈՎ կես-հայրենասեր, կես-հարբեցող, կարմիր հագած զինավառ ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲ:

ԱՅԻ, 1914, հուլիսի առաջին օրերից մեկ օրը:

Կարմիր հագած զինավառ տղաների խումբը գիշերը եկավ, այստեղ մոմեր վառեց, վաճակոր աջը համբուրեց, ձայնը զսպելով երգեց վոեժի ու հույսի իր երգը, ապա յուրաքանչյուրն առանձին ու բոլորը միասին ասացին Երդման Երդ-վում եմ խոսքը և գնաց թաղվեց գիշերվա խավարում, մոմերը վառվում էին, հետո լուսացավ, և ճարտարապետն ու վաճահայրը բազիլիկ վանքի գավթում էին՝ որ նրանց կացարանն էր, ճարտարապետն արտանկարում էր ճեպանկարը, վաճահայրը հետևում էր նրա աշխատանքին, Սիմոնը, Շողերը և տղան գավթի դռանն էին, Սիմոնը խաչքար էր նմանակում, Շողերը՝ գուլպա գործում, Երեխան՝ փրփրաքարի կտորով մի հին թուր մաքրում:

Գավիթ-կացարան, Մեծ Մայր Տաճար վանք, սրանց միջև ընկած բակը՝ ուր նմանակվող խաչքարն է կանգնած:

**ճԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ո՞նց էր երգում թուրքի կմիկը, հայր սուրբ: Շան աղջկա ձենն ականջից չի գնում: Ի՞նչ գեղեցկություն էր, հայր սուրբ, սփռոցն էլ, ամուսինն էլ՝ իշխան մարդու պես թիկնած, ձիերն էլ ու ինքն էլ: Ու ո՞նց էր երգում, ոնց էր երգում շան աղջիկը:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Իհարկե տեսել էր, որ լսող ունի ու լավ էր երգում:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Չէ՛, հայր սուրբ, ինքն իր ամուսնու համար երգում էր:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Կիս է, չէ՞ շնորհք է, չէ՞ աչքի պոչով նկատել էր, որ մենք ականջ ենք դնում:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Յը՛, աչքի պոչով նկատել էր: Ամուսինը, ձիերը, երգը, ինքը: Յայր սուրբ, ագռավի քո ձենով չե՞ս հիշի ինչ էր երգում:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Երգն իհարկե լավն էր, ձիերն էլ, ուրին էլ, սփռոցն էլ, բայց դրանից ավելի են կա, որ արդեն քեզ ամուսնացնելու ժամանակն է:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Մի քիչ շուտ է, հայր սուրբ, և առհասարակ ում հետ ենք գրուցում: Երգից, երգից էլ, հացից էլ, այդ ամբողջ օրվա գեղեցկությունից ավելի մի բան կա, որ մարդու խեղդում է՝ թշնամուդ գերազանցությունը, թշնամուդ սպանիչ գերազանցությունը հասկանալը: Եդ արդեն պարանը վիզդ անցըրու, քանի որ, միւնույն է, թախիծն ու խելագարությունն են քեզ խեղդելու: Մի թուրքի կնոջը տես է՛... Քարավան է գնում, գնացք է գնում, իսկ ինքը նստել ու իր երգին է, մնացյալ աշխարհի հետ գործ չունի. ինչպես որ իրենց հացն է իրենց առաջ - իրենց բաժին գեղեցկությունն էլ իրենց մեջ է, մնացյալ աշխարհի հետ գործ չունեն: Թուրքի անգրագետ կմիկը: Ես էլ ճարտարապետ եմ, ականջնիս բամբակ եմ խցկել ու գիտակցարար - գիտակցարար - իմ գործն եմ անում. ինչ որ կա՝ ես է, ուրիշ տեղ ուրիշ լավ բան

չկա, եղածը ես է: Բայց գնացքի ամեն կանչի՝ տասնիհնգ  
տարեկան աղջկա նման սիրտս տեղից դուրս է թռչում՝ թե  
կյանքն ահա հեռվից է անցնում, իսկ ես շպրտված եմ մի  
անկյուն: Ես էլ՝ ես:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Սրտի թպրտոցը լավ է, նշանակում է պսակիդ ժամա-  
նակները մոտենում են:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏ.** Խոսում ես՝ որ խոսած լինես:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Ուրիշ ինչ կար ասելու, որ չասացի:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏ.** Ասա՝ մարդուկնիկ սարն էին գնում, հացի էին նստել,  
կինը երգում էր - և ամուսինը գեղեցիկ էր, ծիերը գեղեցիկ էին,  
անցնող գնացքը գեղեցիկ էր, դաշտում կանգնած՝ մենք գեղեցիկ  
էինք ու մի երգի շնորհիվ մի ամիս է գեղեցիկ ենք:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Հեռվից էր գեղեցիկ, ճարտարապետ, եթե մոտենայինք  
հարցնեինք ու եթե պատմեին՝ տակը մի դժգոհ, մի ծանրաշունչ  
պատմություն կլիներ. գիշերվա մթնում թափառող ճրագի պես.  
մոտենում է, հեռանում է, բարձրանում է՝ ուրեմն բլուրի վրա է,  
կորչում է՝ ուրեմն ծորն իջավ, նորից է երևում, այդպես գիշերվա  
մեջ թափառում է ու գեղեցիկ է: Հետո գալիս մոտենում է՝ ու հոգ-  
նած գյուղացու են անտեր այժերը կորել են:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏ.** Այո:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Այսինքն՝ վագրը թաթը բարձրացրել է:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏ.** Այո, դառնանք մեր քարին: Բագրատունյաց վագրը  
բարձրացրել է թաթը: Վագրը՝ ենթակա, բարձրացրել է՝  
ստորոգյալ, թաթը՝ խնդիր: Վագրը՝ խնդիր, թաթը՝ խնդիր,  
Բագրատունյաց՝ խնդիր: Վագրը թաթը բարձրացրել է - վագրը  
թաթը չի բարձրացրել: Վագրը թաթը բարձրացրել է - ինչո՞ւ:  
Թաթի տակ՝ ի՞նչ: Թաթի տակ՝ մեր խեղճությունը:  
Բագրատունյաց վագրը թաթը բարձրացրել է, թաթի տակ՝ գունդ:

Ի՞նչ գունդ: Երկրա: Եղավ: Յայր սուրբ, վագրը բարձրացրե՞լ է  
թաթը:

ՎԱՆԱՐԱՅՐ. Բարձրացրե՞լ է:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Գիծն ասում է՝ այս:

ՎԱՆԱՐԱՅՐ. Գիծն այս է ասում՝ վագրն ուրեմն բարձրացրել է թաթը,  
գիծն այս չի ասում՝ վագրը դարձյալ բարձրացրել է թաթը: Քշի  
գնա, լոռջիք ասում եմ՝ ուրի նման կողքիդ կանգնած դողում եմ,  
վախիլ մի:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Յայր սուրբ... քո համեստ կարծիքով հայերիս հա-  
մար երկիրը գունդ երիւէ եղե՞լ է:

ՎԱՆԱՐԱՅՐ. Իմ համեստ կարծիքով՝ այսինքն տգետ կարծիքով:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Չեղավ: Եսքան տարվա մեր ընկերության մեջ ճիշտ  
բան քեզ երբ եմ ասել:

ՎԱՆԱՐԱՅՐ. Գործ չունես, նկարիր գնա: Սկզբում գունդ էր, հետո՝  
տափակ. հետո՝ դարձյալ գունդ էր, ապա դարձյալ՝ տափակ.  
տասներորդ դարի Բագրատունյաց երկիրը գունդ էր, իսկ տասն-  
հինգերորդում արդեն ընդհակառակը՝ տափակ էր: Յիմա գունդ է,  
քշիր գնա:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Սիմոն... Սիմոն, ի՞նչ ես ասում, երկիրը գու՞նդ է թե  
տափակ:

ՍԻՄՈՆ. Վարդապետի կարծիքով գունդ է, ճարտարապետ, բայց վայ  
թե փոսի, թոնի պես մի բան լինի:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Ապրես: Թոնրիդ միջից մի թութուն վառիր:

ՎԱՆԱՐԱՅՐ. Բագրատունիները կատակ չեն անում:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Կատակ մենք ել չենք անում: Բագրատունյաց վագրի  
թաթի տակ նկարում ենք երկրագունդ՝ Ուչքիլիսեից Ղարաքի-  
լիսե: Սիմոն, վագր տեսած կա՞ս, վագր:

ՍԻՄՈՆ. Մեծ հորեղբայրը պատմել է, թե քուրդ ոչխարածները

Տիգրիսի ձորերում տեսել են:

ՆԱՐՏԱՐԱՊԵՏ. Նկարում են, հայր սուրբ, բայց սա հայերեն չի լինում:

ՎԱՆԱՐԱՅՐ. Թուրքերեն է լինում:

ՆԱՐՏԱՐԱՊԵՏ. Գուցե և թուրքերեն:

ՎԱՆԱՐԱՅՐ. Վագրերի երկում քանդակվել է զինանշանի այդ քարը և բերվել է ոչխարների երկիր:

ՆԱՐՏԱՐԱՊԵՏ. Չգիտեմ: (Երեխան բերում, ճարտարապետին է տալիս Սիմոնի փաթաթած ծխախոտը): Սիմոն... ճղարեդ քանդվում է:

ՍԻՄՈՆ. Թքիր կպցրու, ճարտարապետ, թքիր կպցրու:

ՆԱՐՏԱՐԱՊԵՏ. Մեր թուքը չի կպցնում, Սիմոն:

ՍԻՄՈՆ. Հայր սրբին տուր, ճարտարապետ, հայր սուրբը լավ է կպցնում:

ՎԱՆԱՐԱՅՐ. Վագրը գոմեշի մոտ կատու է, ճարտարապետ, բայց գոմեշ է սպանում: Թույլ, անկենդան, սատկած՝ վագրը շաբարներով ընկած մնում է: Ցատկի ժամանակ վագրը հավաքում է թույլ, անկենդան ժամանակի ուժերը, խփում ու գոմեշ է սպանում ու դարձյալ՝ թույլ, անկենդան: Ես ասում եմ՝ ցատկող վագրը դեպի գոմեշ է շարտում նաև ապագայի ուժերը, և ուրեմն գոմեշին հաղթելուց հետո վագրը մնում է թույլ, անկենդան: Պահանջվեց, և Բագրատունիները սպառեցին նաև ապագա դարերի մեր ուժերը:

Արեգակը ելնում է արևելքից և արտորալով արևմուտք է գնում: Ժողովողի ծշմարտություններն արեգակի ներքո կան, և քնեած ժողովուրդներն արեգակի ներքո զարթնում են, և արթուն ժողովուրդներն արեգակի ներքո մտնում են դարձյալ նիրիի մեջ:

ՆԱՐՏԱՐԱՊԵՏ. Նկարեմ թաթը բարձրացրած վագր, թաթի տակ՝

գունդ, երկրա: Ղարաքիլիսեից Ուչքիլիսե:

ՎԱՆԱՐԱՅՐ. (Քարտեզի դեմ) Ղարաքիլիսեից մինչև Ուչքիլիսե - էնքան էր, ինչքան էսօրվա Ռուսաստանը: Գուգարքի Տաշրաց աշխարհից Վարաժնունիք աշխարհով, Նիգ աշխարհով, Արագածոտն գավառով... գնում իջնում էին Արարատյան աշխարհ: Բագրատունիների Երկիրն էր գունդ, մերը՝ տափակ: Ասա Բագրատունիների վագրը կատու է, և Բագրատունիների վագրը վագր կատու կդառնա: Մի՛ ասա: Ասա՝ Բագրատունիների վագրը վագր է, բարի տակ Երկրագունդ է պահում, և Բագրատունիների վագրը վագր կդառնա: Միտքը չիր ու անգո մի բան չէ, բարի հետ հավասար՝ միտքը դիր ու կշռիր. միտքը ծնվում, լինում, մեռնում է, ինչպես քարը կամ մարդը: Ժողովոդի լեզուն ասում է՝ ինչ մտանես էն գտանես: Ինչ որ տգեղ է՝ մի՛ մտածիր:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Ես չե՞ն մտածում, ես նկարում եմ ուրիշների մտածածքը: Իմ փոխարեն եթե լուսանկարելու մի գործիք լիներ՝ ես գործն ինձանից լավ կաներ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Բկից կրօնեի քո եր լուսանկարչական գործիքի ու խեղդելով կստիպեի՝ որ հայերեն նկարի: Ո՞ւմ դեն ես կատաղում, ի՞նչ ես ուզում, էս է:

ՇՈՂԵՐ (Սիմոնին). Նստել ես ու՝ չըխկ, չըխկ, չըխկ, չըխկ: (Շոգեքարշի սուլոց): Գնացքը Եկավ:

ՄԻՄՈՆ. ճարտարապետ: (Որդուն) ճարտարապետին ասա գնացքը Եկավ: ճարտարապետ, գնացքը Եկավ: Գնացքը Եկավ: Գնացքը տեսնես մեզ համար ինչ լուր է բերելու:

ՇՈՂԵՐ. Գնացքը Եկավ: Ե՞րբ ես ինձ գնացք նստեցնելու: Գնացք նստենք, գնանք, գնանք, գնանք... Սիմոն, գնացքը մինչև ո՞ւր է տանում: (Շոգեքարշի սուլոց): Գնացքը անցավ: Գնացքը Եկավ,

գնացքը անցավ, որու նստել ես ու՝ չըխկ, չըխկ, չըխկ: Խաչդի խաչ  
չի դառնալու, խոտն էլ հնձելու մնաց:

ՍԻՄՈՆ. Նախիրս ծմեռը սովից ջարդվելու է:

ՇՈՂԵՐ. Խոտը կինձեինք, կիավաքեինք, կղիզեինք, գարնան սուր  
ժամանակ կծախեինք, մեզ համար մի կով կառնեինք... Սիմոն...  
Գնացք նստեինք, գնայինք-գնայինք-գնայինք... Սիմոն, չեմ  
ասում թե գնանք Փարիզ ապրենք: Սիմոն, գնայինք Փարիզը  
տեսնեինք ու էլի գայինք:

ՍԻՄՈՆ. Այո, Փարիզ լսել են, որ դու եղբան բարի, սրտացավ,  
հասկացող, շռայլ աղջիկ ես, ուզում են քեզ տեսած լինել: Նուրբ,  
կանացի, հասկացող... քեզ մոմ արած ուրիշների առաջ վառել  
ես:

ՇՈՂԵՐ. Տղամարդ ես:

ՍԻՄՈՆ. Տղամարդը դու էդ ինչի՞ն ես ասում:

ՇՈՂԵՐ. Խոտ հնձիր, գարնան սուր ժամանակ ծախիր, կով առ:

ՍԻՄՈՆ. Զգվեցնում ես:

ՇՈՂԵՐ. Աշխարհը լիքն ապրուստ է: Ին ծնողներն ինձ տղամարդու  
են տվել: Աշխարհը՝ լեն, հարուստ... Որ կողմ նայում են՝ ուրա-  
խություն ու ապրուստ է:

ՍԻՄՈՆ. Աշխարհի լիքն ապրուստը շռայլ, լենսիրտ, բաց մարդկանց  
համար է: Աշխարհին ին տվածն ի՞նչ է որ ինձ աշխարհի տվածն  
ինչ լինի: Քո՛ տվածն ինչ է: Քո ո՞ր շռայլության դիմաց ես աշ-  
խարհից շռայլություն ուզում:

ՇՈՂԵՐ. Յիմար: Խելագար: Գիլի առաջ՝ ոչխար, ոչխարի առաջ՝ խոտ:

ՍԻՄՈՆ. Այո:

ՇՈՂԵՐ. Ուրիշները ոսկու մեջ որ թաղված են՝ իրենց մոմ են արել,  
աշխարհի համար վառվում են:

ՍԻՄՈՆ. Ես ուրիշների հետ գործ չունեմ: Ես ինձ գիտեմ ու քեզ էնքան

մոտիկ կարծեցի, որ կարծեցի քեզ էլ գիտեմ: Կարծեցի քեզ կարող են են ասել, ինչ որ ինձ են ասում: Սխալվել են, բայց կողքիս նստել ես, ու անընդհատ մոռանում են, որ սխալվել են:

ՇՈՂԵՐ. Իմ ծնողներն ինձ տղամարդու են տվել:

ՍԻՄՈՆ. Ի՞նչդ է պակաս: Սովա՞ծ ես:

ՇՈՂԵՐ. Ոչ:

ՍԻՄՈՆ. Ծարա՞վ ես:

ՇՈՂԵՐ. Ոչ:

ՍԻՄՈՆ. Տկլո՞ր ես:

ՇՈՂԵՐ. Ոչ:

ՍԻՄՈՆ. Ի՞նչդ է պակաս:

ՇՈՂԵՐ. Սոված են, ծարավ են, տկլոր են, կարոտ են:

ՍԻՄՈՆ. Ուրիշներն էլ քո կարոտն են: Տուր և առ:

ՇՈՂԵՐ. Փորձո՞ւմ ես, թե լուրջ ես ասում:

ՍԻՄՈՆ. Ե՞, Շողեր: Խոսեցնում ես՝ չեմ խոսում, ելի ես խոսեցնում:

Ասում եմ, իենց որ մի քիչ դժվար բան եմ ասում՝ գլուխդ ցավում է: (Որդուն) Եդ ի՞նչ բանի ես, տղա:

(Որդին հորը նայում է մի պահ, ապա շարունակում է մաքրել թուրը):

ՎԱՆԱՐԱՅՐ. Եղբայր, գիծ է՝ քաշիր վերջացրու, ի՞նչ ես՝ Բագրատունիները, վագրը, երկրագունդը:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Սիմոն... մի հատ ծխախոտ սարքիր:

ՍԻՄՈՆ. Ուզածդ ծխախոտ լինի, ճարտարապետ:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Յայր սուրբ... մի բան խնդրեմ՝ արա: (Գրամոֆոնի մասին) Սկիզբը իենց վերջացմի՝ դու ետ տուր, նորից վերջացնի՝ դարձալ ետ տուր, մինչև նկարեմ վերջացնեմ: Զգիտեմ, շարունակությունն ինձ դուր չի գալիս: Զգիտեմ, ինձ սկիզբն է դուր գալիս: Զգիտեմ, շարունակությունը բացատրում է, իսկ բացատրությունից պարզվում է, որ սկզբի ոգևորությունն անտեղի

Եր: Դայր սուրբ, որ նորից ծնվես՝ ի՞նչ ես դառնալու:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դնում եմ, սկսիր: (Նվագում է իրենց միակ ձայնասկա-  
վառակը՝ «Բամ փորտան»):

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Սկսեցի, հայր սուրբ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դառնալու եմ ճարտարապետ:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Դառնալու ես ճարտարապետ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Նկարիր:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Նկարում եմ: Ես ճարտարապետ չեմ դառնալու:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դառնալու եմ բացսիրտ, գեղեցիկ, լիրք կին, քայլելու եմ  
երկրով մեկ և իրճվանքով լեցուն իմ մարմինը նվիրելու եմ իմ  
կարիքն զգացողներին, ամենավերջը՝ իմ փշացած մարմինը տա-  
լու եմ երկրի քաղցած շներին: Նկարիր:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Նկարում եմ, համաձայն չեմ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դառնալու եմ բանաստեղծ:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Եվ ի՞նչ ես գրելու:

ՎԱՆԱՐԱՅՐ. Իմ բարի սրտի էն մեծ խոհերից,

Են մեծ խոհերի անհուն խորերից՝

Կամեցավ ելավ իմ հզոր հոգին՝

Որ բարձրից նայի աստծու աշխարքին...

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Դամաձայն չեմ: Ես բանաստեղծ չեմ դառնալու:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դամաձայն ես, նկարիր: Դառնալու եմ նրանց մահը, ում  
համար կյանքը ուրախություն չէ և նվազեցնելու եմ, այդպիսով,  
երկրի դառնությունը, քանի որ դառնությունը նույնպես վարակիչ  
է: Նկարիր բարը բարձրացրած վագր, բարի տակ՝ երկրագունդ:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Նկարում եմ, բայց համաձայն չեմ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Նկարիր, նկարելը քեզ կհամաձայնեցնի: Դառնալու եմ  
այն, ինչ որ եմ:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Դամաձայն չեմ:

**ՎԱՍԱՐԱՅՐ.** Ես ո՞վ կամ ինչ եմ որ համաձայն լինեմ և համաձայն չլինեմ: Այս այսպես է:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Դու մարդ ես, ծնվել ես, ապրում ես, կաս, մեկ անգամ կաս, և պահանջվում է, որ մարդավարի լինես:

**ՎԱՍԱՐԱՅՐ.** Իմ լինելուս համար ես շնորհակալ եմ աստծում՝ որ իմ այս անպետք կավը ծեփելու վրա ջանք ու ժամանակ է կորցրել: Գոհություն աստծուն, Պլատոն ու Քրիստոս երկնած աստծուն, որ Միքայել ողորմելի է ծեփել: Արարիչ բնությանը փառք, որ գող ու անբան Միքայելին թող է տալիս շնչել իր անապական օդը, Պլատոնի ու Քրիստոսի բաժին օդը:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Դու քեզ խաբում ես, հայր սուրբ:

**ՎԱՍԱՐԱՅՐ.** Ես ինձ խաբում եմ, ինձ խաբելով՝ իմ լեղին իմ մեջ եմ պահում ու աստծո օրը չեմ դառնացնում: (Երգի մասին) Սկսե՞ն:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Մի՛, չեմ կարողանում:

**ՎԱՍԱՐԱՅՐ.** Տուր նկարեմ:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Ի՞նչ ես նկարելու:

**ՎԱՍԱՐԱՅՐ.** Խիղճ ունեցիր. տղա-երեխեք կան, ծոցներում կարմիր դրոշ են պահում, դրոշին չգիտեն ինչ նկարեմ՝ որսի արծիվ են նկարում:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Քեզ, ու երեխեքին էլ քեզ հետ, մի՛ խարիր, հայր սուրբ: Ես ծեզ համար հայի արծիվ որտեղի՞ց հնարեմ:

**ՎԱՍԱՐԱՅՐ.** Ես է պա՛րզ երևում է՝ հայ Բագրատումիների վագրը թաթը բարձրացրել է:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Ես էլ էի կարծում, պարզ երևում էր, ու ես կարծում էի: Յիմա չեմ կարծում: Յիմա գիտեմ, որ պարզ երևում է, բայց հեռու է, շատ հեռու, չնայած երևում է պա՛րզ, պարզ:

**ՎԱՍԱՐԱՅՐ.** Ես ինձ խաբում եմ, Աբել, բայց ինչպես եմ խաբում: Ես ինձ ասում եմ՝ ով է Գրիգոր Նարեկացին և ով եմ ես. Գրիգոր Նա-

րեկացին հաց է կերել և անպիտան Միքայելս հաց է ուտում: Ես ինձ խաբո՞ւն եմ:

ԱԱՐՏԱՐԱՊԵՏ. Չգիտեմ, հայր սուրբ: Իսկ եթե իմ նկատմամբ մի քիչ արդար լինեմ՝ հանգիստ կասեմ, որ ես Գրիգոր Նարեկացի եմ: Ո՞ւմ համար եմ նկարում:

ՎԱՆԱՐԱՅՐ. Ինչ որ է՝ ես է:

ԱԱՐՏԱՐԱՊԵՏ. Սիմոն, ծխախոտ խնդրեցի: (Երեխան, որ նրանց վեճի ժամանակ կանգ էր առել դրան մոտ, բերում տալիս է ծխախոտը): Թուրդ ի՞նչ դարձավ, տղա:

ԱԲԵԼ. Ինչքան մաքրում եմ՝ ժանգ է, ճարտարապետ, ինչքան մաքրում եմ ժանգ է, քանի գնում՝ ժանգը շատանում է: Կարո՞ղ է, ճարտարապետ, մինչև վերջ ժանգ է:

ԱԱՐՏԱՐԱՊԵՏ. Մինչև վե՞րջ: Ժանգը որևէ բանի վրա է, չէ՞ ուրեմն տակին կա եդ որևէ բանը:

ԱԲԵԼ. Այո: Իսկ կարո՞ղ է պատահել, ճարտարապետ, որ ժանգը ժանգի վրա է, ժանգն էլ ժանգի վրա, ժանգերն եղան մինչև վերջ իրար վրա են:

ԱԱՐՏԱՐԱՊԵՏ. Չգիտեմ, մաքրիր տես:

ԱԲԵԼ. Ինչքան մաքրում եմ՝ ժանգ է, ճարտարապետ, ինչքան մաքրում եմ ժանգը շատանում ու մանրանում է:

ՎԱՆԱՐԱՅՐ. (Երեխայի գնալուց հետո): Քեզ արի տանեմ խոտինձի, ճարտարապետ, վագրը հետո կնկարենք:

ԱԱՐՏԱՐԱՊԵՏ. Փոստը բերեն՝ հետո: Գնացքը եկել է: Իսկ առհասարակ՝ հնձվողը թող հնձի, քարտաշը՝ տաշի, ճարտարապետն էլ թող իր ճարտարապետությանը մնա:

ՎԱՆԱՐԱՅՐ. Եդ՝ դրախտում:

ԱԱՐՏԱՐԱՊԵՏ. Դժոխքում էլ ամեն մարդ իր գործին է:

ՎԱՆԱՐԱՅՐ. Հազար մարդու հարյուր տարվա գործը դու քեզ համար

մի ամառվա գործ ես կարծել, եղբայր, որու ո՞ւմ վիա ես բարկանում: Փարիզից որսի՝ էիր եկել: Խաղանք շախմատ: Շողերին ասենք սուրբ սարքի, ու մի հատ ճատրակենք:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Չեմ խաղում:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Նարդի գցենք:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ոչ:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Պատմե՞մ մոլլա Նասր Էդ-դինի առակը:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ինչի՞ մասին:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Կյանքը լավացնելու մասին: Շատ ուրախ առակ է: Մեկը թե... մեկի կինը թե՝ տուններս նեղվածք է: Նորից՝ տեղներս նեղ է: Ամեն օր՝ տուններս նեղվածք է: Մարդը թե՝ բա ես ի՞նչ անեմ, որ նեղվածք է: Թե՝ գնա մոլլայի մոտ, մոլլան մի բան կասի՝ տեղներս կլենացնենք: Լավ, գնացինք մոլլայի մոտ: Մոլլա, ասալլամ ալեյքում - ալեյքում սալամ: Մոլլա, մեր կինն ասում է՝ տուններս նեղվածք է: Նեղվածք է՝ ալլահով իհմա կլենացնենք. կով ունե՞ն. ունեմ. քաշիր տուն: Մոլլա, կովը տուն տարա, բայց տուններս նեղվածք է: Շատ բարի. ձի ունե՞ս. ունեմ. ձիդ տուն քաշիր: Զին էլ տարանք: Շուն ունե՞ս, տար կապիր տանդ: Խոզ ունե՞ս, տուն կոխիր: Մոլլա, անտանելի է, խեղդվում ենք: Ինչո՞ւ եք խեղդվում: Դե, մոլլա, կովը, ձին, շունը, խոզը: Տնաշե՞ն, բա կովը, ձին, շունը, խոզը տա՞նը կպահեն, դուրս արա տնից: Մոլլա, ասալլամ ալեյքում, տունս լե՞ն, մե՞ծ, ազա՞տ...

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Որ ի՞նչ:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Մոլլան էդ մարդու կյանքը լավացրեց:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Թուրքը խոզ չի պահում: Ենպես որ մոլլան չեր կարող ասել՝ «խոզդ տուն տար», «խոզդ տնից դուրս արա»:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Քեզ համար ես ծաղրածու չեմ: Նկարում ես՝ նկարիր, չես նկարում՝ գնանք խոտինձի:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Նկարում եմ:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Երգեցնե՞ն:**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Ոչ, զգվում եմ, ոչ: (Դուրս է գալիս, կանգ առնում երեխայի մոտ): Ի՞նչ ես անում, տղա:**

**ԱԲԵԼ. Ինչքան մաքրում եմ՝ ժանգ է, ճարտարապետ, ինչքան մաքրում եմ՝ ժանգ է:**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Արդեն ձանձրացա՞ր:**

**ԱԲԵԼ. Չե, ուզում եմ տակին շուտ հասնեմ, տակը տեսնեմ ինչ կա, ճարտարապետ:**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Այո:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. (ճարտարապետի կիսատ աշխատանքը նայելուց հետո)**

Տեր աստված, ինձ ուժ տուր այս մարդուն օգնեմ: Թեթևացնել չես կարող, գեղեցկացնել, գեղեցկացնել կարողացիր այս մարդու բեռը: (Ճարտարապետն սկսում է հազար, բոլորը լարվում են, հազը շարունակվում է): Մեռցրու միանգանից և ապրեցրու ապրելու պես: Մի՛ հաշմիր ու մի՛ խանգարիր մարդկանց:

**ՍԻՄՈՆ. Լավ պրծար, ճարտարապետ:**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Պրծա՞:**

**ԱԲԵԼ. Յայր սրբի վարունգնոցը ծաղկել է, ճարտարապետ, այ էսքան-էսքան վարունգներ են:**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Ասում ես՝ գնանք գողանա՞նք:**

**ԱԲԵԼ. Յաշված ու հաշիվը պահած կլինի, ճարտարապետ:**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Ո՞նց ենք, Սիմոն: (Խաչքարը երկար նայելուց հետո)**

**Ասում ես ոնց ե՞ս, Սիմոն:**

**ՍԻՄՈՆ. (Սպասում է նրա գնահատանքին):**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Լողալ գիտե՞ս, Սիմոն:**

**ՍԻՄՈՆ. Լողա՞լ: Զրո՞ւմ:**

**ԱՐՏԱՐԱԿՊԵՏ. Զրում:** Էստեղ, մեր ջրում: Պահզ, պարզ ջրում, հատակը երևում է: (Սիանգամից)

Տեսավ՝ ուսում են ամենքն ամենքին,  
Անեն հայրենիք՝ իրեն զավակին,  
Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,  
Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած:

**ՎԱՆԱՐԱՅՐ. Այո:** (Դադար):

Տեսավ՝ աշխարքը գեղեցիկ, անվերջ:  
Եվ հայրենիքներն անձուկ նրա մեջ,  
Եվ աստվածները նրանց զանազան,  
Եվ սուրբերը խիստ, խտրող ու դաժան:  
Տեսավ՝ ուսում են ամենքն ամենքին,  
Անեն հայրենիք՝ իրեն զավակին,  
Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,  
Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած:  
Ու ոչ մի երկիր չկա հանգչելու -  
Խոր, արարչական հանգիստն անխռով,  
Ու ոչ մի անկյուն չկա շնչելու  
Շունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...

**ԱԲԵԼ. Ո՞ւ...** (Յրճվանքից ծղրտում է):

**ՇՈՂԵՐ. Ինչ է, խելագար:**

**ԱԲԵԼ.** Յովիաննես Թումանյան: Յովիաննես Թումանյան, բայց չեն հասկանում, հայր սուրբ, թե հայրենիքը մարդ ինչպես կուտի: Այսինքն՝ որ գրածը կարդում եմ՝ հասկանում են, բայց չեն հասկանում, թե սկզբից ոնց են հասկացել, որ հայրենիքը մարդ է ուսում:

**ՎԱՆԱՐԱՅՐ. Ե՞ն, այ որդի, թող հայրենիք ունենանք, մեր հայրենիքը թող մեզ ուսի:**

**ԱՐՏԱՐԱԿՊԵՏ. Մանավանդ որ արդեն ցնդած ես ու էլ բանի պետք**

չես:

ՎԱՍԱՐԱՅՐ. Դե ուրեմն թող քեզ ուտի:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Ինձ ուտող շատ բան կա:

ՍԻՄՈՆ. Լող տալու մասին ինչո՞ւ հարցրիր, ճարտարապետ:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Լողալո՞ւ թե սուզվելու: Զգիտեմ, Սիմոն: Զուրը մատանի ընկավ, հատակին պարզ երևում էր, ջուրն էլ խոր չէր թվում, ամբողջ օրը՝ մի քսան անգամ, սուզվեցի ու չկարողացա հասնել: Իսկ մատանին պարզ երևում էր ու ջուրն էլ խորը չէր:

ՎԱՍԱՐԱՅՐ. Երազ ես տեսել:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Դին բան է, մի տասը-քսան տարի առաջ է եղել:

ՍԻՄՈՆ. Չէ, լողալ զգիտեմ, ճարտարապետ:

ՎԱՍԱՐԱՅՐ. Վանա ծովո՞ւմ է պատահել, ճարտարապետ:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Եստեղ, մեր ջրում: Ասաց՝ մի՛, կխեղդվես, բայց ես իջա: Զխեղդվեցի, քիչ էր մնում հասնեի, բայց չհասա, իսկ ինքը՝ տիկին պրոֆեսորը, դրանից հետո նստել էր ու ժպտում էր: Ոսկին հատակին էր, պարզ երևում էր, մոտի՛կ, բայց ոչ մի անգամ չկարողացա մի կարգին մոտենալ: Այդպես, ամբողջ օրը նստել ու ժպտում էր, ոսկին հատակին էր, ես իջնում էի ու չէի հասնում: Ես գիշեր երազում այդ նույն սարսափը եկավ կրկնվեց: (Երեխային) Բռունցքներդ մի սեղմիր, տղա, դու կհասնեիր: Կհասնեիր:

ԱԲԵԼ. Դե ինձ կանչեիք, ճարտարապետ:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Դու դեռ չկայիր, տղա, քեզանից շատ առաջ էր:

ԱԲԵԼ. Բայց դուք ինչո՞ւ չհասաք, ճարտարապետ:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Իմը ցեղական բթություն է: Մեր ցեղը բուք ցեղ է. լինող բանն էլ մեր ցեղի դեմ կանգնում ասում է չեմ ուզում, չեմ լինում: Իմ հերը մեր քահանային ձեռնափայտով խփել էր այն պատճառով, որ քահանան հակառակ էր կացել իմ հոր

նշանավոր մի մտքին. իսկ միտքն էլ են էր եղել՝ թե Վասիլ հայը Բյուզանդիայում կայսր էր դարձել Բյուզանդիան Հայաստանին միացնելու թաքուն մտադրությամբ: Ին եղբայրը դեռ կարծում է ես գանձ եմ փնտրում և ապսպել է, թե իին իշխանների գանձերը դու եղանակ վայելիր, իսկ քո եղբայրը որդուն թուրքի զինվորությունից ազատելու ոսկի չունի: Ես ինքս ապացուցել եմ, որ Զվարթնոցը եռահարկ է, բայց ես ինքս չեմ հավատում, որովհետև չեմ տեսել: Մեր ցեղը մինչև ճակատով չի խփում՝ չի հավատում, բութ է իմ ցեղը:

ՎԱՆԱՐԱՅՐ. Մարդիկ են գալիս: Թիֆլիսեցի են, պսակադրվելու են գալիս: Նավակն էս ափին է: Գալիս են պսակադրվեն ու Բագրատունիների մեջ կամուրջը վերակառուցել խոստանան: Նավակը մեր ափին է: Աբել... Սիմոն, նավակը:

ԱԲԵԼ. Նավակն էն ափին է:

ՎԱՆԱՐԱՅՐ. Մեկը կին է, նյուսները տղամարդ: Սիմոն, վեր կաց:

ԱԲԵԼ. Նավակն էն ափին է, հայր սուրբ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Նավակը մեր ափին է: Գլխիս Տրդատ ճարտարապետ չես դարձել, Սիմոն, վեր կաց: Մի կին է, իինգ տղամարդ, մեկի ձեռքին լուսանկարելու մեքենա է: Աղբյուրի նոր ջուր է պետք, հարս: Ասել չտաս, հենց որ նստեն՝ սուրբ, չայ: Քաղաքավարի, քաղաքավարի: Կինը բարձրակրունկ կոշիկ է հագել, դժվար է իջնում: Սիմոն, վեր կաց: Նոր հասնող աղջիկ է, բարձրակրունկ առաջին անգամ է հագնում: Պահ-պահ-պահ, Ռաստովա Նատաշան հասարակություն է մտնում: ճարտարապետ, շալվարդ փոխիր, ծունկդ պատռած է:

(ճարտարապետը նստում է Սիմոնի տեղը խաչքարի դեմ):

ՍԻՄՈՆ. Ղժգոհ ես, ճարտարապետ:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Ղժգոհ չեմ, Սիմոն, գոհ եմ:

**ՍԻՄՈՆ. Բայց դժգոհ ես:**

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Փոխանակ կով պահենք, արադ քաշենք, մենք մեզա-  
նից մի բան հնարենք - ես ու դու դարձել ենք ուրիշի ճորտը,  
Սիմոն, չդժգոհե՞մ:**

**ՍԻՄՈՆ. Ե... դու ի՞ո կով չեիր պահելու:**

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Երանի թե, Սիմոն, երանի թե: (Սիմոնը գնում է): Յա-  
յոց Բագրատումիների վազրը բարձրացրել է թաթը, Յայոց Բագ-  
րատումիների վազրը թաթի տակ սեղմած պահում է երկրա-  
գունդը՝ Ղարաքիլիսեից Ուչքիլիսե:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Ոչինչ: Ղարաքիլիսեից Ուչքիլիսե - էն ժամանակվա  
երկիրն էր իրոք գունդ: Ոտքով, կամ ձիով, մարդիկ գնում էին,  
հոգնում էին, քնում...**

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Մոնղոլը, թուրքը, իսպանացին, անգլիացին և  
մյուսները ուտքո՞վ չեին գնում:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Նվագե՞մ երգը:**

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Զգվում են:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Յյուրերի համար են ասում:**

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Չգիտեմ, իյուրը ես չեմ: (Շարունակում է Սիմոնի գոր-  
ծը, վաճահայրը գրամոֆոնը լարելով նվագում է նույն երգը և,  
անցնելով վաճք, կարդում կամ կարդալ է ձևացնում): Սիմեոն  
վարդապետ, ո՞վ ես դու... Ի՞նչ ես մտածել աշխատելիս... քեզա-  
նից դո՞ւ ես պահանջել այսպիսի խնամք... քեզ քանի՞ ոսկի են  
տվել, թե՞ տվել են օրական մի խաշած ձու... քեզ ո՞վ է ասել, որ  
քարի մեջ կա այս հրաշքը: Թե՞ պատվիրատում, կատարողը,  
հավանողը եղել ես միայն դու: Դու ինքդ քեզանից կարո՞ղ էիր  
այսպիսի խնամք հանել: Ցեղեր են եկել, ցեղեր են անցել, աղ-  
ջիկները հարսներ են դարձել, հարսները պառավել են - դու  
գլուխող կախ՝ չը-խկ, չը-խկ, չը-խկ... Տնաշեն:**

**ՎԱՆԱՐԱՅՐ.** (Կարդում է): Քո տեր աստվածո՞ք քո առջևից երբ վերացնի այն ազգերը, որոնց երկրները դու պիտի ժառանգելու գնաս, և երբ նրանց այդ երկրները դու ժառանգես և բնակվես այդ երկրներում, զգույշ կաց, չլինի որ... չլինի որ նրանց բնաջնջվելուց հետո նրանց հետևելով դու ինքդ հայտնվես որոգայթի մեջ, և չլինի որ հարցուիփորձ լինես նրանց աստվածների մասին, թե ինչ աստվածների էին պաշտում այն անցած ազգերը և ինչպես էին պաշտում՝ ես էլ պաշտեմ այն աստվածներին և այնպես: Զու տեր աստծուդ դու չպաշտես նրանց պես, քանզի նրանք իրենց աստվածներին պատվելու համար սպանում էին մինչև անգամ իրենց որդիներին և իրենց դուստրերին և իրենք իրենց էին սպանում: (Կանչում է) Աբե՛լ... ճարտարապետ...

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ասա, հայր սուրբ:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Չեկա՞ն:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Չեն երևում:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Են անտեր ակնոցս էլ կորցրել են:

Քո տեր աստվածո՞ք քո ճանապարհից երբ կիեռացնի այն ազգերը, որոնց երկրները քեզ ժառանգելու են տրված, և երբ վերացնի և դու ժառանգես նրանց երկրները - չպաշտեն նրանց աստվածներին և չպաշտեն նրանց պես: Եվ հարցուիփորձ չլինես և չինանաս նրանց աստվածներին, և պաշտիր քո աստծուն և պաշտիր քեզ նման:

Փառք իմ տեր աստծուն՝ ինձ նման մի անբովանդակ ծանրություն երկրիս վրա հանդուրժելու համար: Փառք ծանրաբեռ երկրին՝ իր վրայից ինձ չքոթափելու համար: Ապրե՞ս: ճարտարապետ, եղ երեխային ասա գրամոֆոնը թող լարի: Լուսանկարչական մեքենան ճարտարապետին նվիրելու մասին մի հատուկ օրինություն մտածենք, սուրբ գրքի միջից

**թիֆլիսեցիների համար կարդանք:**

(Ասեղը ձեռքին՝ ճարտարապետի շուրջը երկար պտտվելուց հետո Շողերն ինքը չի համարձակվում խոսել ճարտարապետի հետ, մնջախաղով միջնորդել է տալիս Երեխային: Երեխան, սակայն, չի հասկանում, թե ինչու էր ինքը միջնորդելու):

**ՇՈՐԵՐ.** (Յրում է Երեխայի գլուխը) Անհասկացող հերքդ ես:

**ՆԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ի՞նչ է, Շողեր:

**ՇՈՐԵՐ.** Ծունկդ կարկատեն:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Գալիս ե՞ն: (Կարդում է): Քո տեր աստվածդ քո ճանապարհից երբ կվերացնի այն ազգերն ու ցեղերը, որոնց Երկրները քեզ ժառանգելու են տրված, և երբ վերացնի և դու ժառանգես նրանց Երկրները և նրանցում բնակվելու նստես - չպաշտե՞ս, չպաշտես նրանց աստվածներին և չպաշտես նրանց պես: Իրենց աստվածներին նրանք պաշտում էին սպանելով իրենց զավակներին և սպանելով իրենք իրենց:

**ՆԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Չեն գալիս, քեզ մի պատոիր:

**ԱԲԵԼ.** ճարտարապետ, թե Բյուզանդիան եղան զարգացած էր ու մեր Հայաստանն էլ Բյուզանդիայի հետ ավելի զարգացած էր, թուրքերն էլ զարգացած չէին, Մանազկերտի ճակատամարտում թուրքերն ինչո՞ւ հաղթեցին:

**ՆԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Մանազկերտի ճակատամարտում հայերը պարտվեցին, որովհետև իրենց տունը իրենց համար չէին պաշտպանում, իրենց տունը թուրքերից պաշտպանում էին բյուզանդացիների համար:

**ԱԲԵԼ.** Այո: Իսկ եթե իմանային, որ թուրքերը բյուզանդացիներից վատ են, կպաշտպանեի՞ն:

**ՆԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Զգիտեմ: Դու կպաշտպանեի՞՞:

**ԱԲԵԼ.** Զգիտեմ: Իսկ բյուզանդացինե՞րն ինչու պարտվեցին, ճարտա-

րապետ:

ԵԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Բյուզանդացիները պարտվեցին, որովհետև իրենց քրտինքը չէին պաշտպանում, այլ իրենց ավարը, իրենց կողոպուտը: Գողերը վախկոտ են լինում:

ՎԱՆԱՐԱՅՐ. (Վանքից դուրս է Եկել) Բյուզանդիան պարտվեց, որովհետև ինձ ննան պառավել էր:

ԱԲԵԼ. Ինչպես էր պառավել, հայր սուրբ, Բյուզանդիան հո մարդ չէր:

ՎԱՆԱՐԱՅՐ. Մարդ էր: Ամեն ինչն էլ մարդ-արարած է, ծնվում-գորանում-պառավում-մեռնում է:

ԵԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Եվ միայն Դավիթորդի ժողովողի ճշմարտությունները հավիտյան կան արեգակի տակ և հավիտյան գորեղ են:

ՎԱՆԱՐԱՅՐ. Սուրբ գիրքն էլ, սուրբ գիրքն էլ - ծնվեց, զորացավ, պառավեց, մեռավ: Սուրբ գիրքը հիմա ճշմարիտ ճշմարտությունների մի մեջ գերեզմանոց է:

ԵԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Եվ սուրբ գրքի ճշմարիտ ճշմարտությունների գերեզմանոցում կապած՝ մի պառավ ձի է արածում:

ՎԱՆԱՐԱՅՐ. Երկու պառավ ձի: (Աբելին) Վարժապետներիդ կասես՝ Անի քաղաքամայր գերեզմանոցում կապած, հին ճշմարտություններ էին արածում Երկու պառավ ձի:

ԵԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Մի: Մի պառավ ձի:

ՎԱՆԱՐԱՅՐ. Ե՛, այ որդի:

ԵԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Քաղաքամայր Անին չգիտեմ լինելու է թե չի լինելու, բայց քաղաքամայր Անիի ճարտարապետությունը դարձյալ լինելու և լինելու է այնպես, ինչպես Եղել է:

ՎԱՆԱՐԱՅՐ. Եվ քաղաքամայր Անիում լինելու են սուրբ գրքի ճշմարտությունները և լինելու են այնպես, ինչպես Եղել են:

ԵԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Տա աստված:

ՎԱՆԱՐԱՅՐ. Եթե քաղաքամայր Անին դարձյալ լինելու է արդեն մեկ

անգամ եղածի պես՝ սուրբ գործի ճշմարտությունները ուրեմն դարձյալ լինելու են արդեն մեկ անգամ եղածի պես:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Անին քար է, քո սուրբ գիրքը՝ խոսք, բառ, զրույց, իսկ Անին քար է, լինելու է դարձյալ քարից, որովհետև մարդիկ ապրելու են քարե տներում, որովհետև քարը կավից լավ է:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Քարը կավից լավ է, մարդիկ ապրելու են քարե տներում, իսկ մարդկանց գլխներում ապրելու են սուրբ գործի ճշմարտությունները, որովհետև միտքն անմտությունից լավ է:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Դայ մարդիկ ապրելու են հայերի քաղաքամայր Աճիում, հայ մարդկանց քաղաքամայր Անին լինելու է հայերի Արագած լեռան քարհանքերի կարմիր ու սև քարից, և գանգուր մտքերի քո այդ հավաքածուն հեռու տար իմ քաղաքից, դա հայի մտածողություն չի:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Աշխարհը մեկ է և աշխարհի միտքը մեկ է:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ապրել, ինչ էլ լինի՝ ապրել:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Ապրել, և սուրբ գիրքն ասում է մի քիչ մարդավարի եղեք:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ով լսողություն ունի՝ ականջ կախի սուրբ գործի ճշմարտությունների տակ ու քնի երանության մեջ, ով խուլ է արթուն մնա ու կողոպտի քնածներին:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Այդ այդպես է և ավելացրած, որ կողոպտյալը չպետք է լացուկո՞ծ դնի, այլ պետք է երանությամբ ժպտա, որովհետև լացուկո՞ծ կողոպուտին դեռ լացուկո՞ծ է ավելացնում:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ասաց Միքայել ցնդած ավետարանիչը, և մյուս ավետարանիչները նախանձեցին:

**ՎԱՆԱՐԱՅՐԸ.** Կանիծեմ:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Կգանգատվեմ Եջմիածին՝ թե Միքայել պորտաբույժ վարդապետը հալածում է ազգօգուտ աշխատանքով պարապող

**ճարտարապետիս:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Այո, սուրբ գիրքը, իր մեջ, Նարեկա վանքի ճգնավորը,**  
իր մեջ, բոլոր իմաստունները, իրենց մեջ, վճռել են աշխարհի  
խնդիրը, հազար անգամ վճռել են աշխարհի խնդիրը, բայց աշ-  
խարհն են է ինչ էր: Եվ ահա թե ինչու է անմտությունը մտքից  
լավ: Շուշան ծաղկի պես... Եկող գնացող ջրի պես... միամիտ,  
թեթև:

(Շողերը կարկատելը վերջացնում, խոնարիվում է ատամով կտրելու թելը և  
հապաղում է):

**ԱԲԵԼ. Հայր սուրբ... իսկ եթե ամբողջ, ամբողջ աշխարհը քրիստոնյա  
լիներ:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Եթե ամբողջ աշխարհի բոլոր երկրների բոլոր մարդիկ  
քրիստոնյա լինեին... եթե լինեին՝ շատ լավ կլիներ:**

**ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Երեխային մի խարիր:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Գիշերս երազում դու քացա՞խ ես խմել, ինչ ասում եմ  
հակառակ ես կենում: Երեխային, այո, խարեցի: Դե հիմա դու  
պատասխանիր՝ Երեխայի հետ ես էլ եմ լսում:**

**ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Չեր կարող պատահել, որ ամբողջ աշխարհը  
քրիստոնյա դառնար:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Են է պատահում էր:**

**ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Բայց չպատահեց: Չեր կարող պատահել և այդ  
պատճառով էլ չպատահեց, և չի պատահելու: Ընդունակության  
հարց է. մարդկանց մեծագույն մասը անընդունակ է զգալու  
քրիստոնեությունը: Անձրև ամբողջ երկրի վրա է մաղում -  
սևահողը ներծծում է անձրև, կավահողը՝ ոչ:**

**ԱԲԵԼ. Եթե անընդունակ մարդկանց սպանեն և աշխարհում մնան մի-  
այն ընդունակ մարդիկ, ճարտարապետ:**

**ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Ե, ընդունակները սպանելու մեջ անընդունակ են:**

Եր ժամգը դեն գցիր ու տղա ես՝ տղայի մի գործ գտիր: Փոստատարը չերևաց: Գնացքը վաղուց է անցել, իսկ փոստատարը չերևաց: Նշանակում է՝ բերելիք չունի:

(Խաչքարի դեմից ելնում է կացարան գնալու):

ՇՈՂԵՐ. Ասեղը վրադ է, ճարտարապետ:

(Չեռքին մի կապոց՝ գալիս է Սիմոնը):

ՍԻՄՈՆ. Գնացին միջնաբերդից քաղաքը նայելու: Ասաց՝ մասնագետ նարդիկ են, պատրաստվիր: Ոուսերեն էին խոսում: Գնացին միջնաբերդը նայելու: (Նստում է խաչքարի դեմ): Են տարվա թիֆլիսեցին հետներն էր: Անտոնը: Չուդակն ի՞նչն է:

ԱԲԵԼ. Չուդակը հրեշն է:

ՍԻՄՈՆ. Յիմար-հիմար քիչ խոսիր:

ԱԲԵԼ. Չուդակը բա հրեշը չի՝, հայր սուրբ:

ՍԻՄՈՆ. ճարտարապետի մասին էին խոսում, ուրախ-ուրախ էին ասում:

ՎԱՆԱՐԱՅՐ. Յետների կինը փափուկ, էսպես, բարի, գեղեցիկ, էսպես, երեսուն տարեկան հա՞րս էր: (Սիմոնը չի հաստատում): Ամաչել ես նայել, ուրեմն լավ աղջիկ է եղել: Գործներս հաջող է գնում, ճարտարապետ:

ՍԻՄՈՆ. (Կապոցի մասին) Զգիտեմ էս ինչ է, ասաց տար:

ՎԱՆԱՐԱՅՐ. Չուդակն հրաշալին է:

ԱԲԵԼ. Յրաշալին չուդեսնին է: Զվարթնոցի մասին երկաթուղու ինժեները բա չուդեսնի՝ ասաց թե չուդակ: Չուդեսնի ասաց: Չուդակը հրեշն է: Չուդակը հայրիկին ասաց: (Յորը) Քեզ չուդակ ասա՞ց:

ՍԻՄՈՆ. Է՝, իմ ինչն է չուդակ, այ որդի:

(Ճարտարապետը գնում է կացարան, նրա ետևից՝ վանահայրը):

ՇՈՂԵՐ. (Սիմոնին) Գլխարկդ էղպես ծուռ էլ գնացիր ասացիր բարով

Եթ եկել, իա՞: Ելի սկսելու ես՝ չըխկ, չըխկ, չըխկ, չըխկ: Մի բան,  
մի լավ բան, մի սիրուն բան:

ՍԻՄՈՆ. Չեմ կարող, չունեմ:

ՇՈՂԵՐ. Ո՞վ էին:

ՍԻՄՈՆ. Մարդ էին, Շողեր, ես ինչ գիտեմ ով էին:

ՇՈՂԵՐ. Նրանք մարդ էին, դու էլ ես մարդ:

ՍԻՄՈՆ. Նրանք էլ, ես էլ, բոլորն էլ, իսկ բոլորից ավելի՝ ճարտարա-  
պետն ու դու:

ՇՈՂԵՐ. Խելազար:

ՍԻՄՈՆ. Այո:

(Կացարանում)

ՎԱՍԱՐԱՅՅՐ. Ովքե՞՞ր կլինեն:

ԲԱՐՏԱՐԱՊԵՏ. (Բացել ու նայում է Զվարթնոցի մակետը): Զգիտեմ:

ՎԱՍԱՐԱՅՅՐ. «Մասնագետ են»: Անիի՞ մասնագետ են:

ԲԱՐՏԱՐԱՊԵՏ. Մի խոսքով՝ մասնագետ են: Երկարուղուց եթե  
թեքվում ու մտնում են ավերակներ՝ ուրեմն կարգին մարդիկ են:

ՎԱՍԱՐԱՅՅՐ. Այո, իհարկե: (Կացարանից դուրս է գալիս):

ԱԲԵԼ. (Ինքն իր համար) Անընդունակները ընդունակներին թող հաղ-  
թեն, ջարդեն, ջնջեն ու մնան իրենք մենակ: Իրենք մենակ ի՞նչ  
են անելու - ոչինչ էլ չեն անելու: Ոչինչ էլ չեն կարող անել ու  
իրենք էլ կջարդվեն:

ՎԱՍԱՐԱՅՅՐ. Յիմար չեն էղան, է, տղա, էղան իիմար չեն, չեն սպա-  
նում: Չեռքերը շղթայով կապում են, էսպես, ոտքերը շղթայով  
կապում են, էսպես, շղթայի ծայրով վիզը կապում են ոտքերից՝  
որպեսզի միայն ոտքերի տակի գետինը տեսնի, ու քշում են  
կարմիր անապատ, իրենց մզկիթի աշտարակը հասցնել են  
տալիս երկնքի տակ, երկնքի տակ իրենց մզկիթի աշտարակին

գրել են տալիս թէ՝ իր մտքի ու ձեռքի հունարով մզկիթը հնարեց Թամուր-լանգը, իսկ ընդունակին ասում են՝ թոիր, ես քու... մզկիթի գլխից, թերև՝, թերև։ (Գնում է վանք)։

(Կացարանում)

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Բագրատունիների վագրը բարձրացրել է թաթը։ Բագրատունյաց վագրը... Կարծես ամեն ինչ մի անգամ եղել է։ Մեջները եթե մանավանդ օտարազգի կա՝ Բագրատունյաց վագրը ծիծաղելի կրվա։ Վագրը բարձրացրել է թաթը։ Մի համեստ բան, մի խոնարի... արյունով հայ։ (Զվարթնոցի մասին)։ Դո՞ւ ես խոնարիը։ Չկա։ Ինչ որ է էս է։ Եթե մենք ինքներս խոնարի ու խեղճ ենք՝ չի նշանակում, թե մեզ պիտի դարձնենք միակ հայ և ուրիշներին չափենք մեզանով։ Եթե ես չեմ հավատում՝ ուրիշներն ինչո՞ւ են հավատալու քեզ։ Դու ինչ դարձար՝ որ մարդիկ քեզ չեն հավատում։ Դու այդ ինչ եղար, որ մարդիկ... Հոգնել եմ... Քննել, քննել... Ամեն, քննել...

Բոլոր հարցերը վճռել քո մեջ ու քննել։ Հոգնել եմ։ Ամեն ինչ ասված է, ամեն ինչ կրկնություն է։ Հոգնել եմ, զգվել եմ, զգվել եմ, զգվել եմ թղթից էլ, մատիտից էլ, ինձնից էլ, զգվել եմ... Զո Զվարթնոցն էլ, դու էլ, քո Անին էլ... զգվել եմ...։

(Վանքում)

ՎԱԼԱՐԱՅՐ. «Դու քո ծոնը տիսրադեմ մի պահիր. Կեղծավորները հրապարակ են ելնում ավիրված դեմքերով՝ ինչ է թե մարդիկ տեսնեն, որ նրանք ծոն են պահում։ Շշմարիտ ճշմարիտ են ասում. Կեղծավորները ծոնի առևտուր են անում. Նրանք ծոն են ծախում և կարեկցանք են առնում։ Դու քո ծոնին լվա քո երեսը և

օժիր քո մագերը և մարդամեջ ելիր կերած-խնածի նման: Դու քո տրտնությունը, մանանեխի հատիկի չափ քո տրտնությունը մի հանիր հրապարակ և մանանեխի հատիկի չափ քո տրտնությունից հրապարակում վշտի բեռներ մի կապիր: Նրապարակներում դու վշտի առևտուր մի արա - վիշտ մի ծախիր և կարեկցանք մի առ»... անհարմար է:

Սքանչելի է, բայց պիտի նորից գրվի, ազդեցիկ: Թե չէ՝ մանանե՞խն ինչ է, ծո՞նն ինչ է, կեղծավո՞րն ինչ է, ազդեցի՞կն ինչ է: Մեռա՞ծ, մեռա՞ծ, մեռա՞ծ:

(Հավալա խարալով մոտենում է հասուն տղաների խունբը):

ՏՂԱԾԵՐ. (Ցատկի հետ) Հավալա-հավալա:

Հավալա:

Հավալա:

Հավալա:

Հավալա:

Բլբուլը ծառին երգում է:

Բլբուլը ծառին երգում է:

Բլբուլը ծառին երգում է...

Քեռին տակին լսում է:

Քեռին տակին լսում է...

Քեռի-քեռի, այ քեռի:

Քեռի-քեռի, այ քեռի...

ՎԱՆԱՐԱՅՐ. (Վանքից) Սինոն:

ՍԻՄՈՆ. Լսում եմ, ասա, հայր սուրբ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Չեն գալի՞ս:

ՍԻՄՈՆ. Ժողովուրդ է գալիս, բայց իրենք չեն երևում:

ՎԱՆԱՐԱՅՐ. Սիմոն, Շողերն եղտեղ է՞»:

**ՄԻՄՈՆ.** Էստեղ է, հայր սուրբ:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Ակնոցս, հարցրու, չի՝ տեսել:

**ՇՈՂԵՐ.** Ասա՝ բերանացի գիտես, ակնո՞ցն ինչիդ է պետք: (Բարձրաձայն) Գրքիդ արանքում կլինի, էլի, հայր սուրբ, գրքիդ արանքում:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Գրքի արանքում չի, հարս:

(Շողերը գնում է կացարանում փնտրելու ակնոցը):

**ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ.** Յավալա-հավալա:

Սիմոնը վարպետ է դառել:

Սիմոնը վարպետ է դառել:

Սիմոնը խաչքար է շինում:

Սիմոնը խաչքար է շինում:

Բագրատունի Սիմոնը:

Բագրատունի Սիմոնը:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** (Վանքում) «Իմ սիրած մարդիկ, իմ բարեկամները հեռու են կենում ինձնից և ինձ փնտրող չկա և ինձ փնտրողները իմ չարակամներն են և իմ թշնամիները ողջ են և ինձ ատողները՝ շատացած:

Սակայն ես խուլ եմ խուլի պես և համրի պես համր եմ և իմ բերանում պատասխանի խոսք չկա, զի դու ես իմ տերը և իմ խոսքի տերը և պատասխանի իմ խոսքը քո բերանում է, տեր»:

(Տղաների խումբը նստում է Սիմոնի շուրջը):

**ԱԲԵԼ.** Ակնոցը դեղին ծաղիկների մոտ ես տեսել եմ: Ակնոցը վարունգի մարգերում տեսել եմ: (Գնում է):

**ՆԱՐՏԱՐԱՊԵՏ.** (Կացարանում) Ի՞նչ ամենք, Շողեր:

**ՇՈՂԵՐ.** Յայր սուրբն ակնոցը կորցրել է:

**ճԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Արի ցույց տանք թե զբաղված ենք, աշխատում ենք  
(Մոտենում, շտկում է Շողերի գլուխը): Արի ես քեզ նկարեմ,  
Շողեր:

**ՇՈՂԵՐԸ.** Ամոք է, ճարտարապետ:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ես քեզ նկարելու եմ, Շողեր: Մարմինը կա, դեմքը  
չկա, սրբերը քեզնից սուրբ չեն եղել, արի Մարիամի դեմքը նկա-  
րենք քո դեմքը, Շողեր, նկարը լրանա, գուցե թե խիղճները տա,  
առնեն նկարը, և ուրեմն կարող ենք կով առնել: Սիմոնին  
պարտք ենք երկու հազար ութ հարյուր ութսունութ հատ  
ծխախոտ, վանահորը պարտք ենք, քեզ պարտք ենք, Շողեր:  
Ինձ նայիր, ուղիղ ինձ նայիր: Աչքերիս նայիր, Շողեր,  
աստվածածիններն ուղիղ աչքերի են նայում: Դե լավ, եթե չես  
ուզում նայել՝ աչքերոդ փակիր, միայն թե գլուխոդ ուղիղ դեպի ինձ  
պահիր:

**ՇՈՂԵՐԸ.** Յայր սուրբն ակնոցը կորցրել է:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ոչինչ, դու ինձ նայիր: Դեմքը, Շողեր, թշնամին ու  
ժամանակը քերել են, ապրես, նայիր ինձ: Ինչու են քերե՞լ,  
Շողեր: Շնչավորի ստեղծումը աստօն գործն է, մենք իրավունք  
չունենք խառնվելու աստօն գործերին, այ թե ինչու են քերել:  
Եթե քար է եղել՝ տաշել են, եթե ներկ՝ քերել են, չի քերվել՝  
սպառել են: Ինձ նայիր, Շողեր, ինձ նայիր: Շողեր, եթե կարող ես՝  
նայիր, բայց մի տես: Աղոթք գիտե՞ս, Շողեր:

**ՇՈՂԵՐԸ.** Յայր սուրբն ակնոցը...

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Էստեղ նայիր, Շողեր... Զգիտե՞ս աղոթք... Աղոթիր,  
Շողեր, աղոթելով կարող ես նայել ու չտեսնել... «Յայր մերը»  
գիտե՞ս: Զգիտե՞ս «Յայր մերը»: «Յայր մեր, որ հերկինս ես,  
սուրբ եղիցի անուն քո...», կրկնիր: Յերկինս ես՝ այսինքն  
երկնքում ես:

ՇՈՂԵՐ. Դայր սուրբն ակնոցը կորցրել է:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Դու արդեն ինձ բարկացնում ես, Շողեր, ինձ նայիր:

ՇՈՂԵՐ. Սուրբ սարքե՞ն:

(Գավթի դռանը)

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Սիմոն, ճի՞շտ է, որ քո էս խաչքարը Պետերբուրգ  
Են տանում:

ՍԻՄՈՆ. Ես ել եմ լսել, բայց թե էս խաչքարը աստված իմ ձեռքով  
ստեղծում է քո լույս դառած Մաթոս պապի համար:

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Ցարը Պետերբուրգից եթե պահանջել է՝ ինչ  
աստված, ինչ Մաթոս:

Պահանջել է:

ՄԵՆԱԿ ԽԱՉՔԱՐԸ չի պահանջել, Սիմոնին էլ է պահանջել:

Վախենում է ուրիշ թագավորի համար էլ սարքի:

Չի սարքի:

Սիմոնն է, սարքեց՝ սարքեց:

Սիմոն, կսարքե՞ս թե չես սարքի:

ՍԻՄՈՆ. Սարքեցի՝ սարքեցի:

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Սարքեց՝ սարքեց: Տանելու են աջ ձեռքը կտրեն՝  
որ ուրիշ թագավորի համար չսարքի:

Եթե կտրելու են՝ էստեղ կկտրեն, էլ ինչո՞ւ են Պետերբուրգ  
հասցնում:

Կտրելու համար չեն տանում:

Ի՞նչը կտրելու:

ՍԻՄՈՆ. Գյուղում ի՞նչ կա:

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Ամբողջ գյուղն էր էր խոսում:

ՍԻՄՈՆ. Է՝, տղերը:

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Բրինձ ու նավք էին բերել, բայց թե ոչ բրնձի կա-  
ռիք ես զգում, ոչ նավթի:

Մտքի լուսով ու հոգվո հացով...

Վարդանի Դավիթը կորել է, վարպետ Սիմոն:

ՍԻՄՈՆ. Վարպետը պապի է, բայց Դավիթը ո՞նց է կորել:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Ոնց են կորչում, կորել է:

Չի կորել, ասում են՝ սահմանը խումբ է անցկացրել:

Եղ իրա պապն է ասում: Ասում է՝ արծիվս սահմանը խումբ է անցկացրել: Արծիվս Յայաստանն ազատելու է:

Չի կորել, խումբ է անցկացրել, Յայաստանն ազատելու է:

ՄԵՆՔ Յայաստանը չենք, Յայաստանն էնտեղ է:

Յայաստանը մենք ենք, նրանք տաճկահայերն են:

ՄԵՆՔ ռուսահայերն ենք, հայերն իրենք ենք:

Իրենք տաճկահայերն են, մենք՝ հայերը:

ՄԵՆՔ եդ ինչ ենք արել, որ հայերը մենք ենք:

Որ ուրիշ բան չլինի՝ Դավիթը սահմանն անցել է նրանց ազատելու, իսկ իրենք անցնում ե՞ն մեզ ազատելու, չեն անցնում:

(Դանդաղ, շրջապատին անտարբեր՝ գալիս խաչքարի մոտ կանգնում է սահմանապահ գորգերի ՈՈՒՍ ՕՖԻՑԵՐԸ):

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Խարո՞շ կամեն, սալդատ:

ՕՖԻՑԵՐ. (Ուշացումով): Կամեն կակ կամեն: (Յեռանում է):

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Վարդապետիդ աչքը լույս, վարպետ Սիմոն, սելը լծած գալիս են ծուռ Ասոն ու համեստ Մագթաղը:

ՍԻՄՈՆ. Զո հերմունե՞րը:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Բա էլ քանի ծուռ Ասո կա, մանավանդ՝ համեստ Մագթաղ: Էնպես որ, վարպետ Սիմոն, էսօր էստեղ թատրոն է լինելու:

Ֆիգարո՝, Փիգարո, Ֆիգարո, Փիգարո...

Բրավո...

Տուր մի քիչ տաշեմ, էլի, վարպետ Սիմոն:

(Թռուան հետ՝ գալիս է կույր աշուլը: Քիչ հետո թոռը խառնվում է տղաների խմբին):

ԱՇՈՒՂ. Ես ո՞ր վանքն է:

ԹՈՂ. Մայր մեծ տաճարը, պապի:

ԱՇՈՒՂ. Հըզը... Բարձր է՞:

ԹՈՂ. Բարձր է, պապի:

ԱՇՈՒՂ. Մեր Արագած սարի չափն է:

ԹՈՂ. Բարձր է, պապի:

ԱՇՈՒՂ. Շատ բարձր է: Հըզ, տերդ մեռնի: Կանաչ-կարմի՞ր է: Անդ-րանիկ...

ԹՈՂ. (Տղաների միջից): Ասա, պապի:

ԱՇՈՒՂ. Մի կարդա տես Տիգրա՞նը չի սարքել:

ԹՈՂ. Գագիկն է սարքել, պապի:

ԱՇՈՒՂ. Գագիկն ով է՝ որ Գագիկը սարքած լինի: Դու լավ կարդա, Տիգրանն է սարքել:

(Տկնորը շալակին՝ գալիս է գյուղացի օղեվաճառը, նատում վանքի պատի տակ):

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Եթե ասեմ տկիդ մեջ ինչ կա՝ կտա՞ս մի բաժակ խմեմ:

ՕՂԵՎԱՃԱՌ. Տկիս մեջ գինի է, բայց հորըդ ձեռքը քարի տակին չի:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Դե լավ, դու խմիր քո լվացքաջուրը:

ՕՂԵՎԱՃԱՌ. Աղվեսի դունչը չհասավ խաղողին, ասավ խակ է:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Սրամիտ վաղպատեցի է:

Ճիշտ, մի աբասի տաճ, խմիր մի բաժակ քո գինուց:

ՕՂԵՎԱՃԱՌ. Քո մի աբասով քեզ համար մի աբասու կաթ առ, կաթ ծծիր:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Բա եթե ծծկեր եմ՝ աչքդ ինչո՞ւ ես վրաս տնկել թե՝ փեսաս հա փեսաս: Չեմ ուզելու աղջկադ, թող մնա տանը:

(Արելը գալիս, Եկեղեցու մեջ վաճահորն է տալիս ակնոցը):

ՎԱՍԱՐԱՅՐ. Մասնագետները չե՞ն գալիս:

ԱԲԵԼ. Չտեսա, հայր սուրբ:

ՎԱՍԱՐԱՅՐ. Էսքան ժամանակում ահազին խոտ կլինեինք հնձած:

Խոտի ժամանակ է:

«Զգույշ կաց, որ քո ողորմությունը հանկարծ մարդկանց առջև չանես: Եթե ողորմություն ես անելու՝ նախօրոք շեփոր մի հնչեցրու, ինչպես որ կեղծավորներն են ողորմությունից առաջ հնչեցնում ողորմության շեփորը: Քո ձախ ձեռքդ թող չիմանա քո աջիդ արած ողորմությունը»:

Տեսնո՞ւմ ես ինչեր են գրած, սովորիր: Որ տեսնես մասնագետները գալիս են՝ զանգերը քաշիր, թող ազդեցիկ լինի:

ԱԲԵԼ. Կքաշեմ, հայր սուրբ:

ՎԱՍԱՐԱՅՐ. Բա՞ն ես ասում:

ԱԲԵԼ. Ասում եք՝ հայերն իրենց հայրենիքը պաշտպանելու էին բյուզանդացիների համար, այդ պատճառով էլ չպաշտպանեցին:

ՎԱՍԱՐԱՅՐ. Ասա:

ԱԲԵԼ. Բյուզանդացիներն էլ իրենց կողոպուտն էին պաշտպանելու, այդ պատճառով էլ ամաչեցին ու չպաշտպանեցին:

ՎԱՍԱՐԱՅՐ. Ամաչեցին ու չպաշտպանեցին, հետո՞:

ԱԲԵԼ. Զիավոր էին, սուրբ էին վերցրել՝ զինվորի պես թող կարգին կրվեին, ինչ նշանակություն ունի թե ինչ էին պաշտպանում:

ՎԱՍԱՐԱՅՐ. Դե, այ որդի, ինչ որ եղել է՝ մենք ենք ասում: Պարտվել ենք, ուզում ենք հասկանալ թե ինչու ենք պարտվել ու ասում ենք անհամաձայն էինք, ծերացել էինք և այլն: Յիմա եղածը էս է: Ինչ որ է՝ է: Զանգերը կքաշես, չմոռանաս:

ԱԲԵԼ. Ֆրանսացի Մյուլատը հայ էր, չէ՞:

ՎԱՍԱՐԱՅՐ. Ասում ենք հայ էր, բայց դե ես ինչ գիտեմ հայ էր թե

թուրք:

ԱԲԵԼ. Մի խոսքով ֆրանսացի չէր, բայց ինչո՞ւ էր ֆրանսացիների համար էղքան լավ կռվում:

ՎԱՆԱՐԱՅՐ. Բայց մենք չգիտենք՝ Մյուլրատը ֆրանսացիների համար լա՞վ էր կռվում թե արանքներում գլուխ էր պահում:

ԱԲԵԼ. Ասում ենք բյուզանդացիների Բազիլիկոսը հայ էր, չէ՞:

ՎԱՆԱՐԱՅՐ. Վասիլը, այո, հայ էր, Վասիլի մայրը Եղվարդի աղջիկ էր, հայրը՝ սեբաստացի տղա:

ԱԲԵԼ. Դայերն ուրիշ տեղ եթե էղքան ուժեղ թագավոր են դառնում,  
Դայաստանում ինչո՞ւ մի ուժեղ թագավոր չի եղել:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դիմա քեզ ի՞ն պատասխանն ասեմ թե հայր Ալիշանի:  
Ուժեղ թագավորն ուժեղ նստուկ է ունենում, ուժեղ նստուկը  
դնում է պինդ գահի, և գահը գետին չի խրվում: Այս հողն  
անիծված է, տղա, ծանր գահերը խրվուն ու անցնում են գետնի  
տակ, և ահա թագավորի նստուկ ունեցող հայերը գնուն նստում  
են պինդ գահերի: Վարունգի թփերը ծաղկե՞լ են:

ԱԲԵԼ. Ծաղկել են:

ՎԱՆԱՐԱՅՐ. Գետի մեջ մի լոք ձո՞ւկ ցատկեց: Ցատկեց, ծանր  
բարձրացավ, կախվեց ու սուզվեց:

ԱԲԵԼ. Ցատկեց, հայր սուրբ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Աշուղ Սուսերը Եկե՞լ է:

ԱԲԵԼ. Եկել է, հայր սուրբ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Այդպես: Դու քո գործն արա, հայոց պատմության հետ,  
հայոց հոտած պատմության հետ դու գործ չունես: Աշխարհը  
գեղեցիկ: Վարունգը ծաղկել է, մի մժղուկի համար լոք մի մեծ  
ձուկ ցատկեց, քաղաքն ավերակ է, ավերակներում մարդ չկա, և  
դա լավ է, որովհետև մարդիկ այնքան ել լավը չեն: Գնա:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. (Թուրք վերցրել, խաչքարին բան են ցույց տա-

լիս և իբր կարողում)

Ս ի մ ո ն...

Ս ի մ ո ն ը - խ ա չ ք ա ր - է - շ ի ն ո ւ մ...

Ո չ: - Ս ի մ ո ն ը - ճ ա ր տ ա ր ա պ ե տ - է:

Ս ի մ...

ՄԻՄՈՆ. Թուրը, խնդրում եմ, տեղը դիր:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Թնդանոթը:

Սիմեոն Բագրատունու թնդանոթը:

ՄԻՄՈՆ. Թուրը երեխային տուր:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Մրա ինչն է երեխա, իսկական տըզ խաղալու տղա է:

Սիմոնը բարկացավ:

Չի կարող:

Ինչ իմանաս, ինչքան չլինի Բագրատունի արյուն կա, չէ, մեջը:

Գլխարկն էլ թագավորի նման դրել է...

(Աբելին, Աբելն ուզում է թուրը խլել) Սպանում ես, տղա, բա կարելի՞ է քեզ թուր վստահել, աչքերիցդ երևում է, որ գլուխ կվտրես:

ՄԻՄՈՆ. Թուրը երեխային տուր:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Վերջին անգամ է ասում:

Թագավորական գանձերը գտել ու կատաղել են:

Անտեր մնա ապրուստը, ապրուստը կատաղեցնող է:

(Թուրը տալիս են երեխային) Ուրիշ ի՞նչ անենք, վարպետ Սի-մոն: (Նրանց մեջ հանկարծ բռնկվում է տըզ խաղը. կատաղի-որեն ապտակելուց հետո) Տըզզզ...

Դու էիր:

Ես չեի, աչքերդ լավ ծածկիր:

(Խփելուց հետո, խմբով) Տըզզզ...

ՍԻՄՈՆ. Մի քիչ հեռու խաղացեք:

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. ՄԵՆՔ ԵՐԵԽԱ՞ Ենք, որ խաղանք:

Տղզզ...

Բադալի աղջկան սրա համար ուզել են - տղզզ...

Դու էիր:

Իմաստուն ես, բայց ես չի: Աչքերդ լավ ծածկիր:

Սրա համար Բադալի աղջկան ուզել են - տղզզ - ասել է (Բադալի քթախոսությամբ) սպասիր Երեխան մի քիչ լցվի, թե կարգին փեսա գտանք՝ գտանք, թե չէ դու կաս ու կաս:

Սրա ինչը կա, տղզզ, ոչնչացրինք:

Բադալի աղջիկը մնաց տանք:

ՍԻՄՈՆ. Քարը շուր եք տալիս:

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Ե, կմնաս տակին:

Այս - է - տապան - Սի մոնի - երանելու - տղզզ մեծ  
ի - ճարտարապետի - Յայոց - աշխարհին:

Կդառնաս ուխտատեղի:

Վրադ մոմ կվառեն - տղզզ - ալելոյա:

Պառավները երազում քեզ կտեսնեն:

Դու էիր:

Ո՞վ զորավոր սուրբ Սիմոն, իմ երեսը քո ոտի տակ:

Տղզզ...

Օրինակ, գործիդ անունն ինչ է, որ «մի խանգարեք հա մի խանգարեք». ճարտարապետ ես, ինժեներ ես, նահանգապետ ես, Վարանցով-Դաշկով ես թե Լորիս-Մելիքով:

Տղզզ...

Դու էիր:

Թիշտ է, ես էի: Ֆիգարո, ֆիգարո, ֆիգարո, ֆիիի...

(Վանքում)

ՎԱՆԱՐԱՅՐ. «Մարող չի կարող ծառայել երկու տիրոջ, քանի որ մեկին պիտի սիրի և մյուսին ատի, կան մեծարի մեկին և արհամարի մյուսին. Ես ձեզ ասում եմ՝ դուք չեք կարող ծառայել միաժամանակ աստծուն և մամոնային։ Շշմարիտ Շշմարիտ եմ ասում, մի՛ քաշեք ձեր մարմնի հոգսը։ Կյանքը չէ՞ որ կերակուրից է ավելի և մարմինը՝ հագուստից։ Իր փառավորության մեջ Սողոմոնն իսկ չկարողացավ զգեստավորվել մի հովտաշուշանի չափ գեղեցկորեն։ Յապա դուք, թերահավատներ, որ դաշտի շուշան չեք...»։ Ուրեմն՝ ձեր վաղվա համար հոգսերի բեռ մի ստեղծեք։ Շշմարիտ Շշմարիտ եմ ասում. վաղվա օրի համար հոգսերի բեռ մի կապեք՝ թե ինչ պիտի ուտենք վաղը և ինչ պիտի խմենք վաղը և ինչ պիտի հագնենք վաղը։ Վաղվա օրը ինքը կհոգա իր հոգսը և այսօրվա նեղությունը բավական է այսօրվան։ Երես չորս հարյուր յոթանասուն, հինգ հարյուրից երեսուն պակաս, բայց եթե աղքատ ճարտարապետին ռոճիկ նշանակելու մասին մի հատուկ պատվիրան գտնեինք՝ Շշմարիտ Շշմարիտ կլիներ։ Ահա։ Չնչահավատներ, ինչպես սուրբ գրքի առակն է արգիլում վատնել ձեր մարմնի աստվածային ուժը կանանց վրա, ես ձեզ ասում եմ. մի վատնեք ձեր ոսկիները ձեր Եվրոպաներում ու ձեր Փարիզներում, այլ տվեք այդ ոսկիները դրանց կարիքավորին՝ լուսանկարի մեքենա ու թուղթ առնելու, զի՞, չնչահավատներ, վաղը այս հողը հայրենիք է դառնալու, հայրենիքը՝ քաղաքանայր, քաղաքանայր ճարտարապետություն է ունենալու, իսկ ճարտարապետությունը լինելու է արդեն մեկ անգամ եղածը։ (Դրսի աղմուկի վրա) Շեթանոսներ, Սիմոնին մի խանգարեք։ Վաղվա օրը կհոգա վաղվա հոգսը, այսօրը կհոգա այսօրվա հոգսը, բայց թե մենք պետք է կարողանանք մեր անձը հասցնել վաղվա օր, որպեսզի

մեր մարմնի վրա վաղը հոգա՞ իր հոգսը: Այլապես վաղը կհոգա  
մեր գերեզմանի հոգսը... ճշմարիտ ճշմարիտ եմ ասում...

(Գավթի դրամը)

ԱՇՈՒՂ. Անդրանիկ... էս ինչ գրաբար եմ լսում:

ԹՈՈ. (Տղաների խմբից) Վարդապետն է կարդում, պապի:

ԱՇՈՒՂ. Ասա՝ դեն օցիր, եդ սուրբ գիրքը մեր տունը քանդեց, դեն  
օցիր:

(Կացարանում)

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. (Շողերին նկարում է): Աղջկա երգը գիտե՞ս... Քու մե-  
ռը քեզ հանար չի՞ երգել... Որ պատը չխորտակվի՝ պատի մեջ  
աղջիկ էին դնում շարող վարպետներն ու քարը շարում էին:  
Չգիտե՞ս:

ՇՈՂԵՐ. Պատի մեջ աղջիկ էին դնում ու քարը շարում էին:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Այս պատի մեջ, իբր, այդպես թաղված է գլխավոր  
վարպետի կինը:

ՇՈՂԵՐ. Վարպետի կինը:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Թաղված է գլխավոր վարպետի ջահել կինը, բայց  
սուտ է:

ՇՈՂԵՐ. Սուտ է:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Սուտ է, թաղված չի: Ով կհամաձայնի մի թեկուզ շատ  
լավ վաճքի համար ինքը իրեն թաղել պատի մեջ: Սուտ է, թաղ-  
ված չի: Պատի մեջ մաքուր ջրով լվացած գետի ավագ է, եռա-  
բլուրի - Ուչքեփե - շատ լավ կրաքարի կիր ու մաքուր ջրով լվա-  
ցած խիճ: Խսկ գլխավոր վարպետի ջահել կինը խաչքարի տակ  
է, անունը Մարիամ է: Յանգիստ շնչիր, Շողեր, հանգիստ նայիր:

ՇՈՂԵՐ. Անունը Մարիամ է:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Էս երկրում իրեն ով կթաղի պատի մեջ - ոչ ոք էլ չի

թաղի: Հանգիստ շնչիր ու հանգիստ նայիր: Վարպետները, իբր, որ պատը հավիտյան կանգուն կենա՝ որոշել են. ում կինը կամ ում աղջիկը առաջինը եկավ իրենց մոտ, ումն ուզում է լինի՝ կանգնեցնելու են պատի մեջ, քարը շարելու, շաղախը լցնելու: Այս պնդերես երկրի վրա ոչ մի Չինգիզ-խան չկարողացավ կնքել իր հետքը, իսկ հայ քարտաշներն ահա, հայ որմնադիրներն ահա կնքել են իրենց ձեռքը: Հավիտյան: Հանգիստ նայիր, Շողեր, հանգիստ շնչիր: Պատի վրայից նայում են շարող վարպետները, պատի վրայից նայում է վարպետաց վարպետը, ու տեսնում են վարպետներն էլ, վարպետաց վարպետն էլ, որ հեռու, արևոտ, կանաչ արահետով, գյուղից դուրս է եկել ու գալիս է վարպետաց վարպետի կինը - տիկին, թագուհի, հպարտ, լույս կինը, աչքերից սեր է կաթում, վարպետաց վարպետի երեք գռուզ տղայի մայրը... Իր գլխի տեր ամուսնու պատշարի գործը Բագրատունիների թախտի հետ չի փոխի... Գյուղից դուրս է եկել, արտերի արանքով, խոտուծաղկի միջով, արահետով հանգիստ, հպարտ գալիս է, վարպետների համար ճաշ է բերում: ճաշ ի՞նչ է բերում, Շողեր:

ՇՈՂԵՐ. Զու է խաշել, աղ, սամիթ, լավաշ:

ԱՐԴԱՐԱՊԵՏ. Խաշած ձու, լավաշ-հաց, աղ, սամիթ: Վարպետները նայում են արահետին ու երեսները շուր են տալիս: Վարպետաց վարպետը նայում է արահետին ու դանդաղ, լուր լաց է լինում:

ՇՈՂԵՐ. Մի՛ պատմիր, ճարտարապետ:

ԱՐԴԱՐԱՊԵՏ. Սա սուս է, Շողեր, սա հնարել է հետագայի, վարպետաց վարպետներից հետո եկած անձարակ ժողովուրդը, որ մոռացել է...

ՇՈՂԵՐ. Որտեղից եկած:

ԱՐԴԱՐԱՊԵՏ. Որտեղից եկա՞ծ: Քրդստանից, Աքարստանից: Ոչ մի

տեղից, Շողեր. Վարպետներից հետո ծնված ժողովուրդը մոռացել է իր պապերի արհեստը, չի կարողացել իր տան համար մի կարգին պատ կապել ու չի կարողացել մի կարգին կարկատել իին պատերի փլվածքն ու հնարել է թե... որ քարը քարին դնել չգիտի և քարը քարին է դնում ու ինքը տակից փախչում: Փախչում, հեռվից նայում ու զարմանում է, թե ինչու են կանգուն հների դրած պատերը: Ու հնարում է, թե հները պատի մեջ ուսկեմազ աղջիկ են դրել, վարպետաց վարպետի կին, կամ շաղախը ձվի դեղնուցով են արել, կամ շաղախի հետ մաստակ են խառնել:

ՇՈՂԵՐ. Ոսկեմազ աղջիկ են դրել, ցեխը լցուի ու քարերը շարել:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Ոսկեվարս, աչքերը մեղրագույն՝ արևոտ արահետի խոտուժաղկի միջով, կանաչների միջով հանգիստ գալիս է, աչքերից սեր ու ծիծառ է կաթում, և վարպետաց վարպետը լուռ լաց է լինում պատի վրա: Գալիս նայում է վարպետներին, իր գլխի տեր, իր գրուց երեք տղայի հայր վարպետաց վարպետին, նայում է, և աչքերից ուրախություն ու սեր է կաթում: Աշխարհը՝ լո՞յս, ուրախ, վարպետները՝ թուխ, առողջ, վարպետաց վարպետը՝ թագավոր, օրը զնգում է: Նայում են արդար արեգակին ու հայտնում իրենց վճիռը: Եվ նա կանգնում է, հը՝, պատի մեջ, և ուժեղ կրի ու մաքուր ավագի շաղախը լցնում են: Վարպետաց վարպետը կռանում է նրա սուրբ ծնկների դեմ ու դնում քարի շարը, և դարձյալ լցնում են կապույտ ավագի ու ուժեղ կրի շաղախը: Այ թե ինչ է երգում «Աղջկա երգը»: Այդպես: Վարպետաց վարպետը կռանում է նրա սուրբ կրծքի դեմ ու դնում սրբատաշ քարի շարը, ու շաղախը լցնում են: Իսկ նա... անունը Շողե՞ր դնենք թե Մարիամ... նայում է իր գլխի տեր, իր երեք գրուց տղայի հայր ամուսնուն, նայում է կանաչ արև արա-

հետին, գյուղին, ցորենի արտերին ու լուռ լաց է լինում:

Եվ ամաչում է, Շողեր, ամաչում է՝ որ իր կորստով տխրեցնում է վարպետներին, իր արտասուքով փափկացնում է մարդկանց սիրտը: Յը՝, Շողեր, ամաչո՞ւմ է մարդկանց տխրեցնելու համար:

ՇՈՂԵՐ. Ամաչում է, ճարտարապետ:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ամաչում է: Են ժամանակ ամաչում էին: Ամաչում է մարդկանց տխրեցնելու համար և ուզում է որևէ տգեղ բան անել, որևէ տգեղ խոսք ասել, որպեսզի վարպետները բարկանան և իրեն առանց սրտի ցավի թաղեն, բայց չի կարողանում, Շողեր, չի կարողանում ասել որևէ տգեղ խոսք. լուսե՝, տխո՞ւր՝ ժայռում ու արտասվում է: Եվ ուզում է սրբել մեղրագույն աշքերի մաքուր արտասուքը, բայց թե ձեռքերն արդեն պատի մեջ են: Սուտ է, Շողեր, քաղաք Փարիզ կա, Եվրոպա կա, թերև, անպատասխանատու, լվտիորեն գեղեցիկ, ուրախ դաշտանություն... ի՞նչ արահետ, ի՞նչ սամիթ, վարպետաց ի՞նչ վարպետ, ի՞նչ ազգ, ի՞նչ ժանգ, ի՞նչ կամուրջ: Ուչքիլիսե՝, Դարաքիլիսե՝, Ուչքեփե՝:

(Ասատուրն ու Մագքաղը եկել կանգնել են Սիմոնի գլխավերներ):

ԱԲԵԼ. Յայրիկ... ճարտարապետի համար մի թութուն փաթաթիր, էլի: ՍԻՄՈՆ. ճարտարապետը ուզե՞ց: ճարտարապետը որ ուզի՝ կփաթեն:

ԱՍԱՏՈՒՐ. Յլա մի բարի օր:

ՍԻՄՈՆ. Բարով եկաք:

ԱՍԱՏՈՒՐ. Բարով ենք եկել: Բա հայր սո՞ւրբդ ուր է:

ԱԲԵԼ. «ճարտարապետը որ ուզի՝ կփաթաթենմ», դե ուրեմն դու ասա, թե ի՞նչ է նշանակում նստուկ:

ՍԻՄՈՆ. Նստո՞ւկ:

ԱԲԵԼ. «Ուժեղ թագավորներն ուժեղ նստուկ են ունենում, իրենց ուժեղ նստուկը դնում են պին գահի, այս հողն անիծված է»:

**ՍԻՄՈՆ.** Նստո՞ւկ: Չգիտեմ, գնա ճարտարապետին հարցրու:

**ԱԲԵԼ.** Դե ծխախոտ փաթաթիր՝ որ տանեմ:

**ՍԻՄՈՆ.** ճարտարապետը հազում է: Կտրած, կտրտած թութունը վերջանում է: Գնա իմ անունից հարցրու:

**ԱՍԱՏՈՒՐ.** Աշխատում ես:

**ՍԻՄՈՆ.** Աշխատում եմ:

**ԱՍԱՏՈՒՐ.** ճարտարապետն էլ էստեղ է, երկուսդ էլ աշխատում եք.

Ճարտարապետն էլ է աշխատում, դու էլ:

**ՍԻՄՈՆ.** ճարտարապետն էլ է աշխատում, ես էլ:

**ԱՍԱՏՈՒՐ.** Խաչքար ես շինում:

**ՍԻՄՈՆ.** Ինչպես որ պայմանավորվել ենք:

**ԱՍԱՏՈՒՐ.** Լավ ես անում:

(Կացարանում)

**ԱԲԵԼ.** (ճարտարապետին) Ի՞նչ է նշանակում «ուժեղ թագավորներն ուժեղ նստուկ են ունենում, իրենց ուժեղ նստուկը դնում են պինդ գահերի, այս հողն անիծված է»:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Են ցնդա՞ծն է ասում: Գնա ասա մեծ-մեծ քիչ խոսիր, դու քո գործն արա:

**ԱԲԵԼ.** Ասում եմ Վասիլն ինչո՞ւ Հայաստանում չդարձավ թագավոր - ասում է «ուժեղ թագավորներն ուժեղ նստուկ են ունենում, իրենց ուժեղ նստուկը դնում են պինդ գահերի, այս հողն անիծված է, որդիս»: Սիսա՞լ է ասում:

(Գավթի դրանը)

**ԱՍԱՏՈՒՐ.** (Սիմոնին) Խաչքար ես շինում:

**ՍԻՄՈՆ.** Խաչքար եմ շինում:

**ԱՍԱՏՈՒՐ.** Էսօր խոտհարքի աճուրդ է լինելու:

**ՍԻՄՈՆ.** Իմ գործը չի: Ես քար եմ տաշում:

**ԱՍԱՏՈՒՐ. ԴԻԼ:**

ՍԻՄՈՆ. Ես: Խաչքար եմ շինում: Չե՞մ շինում:

**ԱՍԱՏՈՒՐ. Լավ ես անում:**

(Կացարանում)

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** (Աբելին) «Ուժեղ թագավորներն ուժեղ նստուկ են ունենում, իրենց ուժեղ նստուկը դնում են պինդ գահերի, այս հողն անիծված է, նստելու ուրիշ տեղ գտիր». Ծշմարիտ ծշմարիտ է ասել, բայց թե ինչ է նստուկը՝ ես չգիտեմ: Իրեն հարցորու:

(ճարտարապետի մոտից Աբելը դուրս է գալիս):

ՍԻՄՈՆ. (Ասատուրին) Քեզ համար եմ շինում, քո խնդրանքով եմ շինում: Ի՞նչ է պատահել:

**ԱՍԱՏՈՒՐ. Ինչու ենք զինված եկե՞լ:**

ՍԻՄՈՆ. Զինված չեք եկել: Եկել եք ձեր գործն անող վարպետի ինչպեսությունը հարցնեք, վարպետի համար էլ հաց եք բերել: (Աբելին) Ի՞նչ ասավ, նստուկը ի՞նչ էր:

**ԱԲԵԼ. Ասաց զնա հայր սրբին հարցորու:**

**ԱՍԱՏՈՒՐ. Յացը՝ իհարկե հացի պատրաստությունով ենք եկել, մինչև իհմա ինչ էլ որ տվել ենք՝ ետ չենք ուզում, բայց եկել ենք ասելու, որ քո սարքած խաչքարը մեզ հարկավոր չի: Որովհետև, այ մարդ, դու հո վարպետ չես, որ խաչքար սարքես:**

ՍԻՄՈՆ. Եթե վարպետ չեմ՝ ինչպե՞ս եմ սարքում:

**ԱՍԱՏՈՒՐ. Ի՞նչ ես սարքում:**

ՍԻՄՈՆ. Խաչքար, հորդ վրա տնկելու խաչքար:

(Վանքում)

**ԱԲԵԼ. (Վանահորը) Յայր սուրբ, մասնագետները իհմա գալու են, մեկ էլ՝ ի՞նչ է նշանակում նստուկ: «Ուժեղ թագավորներն ուժեղ**

նստուկ են ունենում, իրենց ուժեղ նստուկը դնում են այնու գահերի, այս հողն անիծված է»:

ՎԱՆԱՐԱՅՐ. Ոչ միայն թագավորներին, տղա, այլև զորավարներին, այլև ճարտարապետներին, այլև քահանաներին, բոլորիս պինդ գահ է հարկավոր, աներեր, հաստատ, կայուն, դարավոր, չանիծված, օրինված: Զանգերը կքաշես, չմոռանաս:

ԱԲԵԼ. Ուրեմն գահը թագը չի, չէ՞:

ՎԱՆԱՐԱՅՐ. Թագը դնում են գլխին, գահին նստում են:

ԱԲԵԼ. Ուրեմն նստուկն ի՞նչն է:

ՎԱՆԱՐԱՅՐ. Նստո՞ւկը - քանակը, հետույքը, ահա:

ԱԲԵԼ. Եէ...

ՎԱՆԱՐԱՅՐ. Ինչ է, դժգո՞հ ես:

ԱԲԵԼ. Թագավորը բա նստո՞ւկ կունենա:

ՎԱՆԱՐԱՅՐ. Են էլ ի՞նչ տեսակ:

ԱԲԵԼ. Եէ...

ՎԱՆԱՐԱՅՐ. Ինչ է, իրենք դժգոհ չեն - դո՞ւ ես դժգոհ: Իրենք գլուխ-ները ներս են քաշում ու նստուկները լե՞ենացնում: Վարշավից մինչև Սիբիր: Ստամբուլից մինչև Կարակորում: Ի՞նչ ես ուզում, ի՞նչ ես ուզում, ես լեն, սիրուն աշխարհում դու ինձ ինչո՞ւ ես դժգոհել տալիս: Գնա: Զանգերը կքաշես, չմոռանաս: «Ուստի ձեզ ասում եմ. մի՛ հոգացեք ձեր մարմնի հոգսը, թերահավատներ, թե ինչ պիտի ուտեք վաղը և ինչ պիտի խմեք վաղը և կամ ինչ պիտի հագնեք վաղը. կյանքը չէ՞ կերակորից է ավելի և մարմինը հագուստից... Դապա մի նայեք հովտաշուշանին, որ ոչ բանում է և ոչ մանում, և ի՞նչ գեղեցկությամբ է նազում»:

(Գավրի դռանը)

ԱՍԱՏՈՒՐ. Ես քու խաչքարը չեմ ուզում, դու նստել ես ու՝ չըխկ, չըխկ,

Հըիսկ...

ՍԻՄՈՆ. Ինչո՞ւ չես ուզում:

ԱՍԱՏՈՒՐ. Դու Սիմոնը չե՞ս:

ՍԻՄՈՆ. Սիմոնն եմ, Ասատուրը չեմ:

ԱՍԱՏՈՒՐ. Սիմոնն ես, Ասատուրը չես: Բայց հորդ մահով չեիր ուզում  
Սիմոնը լինես, ուզում էիր Ասատուրը լինես:

ՍԻՄՈՆ. Ի՞նչ ես ուզում:

ԱՍԱՏՈՒՐ. Դու ո՞ր օրվա վարպետն ես:

ՍԻՄՈՆ. Էսօրվա:

ԱՍԱՏՈՒՐ. Ասում է էսօրվա:

ՍԻՄՈՆ. Բա ի՞նչ ասեմ:

ԱՍԱՏՈՒՐ. Ասում է բա ինչ ասեմ:

ՄԱԳԹԱՂ. Մանավանդ քու կնիկը:

ՍԻՄՈՆ. (Ասատուրին) Ի՞նչ ես ուզում:

ԱՍԱՏՈՒՐ. Դու խաչքար սարքող չես:

ՍԻՄՈՆ. Իսի՞ չեմ սարքող:

ԱՍԱՏՈՒՐ. Իսի պտի:

ՍԻՄՈՆ. Պարսկաստանի՞ց չեմ եկել:

ՄԱԳԹԱՂ. Նամանավանդ քու կնիկը, որ զուգել-զարդարել, կողքիդ  
պարապ պահում ես:

ՍԻՄՈՆ. Ուզում ես կրիվ սարքես՝ դնչիս միանգամից քացի տուր, ինչ  
ես «մանավանդ քու կնիկը հա մանավանդ քու կնիկը». իմ կնիկն  
ի՞նչ:

ՄԱԳԹԱՂ. Եդ ով է ձի՝ որ քացի տա:

ՍԻՄՈՆ. Աշխատում եմ, մի խանգարեք:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄՔԸ. (Տղա խաղալով) Աշխատում է, մի խանգարեք:

ԱՍԱՏՈՒՐ. Չենք խանգարի, աշխատում ես՝ աշխատիր: (Տղաների  
խմբին) Եկեք էստեղ: Բենո, տղերքին բեր:

**ՍԻՄՈՆ.** Ի՞նչ ես ուզում:

**ԱՍՏԱՏՈՒՐ.** Դու աշխատիր, մենք քեզ չենք խանգարում: Տղերք, ես քարն էստեղից հանում, տանում դնում ենք սելին:

**ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ.** Մաթոս պապը բարով մաշե՞ց:

Որ իմանար էս խաչարին եք արժանացնելու՝ մի քիչ շուտ կմեռներ:

(Կացարանում)

**ԹԱՐՏԱՐԱՊԵՏ.** Էլի փառք աստόն, էլի փառք աստόն, գեղեցկություն նից մի բան դեռ հասկանում են:

**ՇՈՂԵՐ.** Դունցը խոտի կրիվ է, ճարտարապետ:

(Գավթի դռանը)

**ՍԻՄՈՆ.** Պայմանը մենք ինչպե՞ս ենք կապել: Մի քիչ հեռու, հեռու ասում եմ:

**ԱՍՏԱՏՈՒՐ.** Ես քեզ հետ գործ չունեմ, դու աշխատում ես, աշխատիր:

**ՍԻՄՈՆ.** Տանում եք, ես ինչի՞ նայեմ՝ որ աշխատեմ:

**ՄԱԳԹԱՂ.** Քու կնկան նայիր ու աշխատիր:

**ԱՍՏԱՏՈՒՐ.** Խաչքար սարքող ես՝ քեզանից հնարիր ու սարքիր, սրա հետ դու գործ չունես:

**ՍԻՄՈՆ.** Բայց դու սրա՛ նմանակն ես ուզել:

**ԱՍՏԱՏՈՒՐ.** Ես խաչքարն եմ ուզել, դուք ասել եք սրա նմանակը ինձ համար կսարքեք, մի փութ ցորեն էլ կանխիկ եմ տվել, բայց դու քո խիղճը ո՞նց ես կորցրել, որ հանձդ ես առել:

**ՍԻՄՈՆ.** Յիմա կջարդեմ, սրա հերն անիծած, սարքում եմ - չե՞մ սարքում: Կիսատ է, նայիր, չե՞մ սարքում:

Չափիր, համեմատիր, մաս-մաս էլ նայիր, ամբողջը միասին էլ:  
Լավ նայիր:

(Ասատուրը նայում է: Եկել են մի քանի գյուղացիներ և դարձյալ գալիս են):

ԱՇՈՒՂ. Անդրամիկ... Եղ ո՞վ է խաչքար փորում:

ԹՈՂ. Ավետիք պապի Սիմոնը:

ԱՇՈՒՂ. Ասա գործ չունես, Սայաթ-Նովու դարն անցել է: «Ես հենց  
Սայաթ-Նավասին եմ - Իրակլի թագավորս ով է»: Անդրամիկ...

ԹՈՂ. Լսեցի, պապ:

ԱՇՈՒՂ. Յա, քե՛ մատաղ, պահիր մտքունդ. «Իրակլի թագավորս ո՞վ  
է»:

ԱՍԱՏՈՒՐ. Ե, հա, սարքում ես:

ՍԻՄՈՆ. Խնդրում եմ, ուղղակի, մի ամիս համբերես:

ԱՍԱՏՈՒՐ. Մի ամիս համբերեմ... մի ամիս համբերեմ... է, բա որ հան-  
կարծ սարքես: (Յանկարծակի կատաղությամբ) Տո դու Սիմոնը  
չե՞ս... Տո քու կնիկը Շողերը չի՞... Տո քու հոր հոգեհացը դու  
ինձանից չտարա՞ր: Քեզ ի՞նչ ես ճարտարապետ պատկե-  
րացնում, մեզ էլ էսպես աբարի հետ շաղախված գոնշապահ...  
Դու եդ ո՞ր օրվա վարպետն ես, դու եդ երբվանի՞ց վարպետ  
դարձար, որ մենք եղանակ քնած էինք, չհասկացանք:  
Անհասկացողը դու ես: Սեպտեմբեր առատ ամսին եդ քո՞  
ամբարը չի դատարկ: Խի, դու ամբար ունե՞ս, որ դատարկ կամ  
լիքը լիներ: Արշակունի՞ ես, Բագրատունի՞ ես, Նիկոլայ  
Ռոմանով թագավոր ես, թե Յովիհաննես Թումանյան: (Սիմոնը չի  
կարողանում առարկել դանդաղ նստում է իր խաչքարին, Աբելը,  
թուրը ծեռքին, դանդաղ կանգնում ու շտկվում է, թվում է՝ հիմա  
պիտի հարձակվի): Անի քաղաքի շինարա՞ր ես ինչ ես - դու  
քեզանից ի՞նչ ես ներկայացնում, որ խաչքար ես սարքում:  
Վերցրինք, տղերք:

(Կացարանում)

ԹԱՐՏԱՐԱՊԵՏ. Մեկն էլ լիներ՝ ինձ, գլխիս, փետով, բռունցքով,  
փետով, ինձ, ծեծելով քշեր, ասեր գնա կյանքդ ապրիր:

ՍԻՄՈՆ. (Որդուն) Ի՞նչ է եղել, տղա:

ԱԲԵԼ. ճարտարապետին կանչե՞մ, հայրիկ:

ՍԻՄՈՆ. Սրանք ինչ շունուգել են՝ որ սրանց համար ճարտարապետ կանչես:

ՎԱՆԱՐԱՅՐ. (Վանքից ելնում է) «Աստված իմ, որ բանաս զձեռն քո և լնուս զամենայն արարածս ողորմությամբ քով, քեզ հանձն առնեմ զանձն իմ, դու հոգա և պատրաստեա զպետս հոգվո և մարմնո իմո այսուհետե մինչև հավիտյան, ամեն»: Ի՞նչ է պատահել, թերահավատներ... Յեթանոսներ, ի՞նչ է եղել:

ԱՍԱՏՈՒՐ. Վարդապետ... ես խաչքարը, մի խոսքով, ձեզ պետք չի, ինձ հարկավոր է: Ամառվա օր է, խոտհունձ է, արտքադ է, ուրիշ-ների պես մուրացկանի նման ես սրա-նրա դռանը երես չեմ թեքելու, ես գործի տեր եմ, եզ եմ լծել ու սել եմ թերել ես գործի մասին:

ՎԱՆԱՐԱՅՐ. Մտքինդ ասա:

ԱՍԱՏՈՒՐ. Ասացի:

ՎԱՆԱՐԱՅՐ. Մտքինդ, հեթանոս, մտքինդ:

ԱՍԱՏՈՒՐ. Ես երազ եմ տեսել, երազում իմ հերն ես խաչքարը պահանջել է:

ՎԱՆԱՐԱՅՐ. Քամակդ բաց ես քնել, հեթանոս:

ԱՍԱՏՈՒՐ. Ես կատակ չեմ անում, վարդապետ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դու գիտեիր, որ մենք քեզ խաչքար չենք տա, դու ինչո՞ւ էիր եղաես անարդար երազ տեսնում:

ՄԱԳԹԱՂ. Երազը ես եմ տեսել, վարդապետ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Քեզ էլ ասեմ, թե ոնց ես քնել:

ՄԱԳԹԱՂ. Միրութիդ նայիր ու խոսքերիդ նայիր: Եթե հարգուկարգդ պահում են...

**ՎԱՆԱՐԱՅՐ. Չի կարելի:**

**ՄԱԳԹԱՂ. Դու ով ես՝ որ իմ իշխան կեսրարի պահանջին հակառակ կենաս:**

**ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Դրանց մտքինը Հովկավանքի խոտհարքն է, հայր սուրբ:**

**ԱՍԱՏՈՒՐ. Ես եզ եմ լծել ու սել եմ բերել, դուք ոնց ուզում եք՝ հասկացեք:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Եղ ձեր խաչքարը, եղ ել դուք՝ տարեք:**

**ԱՍԱՏՈՒՐ. Կեր չեմ ունեցել ու ջրի գնով երեք կովը ծախել եմ: Կամ խոտհարք տուր, կամ խաչքարն եմ տանում: Վերցրինք, տղերք, Բենիկ, վերցրինք:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Կանիծեմ:**

**ՄԱԳԹԱՂ. Բերանս բացել չտաս, թե չէ մի անիծել անիծեմ, որ... Դու եղ որ օրվա տերտերն ես՝ որ օրինես ու անիծես, դու անեծք գիտե՞ս, որ անիծես: Ցնդած Անդրոն մի ջորի բարձել չգիտեր՝ Սիքայել վարդապետ է դառել - անիծուն է:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Կանիծեմ:**

**ՄԱԳԹԱՂ. Կանգնած եմ՝ անիծիր տեսնեմ, տեսնեմ, քո անեծքն ինձ ինչ է անում: Անիծիր, կանգնած եմ, անիծիր: Ասատուրի հացը կերել ուժ են առել՝ որ անիծեն Ասատուրենց:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. (Մատը բարձրացրել է, նայում է շուրջը. պառավ մի կին համբուրում է վաճքի պատը. մի կին սփոռ է գցել գետնին, հացի պատրաստություն է անում. չոնգուրին զարկելով՝ աշուղը կիսաերգով մի երկու բառ է մրգնոթում. տղաների խումբը կանգնած է միհյանց ուսի հենված և հանգիստ նայում է. Սիմոնը նստած է իր կիսատ խաչքարին. Աբելը մաքրում է թուրը): Ես անտերը, անեծք իսկապես չգիտեմ: Մեկ-մեկ պետք է գալիս, սովորեցնեիր, էլի, Մագթաղինե:**

**ՄԱԳԹԱՐ. Որովհետև անգրագետ ես:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Դե ես հին հրաշքի առաջ եղ ով չի անգրագետ որ...**

Անեծք, չէ, իսկապես չգիտեմ. ուզո՞ւմ եք օրինեմ՝ դուք անեծքի տեղ ընդունեք: Ունքերս կիտած օրինեմ՝ դուք զարզանդեք: ճարտարապետը մի լավ սաղմոս է գրել, ուզո՞ւմ եք երգեմ՝ փառավորվեք. «Ատելության ժանգն ինձ մաշում է, քո շռայլ բարությամբ, քո շռայլ բարությամբ սեր ցողիր՝ զօծելու իմ ներսուն իրեն ուտում ու փչացնում է ինձ...»:

Ոչ, խնամի Ասո, թեկուզ ամբողջ նախիրդ էլ ջարդվի՝ խաչքարը չի կարելի տանել, որովհետև դեռ պիտի լինի մայրաքաղաք Աճին և մայրաքաղաք Անիում պիտի լինի սույն խաչքարը, որ վաղամեռիկ Մարիամի տապանն է և ոչ թե Մաքոսի գերեզմանաքարը:

(Գալիս է մասնագետների խունքը):

**Աբել, Սիմոն, զանգերը: Անիծվեք դուք, գործս փչացրիք (Ընդառաջ է գնում):**

Եկվորների խունքը վաճահոր աջը համբուրում է: Արգուտինսկին դիպչում է աշուղի գործիքին և ասում «դիոլ»: «Դիոլ», հարցնում է դեպի խունքը: «Դիոլ՝ թմբուկ», խմբի միջից ասում է Ալեքսանդր Տեր-Մարգարյանցը: «Թմբուկ», կրկնում է Արգուտինսկին և ապա հանկարծ հիշում. «Կո՞ւպը»: «Գմբեթ», ասում է Տեր-Մարգարյանցը: Վաճահոր հետ խունքը վաճք է մտնում: Արգուտինսկին մոմեր է հանում պայուսակից և բաժանում խմբին: Լուր աղոթելով՝ նրանք վարում են իրենց մոմերը և այրվող մոմերի դեմ լուր են:

(Գավթի դռանը)

**ԱՇՈՒՂ. Անդրանիկ... եղ ո՞վ էին:**

**ԹՈՂ. Չգիտեմ, պապի, ասում է թիֆլիսեցի են:**

ԱՇՈՒՂ. Լա՞վ մարդիկ են երևում:

ԹՈՌ. Եսիմ, պատի, մարդ են, էլի:

ԱՇՈՒՂ. Բա էս ո՞ւր գնացին, ձեն չեն հանում:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Մինք շատ լավն է, աշուղ Սուսեր, կկարենա՞ս մի նկարագրես:

ԱՇՈՒՂ. Էդ ո՞վ ես, քեզ լավ հասկացա: Մենք մեր դունչը Սայաթ-Նովու պարտեզ չենք կոխում:

(Կացարանում)

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Մեր շալվարի ծունկը ծակ է, բայց մեր Շողերը կարկատել է: Կռիվ է լինելու - արի տեսնենք ովքեր են իրենք և ով ես դու: Մասնագետներ են՝ նշանակում է գիտությունից խլել են ամենավերջին սանտիմն ու ամենավերջին գրամը: Իսկ քո ֆրանսերենը կիսատ մնաց և քո հայերենը ոչ ոքի հարկավոր չի: Կռիվ է լինելու, իսկ քո մտքում միայն քո ծակ շալվարն է: Ոչ մի կռիվ էլ չի լինելու, ոչ մի ցանկություն չունեմ կռվելու ձեզ հետ, պարոնայք, ես ես եմ, դուք ով եք: Յը, Շողեր, մեծ-մեծ քիչ խոսենք, չէ՞՝ Շողեր: Բայց եթե եկած չլինեին՝ լավ կլիներ, Շողեր: Բայց թե եկել են: Եկել են՝ ուրեմն կռիվ է լինելու, իսկ իմ մտքում միայն ծակ շալվար է: Ծակ շալվար է, որովհետև տասնչորս տարեկան աղջկա սրտի նման սիրտս ամեն անցորդի ետևից թռչում է: Ե, մենք մեզ հերոս դարձրինք, Շողեր. Եթե մեր սիրտը թռչում է, բայց մենք էստեղ ենք՝ նշանակում է Անիում կապած ավանակ չենք, այլ մարդ: Մարդ, ում սիրտը թռչում է, իսկ ինքը կապել է իրեն Անիին և գործ է անում: Գործ է անում, բայց շալվարը ծակ է, որովհետև գործը թանկ գործ է այս աղքատ ժամանակներում ոչ ոք ուժ չունի առնելու մեր մեծ գործը: Մեր Շողերը կարկատել է մեր շալվարի ծակը, համեցեք, ես ես եմ, դուք ով եք:

Խսմքից զատվում ու վանքից դուրս է գալիս Անտոն Աբաբեկովը, որ ուրիշ անգամ էլ եղել է այստեղ և իրեն համարում է ճարտարապետի հովանավոր-ընկերը: Կացարան անցնելիս կանգ է առնում Սիմոնի մոտ:

ԱՆՏՈՆ. Խաչքա՞ր ես տաշում, Սիմոն: Դո՞ւ ես շինում, թե ճարտարապետը:

ՍԻՄՈՆ. Դե:

ԱՍԱՏՈՒՐ. Ինքը: Ինքը ճարտարապետ է, ինքն է շինում:

ԱՆՏՈՆ (Ասատուրին) Դո՞ւ էլ ճարտարապետի խումբ ես մտել: Լավ ես արել:

(Գյուղացիները ծիծաղում են):

ՍԻՄՈՆ. Ինքը իմ օգնականն է, եկել է օգնի:

ԱՆՏՈՆ. Լավ է արել: (Գնալուց առաջ, հանկարծ) Այժերը գտա՞ր, էժերը, իջանը: Այժերը, որ կորել էին:

ՍԻՄՈՆ. Դե այծեր են, կկորչեն էլ, կգտնվեն էլ:

ԱՆՏՈՆ. Որ ես պիտի գնայի՝ կորած էին, դու չկայիր, փնտրում էիր: (Խաչքարի մասին) Կանգնած է, դեռ կանգնած է, հայերը դեռ չեն կոտրել: Ես ու ո՞վ հանեցինք գետնի տակից:

ՍԻՄՈՆ. Դու ու ճարտարապետը:

ԱՆՏՈՆ. Այո, ես ու ճարտարապետը: Ճարտարապետն էր օրը Թալիշ էր գնացել, դու հանեցիր գետնի տակից: Աշխատիր: (Գնում, ծեծում է կացարանի դուռը):

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. (Ներսից) Յամեցեք, պարոնայք:

ԱՆՏՈՆ. Յին կարգով. «ինչի՞ համար է Անին»:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Ես լավ չգիտեմ թե ինչի համար է Անին, համեցեք:

ԱՆՏՈՆ. «ինչի՞ համար է Անին»: Յին գեղեցիկ կարգով:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Անտո՞ն:

ԱՆՏՈՆ. Ես եմ, Աբել:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Յամեցիր, իին կարգը մնաց հնում:

ԱՆՏՈՆ. Ընդամենը երեկ էր:

ԿԱՐՏԱՐԱՊԵՏ. Քսան տարի առաջ:

ԱՆՏՈՆ. Չէ՞ մի: Իսկ պապան դեռ բիծուկ է, դեռ միայն բիծուկ է, չի մեռնում: Յին գեղեցիկ կարգով: Ինչի համար է Անին - մեր գեղեցկությունը մեզ ցույց տալու համար է Անին:

ԿԱՐՏԱՐԱՊԵՏ. (Դուռը բացում է) Յամեցիր:

ԱՆՏՈՆ. (Արդեն ներսում) Պապան չի ուզում մեռնել: Յինա էլ անմահության չինական խոտի անուն է լսել՝ ժենշեն, ուտելու է, հայ արվեստի վզին նստի ու անմահանա: Կապոցն ո՞ւր է: Մայրաքաղաքից են: (Թողերի կույտի մասին) Վահ, տնաշեն: (Կապոցը վերցնում տալիս է ճարտարապետին) Յագնվիր: Արագ, արագ: (Թողերի կույտի մասին) Տնաշե՞ն: (Շողերին) Ո՞նց ես, Մարիամ:

ՇՈՂԵՐ. Ծնորհակալություն:

ԱՆՏՈՆ. Սիմոնը թեզ տարա՞վ էջմիածին, Մարիամ:

ՇՈՂԵՐ. Ծնորհակալություն:

ԱՆՏՈՆ. Տարա՞վ թե չտարավ, Մարիամ:

ՇՈՂԵՐ. Չտարավ:

ԱՆՏՈՆ. Ինչո՞ւ չտարավ, Մարիամ: (Բարձրաձայն, դեպի ճարտարապետը՝ որ խորքի սենյակում է) Մի խոսքով՝ թոշակի հարց կա: Կոկորդիս հասավ, բայց ես գոհ եմ: (Շողերին) Ինչո՞ւ չտարավ, Մարիամ:

ԿԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԶԱՅՆԸ. Մարիամ չի, Շողեր է:

ԱՆՏՈՆ. Յետաքրքիր է, իսկ ես անընդհատ Մարիամ եմ հիշել: Մարիամ:

ԿԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԶԱՅՆԸ. Անընդհատ մտածել ես ու անընդհատ Մարիամ ես հիշել:

ԱՆՏՈՆ. Այո, Մարիամ: (Շողերին) Անցա՞ն երեխայի փորացավերը, Մարիամ:

**ՇՈՂԵՐ. Ծնորհակալություն, տասնիհնգ տարեկան է:**

**ԱՆՏՈՆ. Տասնիհնգ, Մարիամ: (Հանկարծ նկատում, թարեքից վերցնում է կոնյակի շիշը): Տնաշե՞ն: Մինչև հիմա... (Շողերը գնում է ջրի): Դու չունեցա՞ր էս տասնիհնգ տարվա մեջ մի ուրախ օր: Կամ տխուր օր: Ատամի ցավ: Խելագարվելու ցանկություն:**

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԶԱՅՆԸ. Ունեցա տասնիհնգ խելագար ուրախության օր. Ազգագրականը լուր էր ուղարկել, թե ինձ տրամադրում է, մեծ կամուրջը վերաշինելու համար, իհնգ հազար ռուբլի փող: Չետո պատասխանեցին, թե այս ու այս պատճառներով իհնգ հազար չի, իհնգ հարյուր է, որը հազիվ թե կամուրջը վերակառուցի, ուստի հարկ չեն համարում ուղարկել, այլ ուղարկում են իհնգ ռուբլու թուղթ: Ծնորհակալ ենք:**

**ԱՆՏՈՆ. Տնաշե՞ն:**

(Գավթի դրանը)

**ՄԱԳԹԱՐ. (Անցնող Շողերի մասին) Վանքի երինջը... Կողքերը կողքերիցս հաստ...**

(Եկվորները վանքից ելնում են):

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Էտո յա, պոմնիտսյա, պրեդուժիլ կուպիտ սվեչի.**

**Զտո խորոշո, տո խորոշո.**

Վանքում վաճահայրն այդ ժամանակ մեկ-մեկ հանգընում ու հավաքում է մոմերը: Նա դեռ չի վերջացրել, վանքում մոռացած պայուսակը վերցնելու է դառնում Եկվորների խմբի կինը՝ Վարվառա Տումանովա. սա կցանկանար չտեսնել վաճահոր արածը, բայց վաճահայրն այդ ժամանակ մկատում է սրան: Նրանք նայում են միմյանց: Վերջին մոմը դեռ վառվում է:

**ՎԱՆԱՐԱՅՅՐ. Տուտ, պանիմայտե, նադո... Բվայուտ տրուդնիե... տյաժոլիե... չորնիե... ծանր... դճի: Սեվոդնյա դեն յասնի... կրասիվի... պրոզրաչնի... պրեկրասնի... Ա բվայուտ տյաժոլիե,**

պոչտի չյորնիե դմի... Նե խոչետսյա ժիտ... Պո նոչամի ռաբոտաետ, ա մարխ, պոնիմաետե, մարխ... Եդ անտեր մարխին ի՞նչ էին ասում: Բուդտե վելիկադուշնա, կակ ումեետ բվատ վելիկադուշնա տոլկո ռուսսկայա ժենշինա Նաստասյա Ֆիլիպովնա պո ռոմանու Իդիոտ Ֆյորդորա Ռոստուսկովո... Ի՞նչ էին ասում եդ անտեր մարխին ռուսաց լեզվով: (Վճռական) Վորչչեմ, նուժնո: (Փչում հանգընում ու վերցնում է նաև վերջին մոնը:) Վսյո: «Դու քո ծոմը տրտումերես մի պահիր: Մանամեխի հատիկի չափ քո տրտմությունից դու հրապարակներում վշտի բերներ մի կապիր»: (Վարվառան կանգնած է անշարժ. մեկ անգամ էլ նայելով նրան, վանահայրը շփոթվում է:) Ի՞նչ էին ասում եդ անտեր մարխին...

(Գավթի դրանը)

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. (Չոնգուրի մասին) Գմբե՞թ:

ՏԵՐ-ՍԱՐԳԱՅԱՆՑ. Գմբեթ - կուպըլ:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Գմբեթ - կուպըլ, ա թմբո՞ւկ:

ՏԵՐ-ՍԱՐԳԱՅԱՆՑ. Թմբուկ ի եստ թմբուկ:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Ա դիոլ իսչեզ: Գմբեթ - կուպըլ, թմբուկ ի եստ թմբուկ, ա դիոլ իսչեզ: Նու գդե՞՝, գդե՞՝, գդե՞՝ դիոլ:

ԾՎԵՇՈՎ. Դիոլ, դիոլ, դիոլ - եղբօրը գտել է, եղբայրը եղբօրը գտել է:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Եղբայր՝ զնայու. Եղբայր՝ բրատ, ա դիոլ վոտ իսչեզ: Ա չտո՞ տամ վնուտրի.

ՏԵՐ-ՍԱՐԳԱՅԱՆՑ. (Աշուղի համար թարգմանում է) Ասում է դիաչել կարելի՞ է: Ասում է ուզում եմ ձեռք տալ, ինձ քաշում է: Տուր թող նայի:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Ա մո՞ ժնո պոտրոգատ. Մնե օչեն խոչետսյա.

ՏԵՐ-ՍԱՐԳԱՅԱՆՑ. Ասում է մեջն ի՞նչ է:

ԾՎԵՇՈՎ. Դատարկ է: (Մոտենում է Սիմոնին ու խաչքարին):

**ԱՇՈՒՂ. (Դանկարծ) Պուստոյ:** (Գյուղացիները ծիծաղում են):

**ՎԱՍԱՐԱՅՐ. (Աշուղին)** Երգիր, թող տրամադրությունը բարձրանա:

**ԱՇՈՒՂ. Դրա տրամադրությա՞նն ինչ է եղել ես արևուս աշխարհում:**

**ԾՎԵՇՈՎ.** Վարպետը աշխատում է: Վարպետը երկաթե մուրճով և պողպատե փորիչով աշխատում է: Նայ վարպետը պողպատե մուրճով քանդում... քանդակում է: Քանդակել բառը չի՝ ծագում քանդել բառից:

Գյուղացիների միջով, բոլորի նկատմամբ անտարբեր, դանդաղ առաջ է գալիս սահմանապահ զորքերի սպան: Նա ուզում է անակնկալի բերել վանահորը, բայց վանահայրը նրան վաղուց էր նկատել. այն պահին, երբ սպան կտրուկ շուրջ է գալիս դեպի վանահայրը, սա այդ պահին կանգնած է Ծվեղովի կողքին և կարծես թե զրուցում է սրա հետ: Սպան դանդաղ ճեմելով ետ է գնում:

Նայ վարպետը քանդակում է: Անկյունը կոտրել է: Քանդակել բառը չի՝ ծագում քանդել բառից:

**ՎԱՍԱՐԱՅՐ. Դուք Ծվե՞դովն եք:**

**ԾՎԵՇՈՎ.** Այս խաչքարը պատիվ կունենա լինելու կայսերական թանգարանիս մշտական անդամ: Եի՞շտ շարադասություն է՝ այս խաչքարը պատիվ կունենա լինել կայսերական թանգարանիս լուսապայծառ սրահներից մեկի մեջ:

**ՎԱՍԱՐԱՅՐ. Խաչքարը կայսերակա՞ն...**

**ԾՎԵՇՈՎ. Ուրեմն շնորհակալ եք:**

**ՎԱՍԱՐԱՅՐ. Մենք շնորհակալ ենք՝ որ դուք էդքան լավ հայերեն եք խոսում:**

**ԾՎԵՇՈՎ. Չի կարելի ասել եդքան, պետք է ասել այդքան:**

**ՎԱՍԱՐԱՅՐ. Մի քիչ դժվար է:**

**ԾՎԵՇՈՎ. Դժվար չէ - այդքան, այնքան, այսքան: (Խաչքարի մասին) Գեղեցկուիհի:**

**ՎԱՆԱՐԱՅՐ.** ԴԵ ԽԱՅՔԱՐԱ է, ԷԼԻ, այ որդի, ի՞նչ գեղեցկուիի, ամոք չի՞։  
**ԾՎԵՇՈՎ.** Ամոք չէ: Մերկ գեղեցկուիի՝ արվեստասեր հասարակության  
աշքերի առջև։ Յասարակությունը նայում և ասում է. հայ չնչին  
ժողովուրդ մշակութային ժողովուրդ է, վայրենի չէ։

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Զդես պախարոնեն մոյ պակոյնի դեղ, տակ շտո խաչկար  
ներեզմին, անտեր չի։

**ԾՎԵՇՈՎ.** Անանուն չէ: Ինձ հետ դուք ռուսերեն մի խոսեք, ես մի մտա-  
վորական հայու չափ գիտեմ հայերեն խոսել: Խաչքարը  
տասներեքերորդ դարու գործ է, այնպես որ դուք մի փորձեք ինձ  
խաբել իմ ռուսաց լեզվով։

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Իմ հայոց լեզվով ես ախար ո՞նց խաբեմ, այ որդի, որ...  
խաչքարն անտեր չի, չի կարելի էստեղից տանել։

**ԾՎԵՇՈՎ.** Այս վայրենի ավերակմերից խաչքարն ինչո՞ւ չի կարելի  
տանել։

**ՎԱՆԱՐԱՅՐ.** ԴԵ այ որդի, միշտ հո էսպես վայրենի ավերակ չենք մնա-  
լու։

**ԾՎԵՇՈՎ.** Աաա... բայց անկյունն արդեն կոտրել եք։

Կացարանում, հագուստը փոխած, ճարտարապետը ներս է գալիս, և Ան-  
տոնն սկսում է ծիծաղել. այդ հագուստը ճարտարապետի համար շատ է  
նեղ։

**ԱՆՏՈՆ.** Բայց ճիշտ քո չափսերով՝ քաղաքի լավագույն դերձակն է  
կարել: Կարել է քաղաքի ամենալավ դերձակը: Տնաշեն, էնքան  
ես հաստացել։

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** (Ուսերը բարձրացրած՝ զսպում է հազը): Ոչինչ,  
պարտավոր չիր։

**ԱՆՏՈՆ.** Պարտավոր էի, բայց հայրիկը պինդ բիծա դուրս եկավ: Գի-  
շերը քեֆի ենք եղել. ույեզդի նաչալնիկը գնացքից իջեցրեց,  
պատիվ տվեց: (Այդ պահին եկվորների խումբը դուռը ծեծում է):

ԱՐԳՈՒՏԻՆՆԱԿԻ. Մը պրիյեխալի. ՄԵՇՔ ԵԿԵԼ յԵՇՔ:

ԱՆՏՈՆ. ԻՆՑ որ է, տեսնենք ովքեր են ԵԿԵԼ:

ԴՈՒՔ ՈՎՔԵ՞Ր ԵՔ:

ԱՐԳՈՒՏԻՆՆԱԿԻ. ԷՄ զՆԱԶԻՄ - ՎԻՍՈՂԻ՞Մ ՏԵ.

ԱՆՏՈՆ. ՆԻՀԵԳՈ ԱՊՈՒՐԲԱՆՈԳՈ. ԷՄ զՆԱԶԻՄ - ԿՄՈ՞ ՎԸ ՏԱԿԻՒԵ.

ԱՐԳՈՒՏԻՆՆԱԿԻ. Օհն. Ի ՀՄՈ՞ ՄԸ ԴՈՂԾՆԻ ՆԱ ԷՄ ՕՄՎԵՏԻՄ.

(Գյուղացիներն արդեն թաքում ժաղրում են աշուղին: «Պուստոյ, չե՞ս նվազի մի հատ, պուստոյ», ասում է նրանցից մեկը):

ԲԱՐԱԹՐՅԱՆ. ճարտարապետ Աբել Արծաթբանյանի աշխատանքը քննո՞ղ-նայո՞ղ նախնական հանձնաժողովի անդամներ: Բացեք, բացեք, խեր խաբարի ենք ԵԿԵԼ:

ԱՆՏՈՆ. Դուք ինչպե՞ս անցաք կիրճը: Դուք ո՞ւր եք ԵԿԵԼ: Ապագայի մեջ ի՞նչ են անելու Անին և հայոց անցյալի ճարտարապետությունը:

Դուք ինչպե՞ս անցաք կիրճը:

ՇՎԵԴՈՎ. (Դռան դեմ) Ճարցերը, խնդրվում է, կրկնեք:

ԱՆՏՈՆ. Կրկնում եմ: Դուք ինչպե՞ս անցաք կիրճը՝ մեկ: Դուք ո՞ւր եք ԵԿԵԼ՝ երկու: Ապագայի մեջ ի՞նչ են անելու Անին և հայոց անցյալի ճարտարապետությունը՝ երեք: Ճիմա. դուք ինչպե՞ս անցաք կիրճը:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Ճնարավոր թյուրինացություններից խուսափելու համար հենց սկզբից ասում եմ. Ես համաձայն եմ Արծաթբանյանին թոշակ նշանակել, ես համաձայն եմ թոշակ նշանակել ոուսական կայսրության սահմաններում աշխատող-չաշխատող յուրաքանչյուր մարդու, ես համաձայն եմ թոշակ նշանակել ամբողջ աշխարհի բոլոր մարդկանց: Այնպիս որ՝ իմ պատասխանները չեն խանգարելու արձանագրությունն իմ ստորագրելուն: Եղա՞վ:

ԱՆՏՈՆ. Բարձրագույն քուրմը համաձայն է:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Պատասխանում եմ. կիսակայարանում գնացքից իջանք, մտանք Ախուրյան գետի կիրճ, գետն անցանք պատառութված նավակով, ոտքներս թրցվեց: Եկել ենք հայ Բագրատունիների իշխանական տոհմի բերդաքաղաք Աճի, որ եղել է մեր թվագրության տասներորդ դարում, այսինքն՝ մեզանից հազար տարի առաջ, այսինքն՝ հիմա չկա և, բնականաբար, չի լինելու նաև ապագայում, որովհետև երեկ կառուցել են երեկվա համար, վաղը կառուցելու են վաղվա համար, և մի՛ փոխադրեք, խնդրեմ, երեկվա օրը վաղվա մեջ, զուր մի չարչարեք ձեզ էլ, մեզ էլ:

**ԱՆՏՈՆ.** Ի վսյո՞ւ.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Լրիվ:

**ԱՆՏՈՆ.** Բայց չէ՞ որ դա ռեալիզմ է:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Բայց չէ՞ որ ձեր Թիֆլիս քաղաքում ռեալիզմը կարգին գին ունի: Ապագայի մարդիկ խոտակերներ չեն, իրենց քաղաքները իրենք կկառուցեն իրենց ուզած տեղերում ու իրենց ուզած ձևերով:

**ԱՆՏՈՆ.** Ի՞նչ պայծառ իրատեսություն:

(ճարտարապետը հազը զսպում էր, հիմա անցնում է խորքի կացարան):

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ի՞նչ է պատասխանում բարձրագույն քուրմը:

**ԱՆՏՈՆ.** Դամեցիր, քո պատասխաններից բարձրագույն քրմի սիրտը խառնեց: (Տումանովային) Զեր իրեշտակային ձայնով ինչ գարշելի պատասխան էլ տաք՝ մեզ միևնույն է դուր է գալու, համեցեք: (Շվեդովին) Դուք պարտավոր չեք պատասխանել և մանավանդ ճիշտ պատասխանել, ներս եկեք, Նիկոլայ Վասիլևիչ:

**ԾՎԵԴՈՎ.** Նիկոլայ Շվեդովը մտածում է, մտածելու ժամանակ տվեք պարոն Շվեդովին:

ԱՆՏՈՆ. (Դուռը ծածկում է) Կրկնե՞մ հարցերը:

ԱՐԳՈՒՏԻՆՆԿԻ. Կրկնե՞մ հարցերը:

ԱՆՏՈՆ. Դուք ինչպե՞ս անցաք կիրճը: Զորը: Գետը: Անդունդը: Անջր-պետը:

ԱՐԳՈՒՏԻՆՆԿԻ. Կիրճը, ձորը, գետը, ա դայլշե նե պոնյալ.

(Տեր-Սարգսյանցը հարցը թարգմանում է Արգուտիննկու համար, այդ նույն ժամանակ Շվեդովը մոտեցել է Աբելին, խոսում է նրա հետ):

ՇՎԵԴՈՎ. Դու այստեղացի՞ ես, փոքրիկ տղա:

ԱԲԵԼ. Ես էստեղ եմ ծնվել:

ՇՎԵԴՈՎ. Ուրեմն՝ ես ի՞նչ եմ պատասխանելու ներսի հարցմունքին:

ԱԲԵԼ. Զգիտեմ: Իմ ծնվելուց առաջ էղպես հարցուապատասխանով են ներս մտել, բայց չգիտեմ ինչ պատասխան են տվել: Յիմա ով ասես մտնում է:

ԱՐԳՈՒՏԻՆՆԿԻ. Կիրճ - զնաչիտ ուշչե՞լե:

ԱՆՏՈՆ. Կիրճ - ուշչե՞լե, պրոպըստ, անջրպետ, անդունդ, ձոր, անանցանելի Եվրոպա ի Ազիա, Ֆրանցիա ի Տուրցիա, Տաճկաստան, վլոտ չտո տակոյե կիրճ:

ԱՐԳՈՒՏԻՆՆԿԻ. Պրիզնատայա օտկրովեննո, յա ստարիյ բոլտուն. Վայու դրորոգու րազգովարիվալ ի դամեն նե զամետիլ, կակ մը պրոշլի ուշչելե.

ԱՆՏՈՆ. Վը, ստալո բըյտ, նե ուվիդելի տամ, նա դնե օբլոնկի վելիկոլեպնոգո մոստա.

ԱՐԳՈՒՏԻՆՆԿԻ. Կակայա ժալոստ. Յա ի նե զամետիլ իխ. Նե զամետիլ պոտոնու չտո բեսպրերըվնո բոլտալ. Մնե վսյո խոչետսյա գովորիտ - իզ կակոգո-տո վոռոդուշեվլենիյա. Վոռոդուշեվլենիյա օտ տոգո, չտո յա նա րոդինե սվոիիս արերկով - վեդ նաշ րոդ Արգուտիննկիխ վիշյոլ իզ Անի, չուտ լի նե պյատ վեկով նազադ. (Ներս է մտնում) Ի վսյո տակի նեխորոշո պոլուչիլոս, նե լովկո.

**ՇՎԵԴՈՎ.** (Արգուտինսկու մասին) Նույնքան ճարպկորեն, ինչքան  
ակադեմիա խցկվելիս: Ես պատրաստ եմ պատասխանել ձեր  
յուրաքանչյուր և բոլոր հարցերին:

**ԱՆՏՈՆ.** Դուք ինչպե՞ս անցաք կիրճը, Շվեդով Նիկոլայ Վասիլիկի:

**ՇՎԵԴՈՎ.** Կիրճը ես անցա Անի քաղաքի քարե մեծ կամրջով:

**ԱՆՏՈՆ.** Կամուրջը փլված է:

**ՇՎԵԴՈՎ.** Ոուսաց բարեշնորի Նիկոլայ Ալեքսանդրովիչ կայսեր ըն-  
ծայած դրամով կամուրջը վերաշինել էր ճարտարապետ Աբել  
Արժաթբանյանը:

**ԱՆՏՈՆ.** Չեզ հուշում են:

**ՇՎԵԴՈՎ.** Մի հայրենասեր հայու չափ ես հայ եմ, ինձ ոչ ոք չի հու-  
շում:

**ԱՆՏՈՆ.** Դուք ո՞ւր եք եկել:

**ՇՎԵԴՈՎ.** Մենք եկել ենք ճարտարապետության Մեքքա:

**ԱՆՏՈՆ.** Աֆորիզմ է:

**ՇՎԵԴՈՎ.** Կարծ է, բայց աֆորիզմ չէ: Մենք լավ գիտենք, թե ուր ենք  
եկել. մենք եկել ենք ճարտարապետության Մեքքա:

**ԱՆՏՈՆ.** Դուք չափազանցնում եք:

**ՇՎԵԴՈՎ.** Չափազանցնել ես կարողանում եմ, բայց Անին չափա-  
զանցնելու հնարավորություն ինձ տալիս է:

**ԱՆՏՈՆ.** Ապագայի մեջ ի՞նչ է անելու Անին:

**ՇՎԵԴՈՎ.** Անին լինելու է Ոուսահայաստանի և Տաճկահայաստանի  
միացյալ անկախ թագավորության մայրաքաղաքը:

**ԱՆՏՈՆ.** Ծաղրում եք:

**ՇՎԵԴՈՎ.** Կարծում եմ դուք այդպես եք մտածում:

**ԱՆՏՈՆ.** Մենք հիմա՞ր ենք:

**ՇՎԵԴՈՎ.** Դուք իհարկե հիմար չեք, բայց անհնար... անելանելի...  
դժվար... խելագար պայմաններում մարդկանց մեծ մասը

գժվում... իհմարանում... գժանում է:

ԱՆՏՈՆ. Ռուսաստանի և Թուրքիայի միջև ԱԲԻՆ լինելու է մեծ Հայաստանի մայրաքաղաք՝ Քը:

ՇՎԵԴՈՎ. Զեր կարծիքով լինելու է մեծ Հայաստանի մայրաքաղաքը:

ԱՆՏՈՆ. Թշնամիների երախո՞ւմ:

ՇՎԵԴՈՎ. Ժամանակը մաշում է բոլոր ժամիքները:

ԱՆՏՈՆ. Իրենք մաշվելուց առաջ այնքան բան են մաշում ժամիքները:

ՇՎԵԴՈՎ. ԱԲԻՆ լինելու է, ռուսաց բարեշնորի կայսեր հովանավորությամբ, միասնական Հայաստանի մշակութային ինքնավար կյանքի կենտրոն:

ԱՆՏՈՆ. Ռուսաց բարեշնորի կայսրը կստեղծի՝ միասնական Հայաստան:

ՇՎԵԴՈՎ. Զեր վանահայրը կարծում է կստեղծի: Զեր կաթողիկոսը կարծում է կստեղծի: Զեր Յովիաննես Թումանյանը կարծում է կստեղծի: Դուք բոլորդ կարծում եք կստեղծի: Բայց ես ձեզ ասում եմ՝ չի ստեղծի տիրակալը ձեզ համար կուլտուր-ազգային միասնություն, որովհետև տիրակալը նախընտրում է քաղաքավար երևալու համար, այլև խեղդվելուց խուսափելու նպատակով, ծամել և կուլ տալ փոքր առ փոքր, մաս առ մաս: Տիրակալը միասնական մեծ Հայաստան չի ստեղծի:

ԱՆՏՈՆ. Միասնական մեծ Հայաստանն ինչքան էլ մեծ լիներ՝ չէ՞ որ դարձյալ փոքր էր լինելու մեծ Ռուսաստանի մոտ, այնպես որ կարիք չկար վախենալու մեծ Հայաստանի մեծությունից:

ՇՎԵԴՈՎ. Չի ասվի, չի ասվի:

ԱՆՏՈՆ. Բանակ՝ մենք չենք ուզում, դիվանագիտության իրավունք՝ չենք ուզում: Մենք ուզում ենք բանաստեղծների, ճարտարապետների, երաժիշտների, նկարիչների, բանաստեղծների

ինքնավարություն:

ՇՎԵԴՈՎ. Բանաստեղծները բանակներ են ծնում, գլուխ մի ցավեցրու:

ԱՆՏՈՆ. Այդ դեպքում՝ դուք ինչո՞ւ եք եկել:

ՇՎԵԴՈՎ. Ուսահպատակ մարդը ռուսական կայսրության տարածությունները փորփրում է, եկել ենք տեսնելու ինչու է փորփրում և ինչի կարիք է զգում:

ԱՆՏՈՆ. Յայրենիքի:

ՇՎԵԴՈՎ. Մեծապետությունը ես չեմ: Յայրենիքի ձեր խնդրագրով դիմեք միապետին և սպասեք ձեր խնդրագրի պատասխանին:

ԱՆՏՈՆ. Լուսն եմ:

Ապագայի մեջ ի՞նչ են անելու Անին և անցյալի հայ ճարտարապետությունը:

ՇՎԵԴՈՎ. Դաշնաւու են ճարտարապետության ռուսաց կայսերական ճեմարանում սովորողների ուսումնառության ամառային հիմնական...

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Արոտավայո:

ՇՎԵԴՈՎ. Ես փնտրում եմ բազա բառի հայերենը:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Չկա, ներս գնացեք:

ՇՎԵԴՈՎ. Ամառային հիմնական ուխտատեղի: Տեր աստված: (Նկատել է այն դուռը, որի դեմ կանգնած էր: Անտոնը բացում է կացարանի այդ դուռը, և Շվեդովը շեմքին ծնկած է: Կավե կուժը ձեռքին՝ Շողերը սպասում է նրա ելնելուն):

ԱՆՏՈՆ. Արի, Մարիամ:

ՇՎԵԴՈՎ. (Դուան դեմ և Շողերի ծնկների մոտ) Տեր աստված:

Անտոնը գրաբանից համում և Շողերին է տալիս երեխայի խաղալիք՝ գուցեռետիմե թելով անագե ձիուկ: Նույն այդ ժամանակ գյուղացիներից մեկը Սիմոնի մոտից լուր վերցնում է մուրճն ու բրիչը և գնում վաճքի պատին փո-

րագրել է սկսում իր անունը: Մի ուրիշ օյուղացի, դիտմամբ բարձրածայն, հարցնում է. «Ժամի քանի՞ս է, խնամի Դավո»: Մեկը հանում է ժամացույցը և պատասխանում երկար նայելուց հետո. «Ժամի ուղիղ երկուսն է»: Դանդաղ, շրջապատին անտարբեր՝ մոտենում է սահմանապահ զորքի սպան, անտարբեր նայում իին թուր մաքրող Արելին, կտրուկ նայում վաճահորը և դանդաղ ետ քայլում: «Խոտհարքը չորանում է», լսվում է օյուղացիների միջից:

ԱՆՏՈՆ. Սկսում եմ, Ալեքսանդր:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԸ չի պատասխանում. Երկար՝ չի պատասխանում, ետուառաջ է անում վաճքի և կացարանի միջև: Կացարանում, Շողերը մտնում է խորքի սենյակ, շտապ ետ գալիս ու ջուր տանում: Նրա ետևից խորքի կացարան է անցնում Տումանովան: Լսվում է ճարտարապետի երկար խուլ հազը:

Ալեքսանդր, սկսում եմ: Դուք ինչպես անցաք կիրճը:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Անի քաղաքի միաբորիչը մեծ կամրջով:

ԱՆՏՈՆ. Անի քաղաքի մեծ կամրջի թռիչքը բեկված է, Ալեքսանդր:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Նայիր, Սիրիրն այդտեղից երևո՞ւմ է:

ԱՆՏՈՆ. Սիրիրը, ոչ, չի երևում: Երևում է Արագած բարի լեռը:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Ժողովրդի հեղափոխությունը հաղթել է, երկիրը կառավարում են մարդասիրության գաղափարները, ժողովրդի ուժերով կամուրջը վերակառուցել են ես: Կիրճը ես անցա իմ վերակառուցած կամրջով:

ԱՆՏՈՆ. Դու ինչո՞ւ անցար կիրճը:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Եկա հարցնելու ամեցի իին վարպետներին, թե նրանք այդ ինչպես են անում, որ նրանց կառուցած վանքերում սուտ աստվածը դառնում էր ճշմարիտ աստված, իսկ իմ շենքերում կարգին մարդը չի դառնում շատ լավ մարդ:

ԱՆՏՈՆ. Դուք ինքներդ, ներեցեք, անհասկացո՞ղ եք:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Անհասկացող չեմ և ահա հիշեցի, որ կա իին

վարպետների բարձրացրած Անի, ուր քարը քարին մնում է արդեն հազար տարի:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Իսկ եթե իիմա քար չէ, այլ ցեմենտ և մետա՞ղ:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ.** ճիշտն ասած երկար-քետոնի գյուտը ես կփակեի:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Բայց դեռ չես փակել. ցեմենտը և պողպատը կան և փառք աստծու՝ որ կան:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ.** Կան գեղեցիկ բաներ և կան տգեղ բաներ, աստված այդպես է ստեղծել. ցեմենտը և մետաղը տգեղ բաներ են:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Որովհետև ցեմենտի և մետաղի գեղեցկությունը դեռ գտնված չէ, իսկ բարի գեղեցկությունը հայտնաբերվա՞ծ է: Որովհետև կտակված ժառանգությամբ ապրելը հեշտ է, իսկ մերկ ձեռքերով նոր նյութերի դեմ կռվելը դժվա՞ր:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ.** Այստեղ չկան մետաղ և ցեմենտ, այստեղ Արագած լեռան քարն է:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Արագած լեռը Պետերբուրգում չէ:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ.** Ես պետերբուրգցի չեմ:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Բայց չէ՞ որ, ի վերջո, անտերբուրգցի ես:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ.** Բայց չէ՞ որ, ի վերջո, պետերբուրգցի չեմ:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ինձ հոգնեցրել են ձեր այդ պատանեկան խիզախությունները:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ.** Իսկ ես զզվում եմ վատ աղջկա պես վռազ հանձնվելու ձեր այդ թուլակամությունից, ձեր այդ փալասությունից ես զզվում եմ:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Պատանեկան խիզախությամբ խոսիր բռնակալության ու Սիրիրի մասին, միայն խոսիր, իսկ ստեղծելը՝ ստեղծիր ցարի ու բռնակալության ոճ: Ռուսաստանի սեփականը քիչ է, քո հաստագլուխ իշխանների ու դատարկամիտ վանականների միջնադարյան ոճն էլ փոխադրիր Ռուսաստան և պնդացրու

բռնակալությունը: Ապա կոտրատվելով հարցրու՝ Սիրիոս չի՝  
Երևում: Երևում է, այո, Երևում է հենց քո պատճառով:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Այո՞:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Եթե միմյանց չենք խաբելու՝ այո:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Խոստանում եմ քեզ հուսախաբ չանել:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Այո, նորից համեմատիր թուլական աղջիկների հետ:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Դա ուրիշ խնդիր է, և իմ խոսքը ետ չեմ վերցնի:

Դու կարծում ես իմ ճարտարապետությունը բռնակալության  
ճարտարապետություն է, իսկ ես ասում եմ՝ ներդաշնակ խաղա-  
ղության ճարտարապետություն է իմ ճարտարապետությունը,  
ինչպես հին Աթին:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Քսաներորդ դար ենք մտել:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Այսինքն:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Ընդամենը տասներեք տարվա մեջ միջազգային տասը  
և ներազգային հարյուր պատերազմ:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Քո պատճառով: Դու կարծում ես առաջա-  
դիմության ու հեղափոխությունների ճարտարապետ ես, դու  
այնինչ ջարդարարության ճարտարապետ ես:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Ինչ որ ջարդվում է պիտի, այո, ջարդվի:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Քո ազգը, օրինակ, շատ լավ ջարդվում է,  
Ալեքսանդր Պուշկինն էլ, սֆինքսն էլ: Գլուխո խփիր քարին, ինչ  
որ կջարդվի՝ քող ջարդվի:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Դու քո Զվարթնոցի չեղած բարձրության առաջ  
գարմացած կանգնիր - մարդիկ հիսունհարկանի շենքեր են  
կանգնեցնում:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Դա անբարոյականություն է:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Գուցե՝ մտքի ազատագրո՞ւմ:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Գողությունն էլ, լրբությունն էլ, սպանությունն էլ

մտքի, ձեռքի, խղճի ազատագրումն են:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Դու չե՞ս կարծում, որ հիմա, այս վայրկյանիս գբաղ-  
ված ես մտքի սպանությամբ:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Ես քո էդ ազատ մտքին խնդրում եմ վաղվա օրը  
գլուխու դնելու տեղի մասին լավ մտածել:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Բոլոր կարծամիտ-կարծառտերի պես՝ ուզում ես ինձ էլ  
հայրենիքի ծակը քշես - չմտանք:

(Տեր-Սարգսյանցը չի պատասխանում):

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Նու, սլավա բոգու, սլավա բոգու, ոեզ արմյանսկայա  
եշյո զվուչիտ, ի զվուչիտ, նադո սկազատ, պրեկրասն.

ԲԱՐԱԹՐՅԱՆ. (Դուռը բացում ու նայում է) Դու դեռ չե՞ս ծնկել: Մինչև  
չծնկես՝ ներս չես գալու:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Իսկ եթե ներս եկա՝ քեզ դուրս եմ անելու:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Ուրեմն՝ ներս չես գա:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Շարունակությունը:

ԱՆՏՈՆ. Ի՞նչ են անելու Անին և անցյալի հին ճարտարապետությունը  
ապագայի մեջ:

(Տեր-Սարգսյանցը չի պատասխանում):

ԱԲԵԼ. (Տեր-Սարգսյանցին) Ետևի կողմից մտմելու տեղ կա, քեզ տա-  
նեմ ցույց տամ:

ՎԱՆԱՐԱՅՐ. «Զեզ», «ձեզ տամե՞ն ցույց տամ». Ճեմարան ես գնալու,  
խոսել սովորիր:

ԱԲԵԼ. Ձեզ տամե՞ն ցույց տամ, ետևի կողմից մտմելու տեղ կա:

Տեր-Սարգսյանցը չի ենթարկվում: Գյուղացիների մեջ հանկարծ ծիծաղ է  
բռնկվում: Գյուղացիներից ոմանք չգիտեն ծիծաղի պատճառը և հարցնում  
են միմյանց. հասկանալի է դառնում մի երկու բառ. «Պոլոզը Վրաստան մի  
վրացի է տեսել»:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Անին չի մահացել, Անին մեռցվել է. ամենամեծ խնամքով վերակառուցված Անին ապագայի մեջ ապրում է իր բնական երկար մահը կամ անմահությունը: Դա կլինի ժամանակի և Անիի խաղաղ վեճ և իրենք կլուծեն իրենց խնդիրը. դա չի լինի Տաճկաստանի և Անիի կրիվ:

**ԱՆՏՈՆ.** Արդար լինելու համար ասենք, որ քանդել են թե քանդվել է բոլոր մահերն էլ ի վերջո բնական և բոլոր պատահականություններն էլ ի վերջո օրինաչափություն են:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Այո, դու էլ լուսին ես, վերևից նայում ես, քո տակ բոլոր մահերն էլ բնական են, որովհետև ինքու անմահ ես: Վիրավորը ես եմ, լուսնի տակ ես եմ քարշ գալիս ջուր գտնելու, ինձ համար բոլոր օրինաչափությունները պատահականություն են և իմ մահը ինձ համար աշխարհի ամենամեծ անարդարությունն է:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Մի հարցնող լինի՝ ո՞վ ես դու, ի՞նչ է քո նարմինը, իրենից ի՞նչ է ներկայացնում քո խղճուկ նարմնի միջի քո խեղճ կամքը:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Ես նա եմ, ով ուզում է հայրենիքի առաջ իր խիղճը մաքուր պահել:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ո՞ւր է հայրենիքը, ինձ ցույց տուր հայրենիքը, ես էլ եմ ուզում նրա առաջ իմ խիղճը մաքուր պահել:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Պիտի ստեղծենք:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ապակին անցնելու վրա այնքան ճանճ է սատկել:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Իմ խիղճը, ինչ էլ լինի, իմ առջև մաքուր կլինի:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Իմ խիղճը ինձ չի տանջում: Թող տանջի մեր հայրերի խիղճը: Ես ոչ մի կարողություն չունեմ նրանց պարտքերը մարելու:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** (Մեկուսի) Տեր աստված, վերացրո՛ թող չինի հացի հոգսը: Վերցրու հացի հոգսը՝ որ գեղեցիկ խոսելու րոպեին հացի

մեր հոգսը չճմլի մեր սիրտը: Ես պարոններին մենք էսօր ինչո՞վ ենք պահելու:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Դայի քո քթից ու քո չեղած ազգից բացի ոչինչ չես տեսնում:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Ուզում եմ տեսնել, տեսնել եմ ուզում այս մեծ աշխարհի, մարդկության այս մեծ հայրենիքի գեղեցկությունը, ու չեմ գորում, չեմ կարողանում. կանգնելու նայելու տեղ չունեմ, նստելու հանգստանալու թախտ չունեմ, ես ինչպես կարողանամ հիանալ ուրիշների թախտավորությամբ:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Այո՞:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Այո, ու իմ դժբախտության մեջ թույն ու թարախ է դառնում ուրիշի երջանկությունը: Կարծում եմ իմ հաշվին են երջանիկ:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Իմ գործը շինարարությունն է, ես վատ ճարտարապետ չեմ. իմ հայրենիքը Ռուսաստանն է, իմ խիղճը նրա առջև մաքուր է:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Քեզ նման էնքա՞ն կայսր Վասիլյուսը, լորիսմելիք-քովներ ու պարույրհայկազներ են եղել:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Վասիլ կայսերը դու մի հիշիր. դու եդ որտեղի՞ց ես հիշում եդ խեղճ ռամկի անունը. հայրենասիրության քո կոչին հետևել է ոմն գեղջուկ այդ Վասիլը՝ չի գնացել Բյուզանդիա, այլ շարունակել է արածեցնել Պահլավունիների ծիրը, և հանդում էլ մեռել է, և Բյուզանդիայի պատմության մեջ չի էլ մտել, կողքով էլ չի անցել, հայոց երամակի մոտ, հայոց հողում, սատկել է խեղճ գյուղացի այդ Վասիլը:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Այո, և հայոց հողը երկու արշին տեղ նրա վրա կանաչ է:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Չո գործն է. հայոց սուրբ հողը բարով կանաչի ձերդ

հայրենասիրության վրա:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. ԱՌ... Ռուսաստանի ճարտարապետության գահը բարով մաշի հայի նստուկդ:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Ին հայրենիքը Ռուսաստանն է, և իհարկե ռուս ճարտարապետության գահն է մաշելու հայի, ինչպես դու արտահայտվեցիր, մեր նստուկը:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Սպասենք էն օրվան, երբ սևիարյուրյակայինները կտրորեն հայի քո քիթը:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Կարծում եմ՝ մինչև այդ սոցիալիստները կհասցնեն տրորել սևիարյուրյակայինների քիթը:

ԱՆՏՈՆ. (Ներսիններին) Թողմեն ներս:

ՇՎԵԴՈՎ. Յա տակիխ րազգովորով նե պոնիմայու. Անհասկանալի զրույց է: Պարոն Տեր-Սարկիսյանցը տառապում է հայրենիքի թուլությամբ: Մենք մեր անձով հանդերձ ազատ ենք այդ կոնալեքսից: Աստված չտար: Իսկ այստեղ լավ բաներ շատ կան՝ արժանի մանրակրկիտ ուշադրության, և որոշ բաներ գուցե թե մտնեն իմ անձնական հավաքածու: Ներս թողեք այդ ստահակին:

ԱՆՏՈՆ. Յամեցիր:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Դու քո՛ մասին մտածիր. Էդ քանի՞ անգամ ես ծնվելու:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Ես՝ մի անգամ. դու՝ մի անգամ: Իսկ քո ու իմ ժառանգները քեզանից ու ինձանից հետո ծնվելու են հազար անգամ: Նրանց մասին մտածիր:

(Տեր-Սարգսյանցի ետևից ներս մտնող վանահորը դրների միջից Մագթաղը ետ է քաշում և դեմք կանգնում):

ՄԱԳԹԱՂ. (Անտոնը դուռը դեռ չի ծածկել) Յայր սուրբ, մի լուսե ընտանեկան խորհուրդ ենք հարցնում... (Անտոնը դուռը ծածկել է) Օրը գնում է, մեր գործն արա, հետո ներս կգնաս, ներսում քեզ

չեն սպասում:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ ՄԵԿԸ. Աճո՞ւրդ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Աճո՞ւրդ եք ուզում:

ՄԱԳԹԱՂ. Ոչ մի աճուրդ, մենք քարի ենք եկել:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Չհավատաս, հայր սուրբ, դրանք խոտհարք պո-  
կելու են եկել: Աճո՞ւրդ:

ՄԱԳԹԱՂ. Եկել են ճարտարապետին տանեն, ճարտարապետն էգուց  
գնալու է, էգուց դու մեռնելու ես - Սինոնը կանգնելու է խաչքարի  
կողքին՝ թե ես սրա պահա՞կն եմ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Էգուց ես չեն մեռնելու, ես անմահ եմ:

ՄԱԳԹԱՂ. Եդ բոլորս էլ ասում ենք անմահ ենք, բայց մեռնում ենք:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Դայր սուրբ, գիրքդ ու ակնոցդ բերեմ՝ բարկու-  
թյունդ գրքից կարդա:

ԱՍԱՏՈՒՐ. Զգիտեմ, հայր սուրբ, հիմա քարի մասին ի՞նչ ենք անում:  
Ես սել եմ բերել եկել:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դու սել ես բերել Անի՞:

ԱՍԱՏՈՒՐ. Բերել եմ, քարի համար եմ բերել:

ՎԱՆԱՐԱՅՐ. Չի լինի:

ԱՍԱՏՈՒՐ. Ես վատ մարդ չեմ, բայց դուք ինձ վատամարդ եք անում.  
Դե եթե չի լինի՝ մի փութ հացս տուր:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դու լավ գիտես, որ քո մի փութ հացը չկա, կերել ենք:

ԱՍԱՏՈՒՐ. Դացը չկա՝ ուրիշ բան կա, ինչ որ կա՝ են տվեք:

ՎԱՆԱՐԱՅՐ. Խաչը չի լինի:

ԱՍԱՏՈՒՐ. Չի լինի - ինչ որ կլինի՝ են տուր:

ՎԱՆԱՐԱՅՐ. Ի՞նչ:

ԱՍԱՏՈՒՐ. Դու ինքդ երկնքից ընկած սուրբ չես, հայր սուրբ, գյու-  
ղացի մարդ ես, խոտի նեղությունից երեք կովըս ջրի գնով հա-  
մարիր դեն եմ գցել:

ՎԱՍՎՐԱՅՐ. Խոտհա՞ղք:

ԱՍԱՏՈՒՐ. Խոտհարք, հայր սուրբ, բանի ու բանի արանքը, մի տասը  
սել խոտի տեղ - Կարուց դարպասների և Յովվավանքի:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Կարուց դարպասների խոտհարքը ես քեզ համար  
չեմ երեք տարի մեջք ծոելով մաքրել:

Ղանթափին ծաղկել է, հնձի ժամանակն անցնում է, հայր սուրբ:

Հայր սրբին բարկացնում ենք, լավ չենք անում:

ՎԱՍՎՐԱՅՐ. Ախր ո՞ւմ վրա բարկանամ, ո՞վ եք դուք, ե՞ս ով եմ, ես  
ո՞ր օրվա հայր սուրբն եմ, ամոթ էլ է... Ախար անասունի տիրոջն  
են հայիոյում, ով է ձեր տերը՝ որ ես հայիոյեմ... Դուք ինչո՞ւ եք  
էստեղ, ե՞ս ինչու եմ էստեղ, ի՞նչ գործ ունենք մենք Անիի հետ:  
Ո՞վ է ձեր տերը, բա անտեր ժողովուրդ կլինի՝ որ դուք եք: Ե՞ս եմ  
ձեր տերը: Գնչուի թափառական ցեղ՝ որ քոյլերին էստեղ թափել  
ու ինքը գնացել է: Անհավա՞տ, անաստվա՞ծ, անհո՞ւյս, չնշահա-  
վա՞տ՝ որ ոչ իրեն է հավատում, ոչ ուրիշի: Բա անհավատ  
ժողովո՞ւրդ կլինի՝ որ դուք եք: Ով եք եղել դուք և ով եք: Թե՞  
ոչինչ էլ չեք եղել - միշտ էսպե՞ս, իջևանի աղախնի պես... Մեղա,  
մեղա: Ոտքերիդ տակ Բագրատունի է թաղված, չքվիր էդտեղից:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Պա՞ա, եդ երբ էր:

Բայց Ասատուրն էլ կարգին աղվես է, մի փութ հացով... Երեք  
փութ հաց եմ տալիս, հայր սուրբ, Կաթողիկետի ու Գագկաշենի  
արանքը տուր ինձ:

Ա՞-ճուրդ:

ԱՍԱՏՈՒՐ. Մի փութ հաց եմ տվել՝ իմ էս ճակատի քրտինքն եմ տվել,  
խոտհարքին ի՞նքն ինչ է տվել:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Ինքը Բագրատունի է, խոտհարքն իրենց կալվածն  
է:

Աճո՞ւրդ:

ԱՍԱՏՈՒՐ. Յիմա էլ աճուրդ: Դարպասների և Հովվավանքի արանքը

եթե աճուրդի տակ գցեցիր, հայր սուրբ, ես խաչքարն եմ ուզելու:  
ՎԱՆԱՐԱՅՐ. Ե, թափ առ ու գլուխտ խփիր դեզին, թափ առ ու գլուխտ  
խփիր դեզին:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Ես աշխարհից քարը կտրվե՞լ է, հայր սուրբ, դեզի՞ն  
ինչու ես խփվում:

ԱՌ-ՃՈՒՐԴ: Ա-ՃՈՒՐԴ, ա-ՃՈՒՐԴ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դե, դե, դե, դե ժողովուրդ եք, հավաքվել եք, մի երգից,  
մի ուրախությունից, մի գեղեցկությունից... նայեն ասեն  
ժողովուրդ է:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. ԱՌ-ՃՈՒՐԴ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Դնում եմ աճուրդի, հանիր փողերդ: Փողերդ հանիր:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Դե որ փող լիներ՝ էլ ինչո՞ւ էինք քեզ էդքան  
սիրում, հայր սուրբ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Կատվի վազքը մինչև մարագն է:

ՏՂԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ. (Տղա խաղի հետ) Ֆի՞զարո, ֆիզարո, ֆիզարո,  
ֆիզարո, ֆի՞ի...

Ֆիզարո սոլ, ֆիզարո լյա...

Տղզզ...

Ոչնչացրինք:

Նիկոլի գեներալ զինվորը հոգոց հանգուցելոց:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Աշուղ Սուսեր, մի հատ բացվիր՝ հայր սրբի երեսի  
ժանգը թափվի:

ՄԻՄՈՆ. (Որդուն) Ի՞նչ եղավ, չտեսա՞ր: Յատիչը: Ես ո՞ւր դրի:

ԱԲԵԼ. Չեմ տեսել: Յայրիկ!... Օրինակ զարմանալի է, չէ՞ն, եսօր բոլորը  
կասիլ թագավորի մասին են խոսում:

ՄԻՄՈՆ. Այո: Ի՞նչ կասիլ:

ԱԲԵԼ. Բյուզանդացիների կասիլ թագավորը հայ է եղել. մեր

Յայաստանում թագավոր չի դարձել, իենց գնացել է  
Բյուզանդիա՝ դարձրել են թագավոր:

ՍԻՄՈՆ. Այո: Յատիչը, են անտերն ի՞նչ արի:

ԱՐԵԼ. Չգիտեմ: Յատիչը չեմ տեսել, ես թուրը մաքրում ու անընդհատ  
հիշում էի, որ բյուզանդացիների Վասիլ թագավորը հայ է եղել,  
մեկ էլ եկան ու իրենք էլ հիշեցին:

ՍԻՄՈՆ. Յայ է եղել, չէ մի՛ պապդ է եղել:

ԱՐԵԼ. Եկան ու իրենք էլ ասացին:

ՍԻՄՈՆ. Ի, այ որդի, Ռուսաստանում թագավոր ես էլ կղառնամ, դու<sup>1</sup>  
ասա կարողանամ եստեղ Սիմոն մնալ, թե չէ Ռուսաստան Վասիլ  
ես էլ կղառնայի: Դու ասա թագ լինի՝ ով ասես կղնի գլխին ու  
կղառնա թագավոր: (Նկատում ու գնում է դեպի վանքի պատին  
իր անունը փորագրողը):

ՎԱՆԱՐԱՅՐ. Անի եք եկել:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Անի ենք եկել, իո Թիֆլիսից ու Մոսկվայից չենք  
եկել՝ որ բերաններս բաց նայենք, մեր Անին է, ելի, մեր իին խոտ-  
հարքն է:

ճարտարապետն ու կաթողիկոսարանը որտեղ էին՝ որ Անին մեր  
խոտհարքն էր:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Տղերք, ասացիք կոիվ, ասացիք Թիֆլիս՝ հիշեցի...

Ե՞՛ Թիֆլիսի շուկայում դո՞ւ ես վրացի տեսել:

Վրացի, չէ, Պուլուզն է տեսել:

Յա, դու պանիր ես ծախել, դու պատրաստությունով կլինես  
եկած:

Չէ հա. մի երկու արշին չիթ-միթ առա՝ պրծավ:

Բաքվա ծովի էն կողմից չամիչ-ծախողներ էին եկել, կես-  
թուրքերեն կես-ռուսերեն մի քիչ խոսեցինք. ասում է Կավկազը  
լավ է, ոտդ ոնց փոխում ես՝ քար, իսկ մեզ մոտ վատ է, ասում է,

որ՝ ուղիղ, ավագ՝ դոռում, ասում է, մանր ավագ, մի քար չկա՝ մարդու գլխի խփես: Ինչո՞ւ խփես, ասում եմ: Դուզդիյերամ, ասում է, ճիշտ եմ ասում, չեմ խաբում, աննաթմցերամ, մի քար չկա՝ մարդու գլխի խփես: Մարդու գլխի բայց ինչո՞ւ խփես: Դուզդիյերամ, ասում է, ես խաբող մարդ չեմ, սուտն ինձանում չկա, յոխտուր, ասում է, ընկերոջը վկա է բերում - մալըն, ճիշտ չե՞մ ասում. ընկերն ասում է ճիշտ է ասում, մեզանում մարդու գլխի խփելու մի քար չկա, յոխտուր, ասում է, օն փրավիլնո գավարիտ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Եղան չի:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Բա ինչպե՞ս է, հայր սուրբ:

Օն փրավիլնո գավարիտ, հայր սուրբ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Եղան չի: ճարտարապետի հետ Արգինա էինք գնում, թուրքի կնիկը երգում էր: Ու շատ լավ էր երգում: Մարդի հետ՝ ամուսնու, հացի էին եղել, փողոցը դեռ փռած էր, ծիանը կապած արածում էին, ճամփի վրա էին, սարն էին գնում, իջել էին հացի: Չաց էին կերել, մարդը՝ ամուսինը, գլուխը կնոջ գոգին պառկած էր, ծիանը կապած արածում էին, կինը ամուսնու շեկ գլուխը գոգն էր առել ու երգում էր ամուսնու համար: Գնացք էր գնում, ֆուրգոն անցավ, մենք էինք, քարավան էր գալիս, իսկ նա՝ ոչինչ, իր ամուսնու համար երգում էր ինչպես թուրքի կինը միայն կարող է երգել - բարձր, գեղեցիկ, իր ամուսնով հպարտ: Եսպես է:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Գիշերվա գողության տեղից եղան աջող եկել է, ինչո՞ւ չպիտի երգել տար:

ՎԱՆԱՐԱՅՐ. Խաչքարի՝ գողության տեղից:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Խոտհարքն աճուրդի դիր՝ խաչքարի մասին խոսք չի լինի:

**ՎԱՍԱՐԱՅՐ. ԱՆԻՆ ԽՈՏԻՀԱՐՔ ՀԻ:**

**ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Եթե խոտիհարք է՝ եդ ո՞նց չի խոտիհարք, հայր սուրբ:**

**ՎԱՍԱՐԱՅՐ. Ժողովուրդ եք, հավաքվել եք - մի ուրախությունից, երգից, գեղեցկությունից... մարդ նայի փառավորվի:**

**ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Աշուղ Սուսեր, մի քեզ ցույց տուր՝ հայր սուրբը թող փառավորվի:**

**ԱՇՈՒՂ. Էսպես, իմ էս մութ երկրից ականջ եմ դնում - ու լավն եք, շատ եք լավը: Մեկն եղտեղ թուր է սրում, թուր էդ ո՞վ է սրում, թող սրի: Վանահայրն ասում է թուրքի կինը... բա իհարկե թուրքի կինը... համաձայն եմ, հայր սուրբ: Թաղթը հներից մի ջահել ձեն ասում է կամուրջն ինքը շինելու է: Խոտիհարքն էլ ենտեղ է ծաղկել, չգիտեմ դուք առնում եք, թե չէ - բուրմունքը գալիս է, մարդու սիրտ ուղղվում: Զնգո՞ւն, ջահել, գեղեցիկ, լավը... Բայց հենց ուզում եմ երգել՝ կոկորդս մեկը բռնում է: Ինչո՞ւ եք էղքան վատ, բուկըս ինչո՞ւ եք բռնում:**

**ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Բանիդ կաց, լավն ենք, դու երգիր:**

**ԱՇՈՒՂ. Բա եթե լավն եք՝ կյանքն ինչո՞ւ է էսքան վատ:**

**ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Կյանքը վատ չի, դու երգիր:**

**ԱՇՈՒՂ. Բա եթե վատ չի՝ ինչո՞ւ չեմ երգում:**

**ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Ուրեմն երգիչ չես:**

**ԱՇՈՒՂ. Ես Սայաթ-Նովան եմ, ո՞ւր է իմ Իրակլին:**

**ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Ես Իրակլին եմ, ո՞ւր է իմ Սայաթ-Նովան:**

**ԱՇՈՒՂ. Սայաթ-Նովեն ես եմ:**

**ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Երգիր, Սայաթ-Նովա:**

**ԱՇՈՒՂ. Կյանքը վատ է, ես ինչպե՞ս երգեմ:**

**ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Երգիր, թող լավանա:**

**ԱՇՈՒՂ. Դուք էիք լինելու իմ ուժը, իմ ուժը ես ո՞ւմից առնեմ:**

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Քո ուժը դու քեզանից առ:

ԱՇՈՒԴ. Ե՛, Չինաստանից մինչև Եվրոպա թուրքը երգում է՝ ու թուրքի կինը երգում է, ինձ համար ով է երգում՝ որ ես էլ երգեմ:

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. Ե՛, աշուղ քուչակից մինչև աշուղ Զիվանի քեզ համար երգում են, խառնվիր, հետները երգիր:

ԱՇՈՒԴ. Ես քո Տիգրան թագավորիդ... ի՞նչ գործ ունեիր, ոտ մեկ-նեցիր Յօնմի հետ. իրեն Կովկասը՝ սիրուն ցեղեր, ազատ տեղեր... բեր խառնիր, ազգդ քաջացրու, սիրունացրու, ի՞նչ ես գնում, Յօնմի թուչի տակ ընկնում:

ՏՂԱԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ. (Իրենց մեջ) Փախավ, չէ՞: (Աշուղին ծիծաղով) Փախա՞ր...

ԱՇՈՒԴ. Զա՞ն, զնգոցով ծիծաղում եք, մեռնեմ ձեր զնգոցին: Անդ-րանիկ տղա, պապի վրա դու էլ ես ծիծաղում չէ՞, զրնգալեն: Պա-պը մատաղ ձեր ծիծաղին:

Սահմանապահ զորքերի սպան դանդաղ առաջանում, մոտենում, կանգնում մի քիչ նայում է, ապա ետ է դառնում և դանդաղ հեռանում:

Ես ինչո՞ւ սսկվեցիք, ձեն չեք հանում: Ես ի՞նչ պատահեց: Ես ի՞նչ պապանձնունք է: Անդրանիկ...

(ճարտարապետը մտել է կացարան, արդեն ծանրացել են: Նատաօ՛ լուս նայում են ճարտարապետին: ճարտարապետը թույլ է տալիս իրեն նայել: Ապա գլուխը բարձրացնում և յուրաքանչյուրին նայել է սկսում ինքը: Բահաթրյանից բացի բոլորը հայացքները փախցնում են: Բահաթրյանը և ճարտարապետը լուս նայում են միմյանց):

ՇՎԵԴՈՎ. ճարտարապետ Աբելը ահարկազդու նայում է: Բայց ճարտարապետ Բահաթրյանը անազդեցիկ հանդուրժում է:

ԱՆՏՈՆ. Ասում էին վատ ես ապրում, ճարտարապետ, բայց էնքան էլ վատ չես ապրում. հագուստդ կարգին է, կոնյակ՝ ունես, գրա-նոֆոն էլ ունես, իսկ եստեղի բնությունն էլ, դե աստված տվել է:

**ԱՐԴԱՐԱՊԵՏԸ.** Այո: (Շողերին, ծխախոտ փաթաթելու մասին)

Սիմոնին ասա մի հատ...

**ԱՆՏՈՆ.** Ես էլ ասում եմ ինչ եմ մոռացել: Մոռացել եմ քեզ համար ծխախոտ բերել: Ես էլ ասում եմ կարևոր ինչ եմ մոռացել:

**ԱՐԴԱՐԱՊԵՏԸ.** Ոչինչ, ծխելիքի նեղություն չենք քաշում, Սիմոնը փաթաթում է:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Այս նե կուրյու. Պրոբովալ, ո՞ո րանշե, չեմ պրիվյկնուտ, օբնարումիլ, չտո նե տե ուժե ու մենյա գողի.

**ԱՐԴԱՐԱՊԵՏԸ.** Այո:

**ԱՆՏՈՆ.** Ասում է ես չեմ ծխում, ծխող չեմ, ծխել դեռ չեմ սովորել՝ տեսա որ արդեն մեծ եմ, ծերունի եմ:

**ԱՐԴԱՐԱՊԵՏԸ.** Այո:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Նո յա նե տակ ուժ ստար... Սուբյուր բըվատ սրեդի մոլոյոժի. Ետո պոմոգաետ սոխրանիտ միսլի ի դաժե, յա բը սկազալ տելա, դա, տելա... Ի յա ս պրեվելիկին ուղովոլստվիեմ պրեդպրինյալ էտու պոեզդկու նա րոդինու մոհիս պրեդկով վ օրշեստվե ստոլ պրիյատնիս մոլոդիս լուրեյ.

**ԱՐԴԱՐԱՊԵՏԸ.** Այո: Ոուսերեն չեմ հասկանում:

**ԱՆՏՈՆ.** Ասում է ծեր եմ, բայց ծերունիներին չեմ սիրում: Ասում է սիրում եմ երիտասարդների մեջ լինել, դա միտքը և մարմինը թարմ է պահում:

**ԱՐԴԱՐԱՊԵՏԸ.** Ինքը ոռ՞ւս է:

**ԱՆՏՈՆ.** Ինքը հայ է, հին Արդությաններից է, ինքը հանձնաժողովի նախագահն է:

**ԱՐԴԱՐԱՊԵՏԸ.** Այո, դրանց կեսը էստեղ է թաղված:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Օն չտո՞, նի սլո՞վա նե պոնիմաետ պո-րուսսկի.

**ԱՆՏՈՆ.** Ասում է ռուսերեն չե՞ս հասկանում: (Արգուտինսկուն) Նետ, նե պոնիմաետ. (Խմելու նշանով Շողերին բան է հասկացնում):

**ճԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** ՈՒԼԱԵՐԵՆ չեմ հասկանում: (Անտոնին, Արգուտինսկու մասին) Ինքը չգիտի՝ գերմաներեն:

**ԱՆՏՈՆ.** Ինչի՞դ է պետք: (Արգուտինսկուն) Օ՛ սպրաշիվաետ, զնա՞ետե լի վը նեմեցկի.

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Ա չտո՞՝, նեռւժելի՞ օն սամ զնաետ.

**ՃՎԵՂՈՎ.** Օտկո՞ւղա եմու թեղնոնու զնատ նեմեցկի.

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ի՞նչ է ասում:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Պոչեմո՞ւ ժե օն սպրաշիվաետ.

**ԱՆՏՈՆ.** Ասում է գերմաներենի մասին ինչո՞ւ հարցորի: (Շողերին, որ նրան ջուր էր տալիս) Կոֆե ուզեցինք, Մարիամ:

Շողեր. Կոֆե...

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ոչինչ: Պրոֆեսորի նամակը չգիտեմ իր ծառայության համար ինձնից շնորհակալությո՞ւն է ուզում, թե՞ իմ աշխատանքի դիմաց վարձ է հատկացնում. Երեք հազար նկար եմ տրամադրել:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Չտո՞ օն գովորիտ.

**ՃՎԵՂՈՎ.** Ո՞ւր է քո այդ չարաբաստիկ նամակը:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ինչո՞ւ չարաբաստիկ: (Դարակի գրքի արանքից վերցնում է նամակը, որ Բահաթրյանը տալիս է Տումանովային):

**ՃՎԵՂՈՎ.** Ոչինչ, հայերեն այդպիսի մի քանի բառ ես շատ եմ սիրում: Զոհաբերություն: Զոհաբերությունը, զոհաբերելը հայկակա՞ն հասկացություն է:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** (Շվեդովին) Դուք Բահաթրյա՞նն եք:

**ԲԱՀԱԹՐՅԱՆ.** Բահաթրյանը ես եմ:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Այո: (Սպասելով նամակի թարգմանությանը, սևոված նայում է Տումանովային):

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Չտո տը նե զնայեշ րուսկողո - ետո, յա դումայու, նե բեդա. Ի չտո նե զնայեշ նեմեցկողո - տոտե. Տը զնայեշ

յազիկ, կոտորիյ պրեղիկի մոհ պոտերյալի նա պուտյախս ստրան-  
ճիշեսկոյ սվոյեյ ժիզնի, կոտորիյ օնի նե դոնեսլի դո մենյա - տը  
զնայեց յազիկ սամոգոն Նոյա. (Սպասում է թարգմանվելու) Պերե-  
վեդի ենու.

ԱՆՏՈՆ. Ինքը հանձնախմբի նախագահն է, ինքը հայ է: Ասում է՝  
գերմաներենի քո չիմացությունը ինքը թերություն չի համարում:  
Ասում է՝ գերմաներենի մեր իմացությունը մեզ համար արժանիք  
չէ, քանի որ գերմաներենը աստվածաշնչի լեզուն չէ: Ասում է՝ դու  
գիտես Նոյի լեզուն:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Այո:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Նաշ պրարոդիտել Զարմայր ուչաստվովալ... Պե-  
րեվեդի, պերեվեդի...

ԱՆՏՈՆ. (Թարգմանում է Արգուտինսկու խոսքին գուգահեռ) Մեր  
Զարմայր նահապետը մասնակցել է հոներոյան տրոյական  
պատերազմին, որ զոհվել է Տրոյայի պարիսպների վրա, ճիշտ է,  
ոչ հանուն Յայաստանի, բայց հանուն առհասարակ ազա-  
տության: Ցանկալի կլիներ ապացուցել, հաստատել, որ  
Զարմայր մեր նահապետը ընկել է Աքիլլեսի նետից. հատկապես  
Աքիլլեսի և ոչ թե որևէ անպետքի:

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Այո:

ՇՎԵԴՈՎ. (Քարտեզի դեմ) Մեծ Յայաստանի պատկեր այնուամենայ-  
նիվ նկարել եք:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Իլի Օդիսսեյա.

ՏԱՐՏԱՐԱՊԵՏ. Ծնորհակալություն:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Չոտ՞ օն սկազալ.

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. (Արգուտինսկում) Օն վսյո պոնիմայետ, պոնի-  
մայետ. (Բահաթրյանին) Եդ իհմարությունները դու թարգմանիր,  
որպեսզի երբ ծերանաս ու Անի գաս՝ չկրկնես:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Դու ինձ արդեն վիրավորում ես:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Բոլոր բանակներում, նույնիսկ բոշաների բանակում, դավաճաններին ոչ թե վիրավորում, այլ սպանում են:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Դու ինձ մի բան հասկացրու. իմ կյանքը, իմ մարմնի միջի իմ կյանքը ի՞մ կյանքն է թե քոնը կամ մի ուրիշինը:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Եթե դու ես ստեղծել՝ քոնը:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Պերեվորի, պերեվորի... Զդես պրիստալ կովչեգ պրաօտցա Նոյա.

**ԾՎԵՇՈՎ.** (Թարգմանում է Արգուտինսկու խոսքին գուգահեռ) Կամ Ոդիսևսի նետից է ընկել ձեր նահապետ Զարմայրը Տրոյայի պարիսպների վրա և ոչ թե որևէ անպետքի: Յայերի հեծելազորը պարթևական բանակի մեջ գրոհել է Ալեքսանդր Մակեդոնացու փաղանգները: Ինձ թվում է այժմ ես լսում եմ գրոհող հեծելազորի դոփյունը: Որ քրիստոնեությունը առաջինը հայերն են դարձել պետական կրոն: Եվ որ պատմության բոլոր փոքրիշատե մեծ դեպքերը խաչվել են ոչ առանց հայերի մասնակցության - դա Լենգ-Թեմուր է թե... Չինգիզ-Խան է թե... Վասիլիկոս կայսր է թե... Բոնապարտի փառք է թե... Սուվորով:

Սուվորովի մայրը հայ էր և մոր կողմից, ասում է, Արդության, ասում է, մեր տոհմի աղջիկ:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Դա, յա արմյանին ի գործուս էտիմ.

**ԾՎԵՇՈՎ.** Մեծ Յայքի պատկերը նկարել եք, բայց սահմանները չեք նշանակել, ինչո՞ւ: «Սահմանք քաջաց՝ զենք յուրյանց»: (Արգուտինսկու) Նու օն պանիմայետ, պանիմայետ, սպակոյտես:

Պետրոս մեծի ուսերին նստել ու պարծենում է, թե ինչ բարձրահասակ հայ է:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Այո, բառեր, բառեր:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** (Բահաթրյանից) Ինչո՞ւ եկեղեցին ինքնասպան-

Աերին չի թաղում, գիտե՞ս:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Ես տերտեր չեմ: Ես զգիտեմ, թե Եկեղեցին ինչու չի թաղում ինքնասպաններին:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Շատ բարի, ես տերտերի տղա եմ: Եկեղեցին ինքնասպաններին չի թաղում, որովհետև ինքնասպանությունը համարում է անբարոյականություն, որովհետև ինքնասպանդ ձեռք ես բարձրացրել ուրիշի ստեղծած կյանքի վրա: Դու մարդասպան ես, որ կողմից ուզում ես նայիր՝ դու սովորական մարդասպան ես, Եկեղեցին ահա թե ինչու է երես դարձնում ինքնասպանի քո մարմնից:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Տերտերների քո Եկեղեցին վախեցնում է իր ստրուկ-ներին անբարոյականության անունով, որպեսզի նրանք ինքնասպան չլինեն ու ազատվեն այս շան կյանքից, այլ ապրեն ու աշխատեն Եկեղեցուդ համար:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Ազգային իմ շան կյանքը իմ ազգը չի ստեղծել:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Ով որ ստեղծել է անտանելի է. թող կեցցե նա, ով տանում է, տանողը ես չեմ:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Դու բարոյական իրավունք չունես չտանելու:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Էդ արդեն իմ գործն է:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Գոսպոդ դարովալ նամ շշեդրոյ սվոեյ դեսմիցեյ...

ՇՎԵԴՈՎ. Ասում է՝ Եվրոպայում Հայաստանն իզուր չեն համարում, անվանում, կոչում ասիհական խավարի մեջ քաղաքակրթության ջահակիր, Եղա՛վ, առաջանարտիկ, չեղավ, փարոս, ջահ - լավ բառերը հայերենում ի՞նչ շատ են:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Դա, եստ չեմ գորդիտսյա.

ՇՎԵԴՈՎ. Ասում է՝ ահա թե ինչու եմ հպարտ:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Այո, հասկանում եմ:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. Ի յա գորժուս.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** (Բահարյանին) Սաշա, մո՞ժնո տերյա նա մինու-  
տոչկու.

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏ.** Ի՞նչ է գրել:

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Զեզ գովում ու շնորհակալություն է հայտնում: Բայց մի  
երկու բառ կա՝ լավ չեմ հասկանում, Սաշայի հետ պարզենք, ու  
կրազմանեմ ձեզ համար: Սաշա, մնե նուժնո չտո-տո տերե-  
սկազատ.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Օն վսե րավնո նե պոնիմայետ պո-րուսսկի, գովորի  
չտո խոչեշ.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Տրուղմո, Սաշա, օն սմոտրիտ.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Նո վեդ օն նիշեգո նե պոնիմայետ. Խոտ րուգայ եգո -  
վսե րավնո նե պայմյոտ.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Նո էտո ժե նաստոյաշչի գրաբեժ, Սաշա.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ռանո իլի պողընո եմու պերեվեդուտ. Վ չյո՞մ դելո.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Պրիեխալ այուդա, Ժիլ զդես - նե նազիվայ ինյա - զաք-  
րալ ու էտոգո չերտյոժի, րիսունկի, դոգովորիլսյա, չտո կնիգու  
բուտետ պեչատատ - ինյա նե նազիվայ - վ սոավտորատվե ս նիմ,  
չտո դենգի պոդեյատ պորովնու նա դվոիխ, ա տեպեր սոռը-  
շշաետ, չտո, մոլ, պոսկոլկու էտոմու նեդոստաետ վիսշեգո սպե-  
ցիալնոգո օքրազովանիյա, օն սչյոլ բոլեե ուդոբնիմ պոմեստիտ  
եգո ինյա վ պրիմեչանիի վ ստրանիցե 125. Ա էտոտ դումաետ,  
չտո րեչ օ 125 տիսյաչախ.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Գրաբեժ, կոնեչնո. Նո էտոնու ի նե դոգադատսյա.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Զա պրեդոստավլեննի վ եգո րասպորյաժենիե սիրոյ  
մատերիալ, տը տոլկո պոդումայ, Սաշա, իմեննո տակ ի նապի-  
սանո, զա սիրոյ մատերիալ օն պլատիտ էտոմու այատսոտ  
կրոն, պրիչյոն զա տրիստա այատդեսյատ իզ նիխ ժե պոսիլաետ  
եմու օդին եկզեմալյար էտոյ սամոյ կնիգի. Դումայու, գովորիտ,

չտու վաճ դրստավիտ ուղղվոլստվիե սոբատվեննիմի գլազամի ուվիդես կնիգու, կոտորոյ յա պոսվյատիլ տրի գոդա. Եշյո ստո կրոն, գովորիտ, ուշլո նա պոչտովիե րասխոդի, տակ չտո էտոնու պրիչիտաետսյա տեպեր այատդեսյատ կրոն. Սկո՞լկո էտո - այատդեսյատ կրոն. Օն սմոտրիտ նա մենյա, Սաշա, օտվլեկի եգո չեմ-նիբուդ.

**ՇՎԵԴՈՎ.** Զա պրատդեսյատ կրոն մոժնո պոկատատսյա նա տրամ-վաե ի պոյութռվատսյա վ օկնո նա Վենու.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Նե սմոտրի նա նեգո, Սաշա. Կա՞կ ժե մնե պերեվեստի էտո պիսմո.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ա ե՞ստ վ նյոմ խոտ կակիե-նիբուդ իզըյավլենիյա բլա-գոդարնոստի, խոտ դվա-տրի սլովա կրասիվոյ լժի.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Պիշետ, չտո կնիգա ուժե պերեդտալա նա սուդ կուլ-տուրնոգո միրա, չտո օն, տո եստ էտոտ, նավերնու ի նե պոմիշ-յալ տակոյ վոզմոժնոստի, պոսկոլկու սամ սպեցիալնոգո օքրա-գովանիյա նե իմեետ, յազիկով նիկակիխ նե զնաետ, բեզըյա-գիկիյ, նա սփեմ ժե յազիկե նիշեգո իզդատ նե սմոգ բջ, տակ չտո, մոլ, պրինոսյա բլագոդարնոստ զա օկազաննույու պոմոշ ի նե բեզ ուղղվոլստվիյա վսպոմինայա Անի, մը սչիտայեմ նաշ տրուդ դոստոյնիմ օքրազոմ զավերշեննիմ ի օստաենսյա վ օժի-դանիի սուդա սպեցիալիստով ի պրիզնատելնոստի արմյանսկոգո նարոդա.

**ՇՎԵԴՈՎ.** (ճարտարապետի մասին) Նու ի տուպոյ ժե մալը.

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Ոուսաց լեզուն չեմ հասկանում:

**ՇՎԵԴՈՎ.** Ասում եմ վ Ռյազանի եղյատ գրիբի ս գլազամի, իխ եղյատ, ա օնի գյաղյատ.

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏ.** Ոուսերեն չեմ հասկանում:

**ՇՎԵԴՈՎ.** Ասացի. Ռյազանում ուտում են, խժոում են աչքեր ունեցող

սմկեր, աչքավոր, ականավոր, ոչ... Ոյազանում ուտում են  
աչքավոր սմկեր, նրանց ուտում են, իսկ նրանք նայում են:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Այո: Սունկե՞՞րն են նայում:

**ՇՎԵԴՈՎԸ.** Սունկերը: Սունկերը նայում են, իսկ նրանք ուտում են,  
խժում են նայող այդ աչքերը նույնպես:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ուուսաց լեզուն չեմ հասկանում:

**ՇՎԵԴՈՎԸ.** Ես ձեզ համար ճշգրիտ հայերենի բարգմանեցի. Ոյա-  
զանում խժում են աչքավոր սմկեր, նրանց խժում են, իսկ  
նրանք նայում են: Քանի՞ նկար ես տրամադրել բարոն  
պրոֆեսորին:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Մի լիքը սայլ: Ի՞նչ է գրում:

**ՏՈՒՄԱՆՈՎԱԸ.** (Բահարյանին) Սաշա, տօյ պոնյատիյա նե իմեեշ, վ  
կակիխ ուսլովիյախ օն րաբոտաետ.

**ԱՆՏՈՆԸ.** Մարիամ, կոֆեն ի՞նչ եղավ:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Եղբայր, դուք մեզ մի շփոթեցրեք: Կոֆեի երկու բա-  
ժակ ունենք, աղջիկը չգիտի կոֆեի երկու բաժակը քանի կտոր  
անի՝ որ բոլորին միասին կոֆե տա:

**ԱՐԳՈՒՏԻՆԱԿԻԸ.** Օ չյո՞ն րեչ.

**ԱՆՏՈՆԸ.** Մեր բեռներն, ի միջի այլոց, Ալեքսանդրապոլ են, Ալեքսանդ-  
րապոլից բերելու են սայլով: Մնալու ենք, ըստ երևույթին, մի շա-  
բաթի չափ:

**ՏՈՒՄԱՆՈՎԱԸ.** Վեյ պրոստո նե զնաետե, վ կակիխ տյաժելիխ  
ուսլովիյախ օն ռաբոտաետ.

**ԲԱՐԱԹՐՅԱԸ.** Զնայու, վիժու, րաբոտաետ օն վ տյաժելիխ  
ուսլովիյախ.

**ՏՈՒՄԱՆՈՎԱԸ.** Նետ, վ բոլեե չեմ տյաժելիխ.

**ԲԱՐԱԹՐՅԱԸ.** Դա, վ բոլեե չեմ տյաժելիխ, նո մնե սովերշեննո նե-  
պոնյատնո, չեգո րադի ի պոչեմու օն ստարաետսյա.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Տո եստ կա՞կ էսո - պոչեմու.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ա տերե էսո իզվե՞ստնո.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Սաշա, վեդ տոտ դրուգոյ օգրաբիլ էտոգո.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Օգրաբիտ-տո օգրաբիլ ի օչեն ժալ, կոնեչնո, նո սուտ գրաբեժա մնե սովերշեննո նեպոնյատնա.

**ԱՐԳՈՒՏԻՆՆԿԻ.** (Շողերի մասին, որ ճրան սուրճ էր տալիս) Կրասավիցա. Լյուբյու մոլոդոստ, յուրբյու պուտեշեստվովատ և մոլոդեժյու, յուրբյու չուվստվովատ սեբյա մոլոդիմ. Նո, կոնեչնո, վովսե նե սորիայուս ժենիտսյա նա մոլոդոյ, սլիշկոմ մոլոդոյ ժենշինե.

**ԱՆՏՈՆ.** (ճարտարապետի համար) Ասում է՝ սիրում եմ երիտասարդ-ների մեջ լինել, բայց իհարկե չեմ ամուսնանա շատ երիտասարդ կնոջ հետ: Մարիամի մասին ասում է գեղեցկուիհի է: Ինքը հանձնախմբի նախագահն է, ինքը հայ է:

**ՖԱՐՏԱՐԱՊԵՏ.** Այո, պրոֆեսորն էլ էր ասում: Պրոֆեսորն էլ, Շողերի մասին, ասում էր գեղեցկուիհի է:

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Սա՛շա.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ի՞նչ է:

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Նետ, պո-րուսսկի. Տոտ դրուգոյ օգրաբիլ էտոգո.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Լադնո, օգրաբիլ. Նու ի չտո՞.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Օն օգրաբիլ չելովեկա, կոտորիյ րարոտաետ վ օչեն ի օչեն տյաժելիխ ուսլովիյախ.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Չտո՞ ժե իմեննո դելաետ էտոտ չելովեկ վ օչեն ի օչեն տյաժելիխ ուսլովիյախ.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Յա նե զնայու. Էտո տը արխիտեկտոր, տերե ի զնատ.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Յա տոժե նե զնայու.

**ՏՈՒՄԱՆՈՎԱ.** Տը նե խոչեշ զնատ, տը նե ժելայեշ պոնիմատ, չտորը կրեաչե սիդետ նա սվոիխ րուբյախ.

**ԲԱՐԱԹՈՅՅԱՆ.** Տոչմո. Յա նե սորիրայուս տրատիտ սվոհի րութի նա  
ժենշեն դյա կակոգո-տո դրյախլոգո ստարցա - դյա տվոեցո  
ցերկովնոգո զողչեստվա.

**ՇՎԵԴՈՎ.** Պրոշու պրոշենիյա, նո գովորիտե, պոժալույստա, պո-  
արմյանսկի.

**ԲԱՐԱԹՈՅՅԱՆ.** Մի խոսքով քո պրոֆեսորից... Նու կա՞կ մնե  
վտոլկովատ տակոմու իդիոտու...

Գյուղացիների միջով, Սիմոնի կողքով, բերանը գույնզգույն շորով կապած  
փոքրիկ մի դույլ ձեռքին, գալիս ու առանց դուռը ծեծելու կացարան է  
մտնում տապր-տասներկու տարեկան մի աղջնակ: Օտար այդքան մարդ  
տեսնելով՝ աղջնակը զարմանում է. «Վա՞յ»:

**ԾԱՐՏԱՐԱՊԵՏ.** Դու՞ ես: Մածո՞ւն ես բերել:

**ԱՂՋԱՆԱԿ.** Վայ, նոր շորեր ես հագել:

**ԾԱՐՏԱՐԱՊԵՏ.** Հագել եմ: (Կանչում է) Շորեր:

**ԱՂՋԱՆԱԿ.** Տատն ասում էր կովը ցամաքում է, մածուն դրա համար են  
թիշ-թիշ ուղարկում: (Շորերը գալիս, աղջնակի ձեռքից վերցնում  
տանում է դրոյլը, աղջնակը սակայն դեռ կանգնած է այդտեղ):  
Գիշերները մի գրիր, վաճքերի գլուխն էլ հողեմ, աչքերդ ափսոս  
են, գիշերները մի գրիր:

**ԾԱՐՏԱՐԱՊԵՏ.** Եդ դո՞ւ ես ասում, թե՞ տատն էր ասում:

**ԱՂՋԱՆԱԿ.** Տատը: Ասում էր գիշերները լույսդ երևում է, վաճքերի  
գլուխն էլ հողեմ: (Լուռ Շորերը գալիս է աղջկան դուրս  
տանելու): Տատն ասում էր ամանը ետ կրերես, չմոռանաս:

**ԱՍՏՈՒ.** Պա՞ան ինչ էր ասում, պապը բա՞ն չէր ասում:

**ԱՂՋԱՆԱԿ.** Պապն ասում էր թութունը հասնում է, պրծնելուց չվա-  
խենաս, ինչքան կարում ես ծխիր, հատնելուց չվախենաս, մեկ էլ՝  
չմոռանաս, հայր սրբից մեզ համար հնձելու մի լավ տեղ վերց-  
րու՝ մինչև հայրիկը մշակությունից գա, հայրիկը մշակության է

գնացել:

ՅԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Լավ:

ԱՂՋԱՆԱԿ. Էսօր աճուրդ է լինելու:

ՅԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Լավ, կվերցնեմ:

ԱՂՋԱՆԱԿ. Աճուրդն ի՞նչն է:

ՅԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Լավ: Խոտհարք կվերցնեմ, մինչև հայրիկը մշակությունից գա:

ԱՂՋԱՆԱԿ. Նոր շոր ես հագել:

ՅԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Հագել եմ:

ԱՂՋԱՆԱԿ. Իրենք են բերել, չէ՞, իրենց հետ:

ՇՎԵԴՈՎ. Մենք բերել ենք, որպեսզի հազգնենք, զրուցենք, հետո հանելու ենք յուր հագից և տանենք:

(Շողերն աղջնակին դուրս է բերում):

ՇՈՂԵՐ. Թաղեմ քեզ, են մարդուն խայտառակ արիր:

ՎԱՍԱՐԱՅՅՐ. Ինչի՞ են եկել, հարս, ի՞նչ էին ասում:

ՇՈՂԵՐ. Խոսում էին, հայր սուրբ, բայց ես բան չէի լսում. սուրծ ուզեցին՝ բաժակների համար շատ ամոթ էր: (Սիմոնին) Բոլորը քո պատճառով, մի քանի բաժակն ինչ է: Շաքարն էլ էնտեղ վերջացավ:

ՎԱՍԱՐԱՅՅՐ. Անհարմա՞ր չի լինի, հարս, եթե ներս գնամ:

ՇՈՂԵՐ. ճարտարապետը նեղվում էր:

ՎԱՍԱՐԱՅՅՐ. Ի՞նչ էր ասում:

ՇՈՂԵՐ. Չգիտեմ, հայր սուրբ, նոր շոր է հագել, վայ թե նեղություն էր տալիս, նեղվում ու բարկանում էր:

ՎԱՍԱՐԱՅՅՐ. Նեղվում ու բարկանում էր: (Վճռում է ներս գնալ, վարանում է): Են անտեր ակնոցը հիմա ուր կորավ:

(Պարան ցատկելով՝ աղջնակը կանգ է առնում Աբելի մոտ՝ որ մաքրում է

թուրը):

**ԱՂՋԱՆԱԿ.** Եղ ի՞նչ ես անում: (Պարան ցատկելով) Թուր ես մաքրում: (Ցատկելով) Ամբողջ ժամանակ մաքրում ես: (Ծիծառելով) ճարտարապետ ես դաշնալու, թութուն ծխես:

**ԱԲԵԼ.** Մի խանգարիր:

**ԱՂՋԱՆԱԿ.** (Պարանի մեջ ավելի ու ավելի արագ ցատկելով) Ամբողջ ժամանակ մաքրում ես:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. (Օղեվաճառի մոտ մի բաժակ օղի խմելուց հետո) ԱՌՈՒՐԴ:

**ԱՂՋԱՆԱԿ.** (Ցատկելով) Մաքրում ես, մաքրում ես, մաքրում ես...

**ԱԲԵԼ.** Հո՛պ:

(Աղջնակը քարանում է):

ՇՈՂԵՐ. (Սիմոնին) Ժողովուրդն ապրում է: Տեղից տեղ է գնում, նայում, տեսնում է, գուգվում-զարդարվում, ուտում-խնում է - դու նստել ես ու՝ չըխկ, չըխկ, չըխկ... Կոնսերվի ամանով ջուր ես ծծում ու գոհ ես, ասում ես ապրես: Կոնսերվի ամանով հյուրերին սուրճ տամ կասես տուր, ինչ կա որ, ծակ չի: Խեղդվում եմ, օդ չկա, խեղդվում եմ, դու ես ինձ խեղդում:

ՍԻՄՈՆ. Աշխատում եմ, մի խանգարիր:

ՇՈՂԵՐ. Աշխատում ես, աշխատում ես՝ ո՞ւր է աշխատածդ:

ՍԻՄՈՆ. Քեզ համար գիտե՞ս ինչ եմ գտել: Որ իմանաս քեզ համար ինչ եմ գտել՝ կուրախանաս: (Խաչքարի վրա ցույց է տալիս) Քեզ համար եմ գտել, նայիր: Երկու տառ - Մ Ա...

ՇՈՂԵՐ. Երեխայիդ տուր՝ թող ուտի: ճարտարապետիդ տուր՝ թող հազմի: Տառ է գտել:

ՍԻՄՈՆ. Երեխան սոված չի, ճարտարապետն էլ հագուստի համար չի էղպես նեղվում:

**ՇՈՂԵՐ.** Բա ինչի՞ համար է նեղվում: (Դասկանում ու բռնկվում է)

Հիմարի մեկը: Իմ հերնումերն ինձ տղամարդու են տվել:

**ՍԻՄՈՆ.** Ես չխէչխացնում եմ ու աշխարհն էլ մեծ է, մարդիկ էլ հագնվում են, Թիֆլիսն էլ սիրուն քաղաք է - եղքանը լավ գիտես: Եղքանը ես էլ գիտեմ: Եղքանը գիտենալու համար ոչ գլուխ ու ոչ էլ սիրտ է պետք: Անասունը դնչի տակի խոտը թողնում, արտին է վազում - արտը խոտից համով է: Թիֆլիսը թիֆլիսցիներինն է, մեր տունն էլ ես է: Իսկ ինչը որ չես հասկացել, ասելով էլ չես հասկացել - եղ ուրեմն մեր գործը մարդու հետ չի:

**ՇՈՂԵՐ.** Զիու հետ է որ երկու օրով հարևանին փոխ են տալիս:

**ՍԻՄՈՆ.** Քո մասին ենք խոսում: Դու Շողերն ես: Ես լի, մեծ աշխարհում մի երեխա ունեմ ու մի Շողեր:

**ՇՈՂԵՐ.** Յայր սրբին հինա կասեմ:

**ՍԻՄՈՆ.** Ասա: Վանահորն էլ ասա, ռուսներին էլ ասա, ժողովրդին հավաքիր գլխիդ՝ ժողովրդին էլ ասա, բայց նախ և առաջ քեզ ասեիր:

**ՇՈՂԵՐ.** Խեղդվում եմ, խեղդվում եմ, օդ չկա, խեղդվում եմ, դու ես ինձ խեղդում: (Արտասվում է):

**ԱՊՁԱԱԿ.** (Աբելի մասին) Թուր է մաքրում, ամբողջ ժամանակ մաքրում է:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** (Շողերին) Ինչո՞ւ ես լաց լինում, հարս, ի՞նչ է եղել:

**ՍԻՄՈՆ.** Ոչինչ, հայր սուրբ, ասում է՝ ի՞նչ հարմար, ինչքան գեղեցիկ բնակարան է մեր մարմինը և ինչու է պարապ, ինչու մարդ չի ապրում մեր մարմնի գեղեցիկ բնակարանում:

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Փղշտացի:

**ՍԻՄՈՆ.** Յայր սուրբ, եթե իմանաս քեզ համար ինչ եմ գտել... (Խաչքարի վրա ցույց է տալիս):

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Ակնոցը կորցրել եմ. Աբրահամ նահապետը զոհաբերո՞ւմ

է իր զավակը, մորթո՞ւմ է իր զավակը աստծու համար, մատաղի խո՞յ, զոհի գա՞ռ:

ՍԻՄՈՆ. Չե՞ս տեսնում:

ՎԱՆԱՐԱՅՐ. Տեսնում եմ զոհի գառ, թե՞ արօիվ:

ՍԻՄՈՆ. Տառ եմ գտել, հայր սուրբ, տառ - Ս Ա...

ՎԱՆԱՐԱՅՐ. Այո, Ս: Այո, Ա:

ՇՈՂԵՐ. (Արտասվելով) Տղամարդիկ տառ են գտել:

ԱԲԵԼ. ճարտարապետին կանչե՞մ, հայրիկ: Ներս մտնեմ ճարտարապետին կանչեմ:

(Կանահայրն ինքն է գնում կացարան):

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ. Աճո՞ւրդ:

Գլուխն ազատեց:

Աճո՞ւրդ:

Կարուց դարպասից Յովվավանք՝ մի քաղցր խոսք - մեկ...

Երկու... Երեք...

ԱՍԱՏՈՒՐ. Կարուց դարպասների հետ գործ չունես:

ՆՈՒՅՆ ԳՅՈՒՂԱՑԻՆ. Քարը քեզ համար են հավաքել:

ԱՍԱՏՈՒՐ. Դավաքել ես՝ տասը սել խոտը տարել էլ ես:

ՆՈՒՅՆ ԳՅՈՒՂԱՑԻՆ. Դավաքել եմ՝ տարել եմ:

ԱՍԱՏՈՒՐ. Արյուն կանեմ:

ՆՈՒՅՆ ԳՅՈՒՂԱՑԻՆ. Փոլինքախա՞՞ռը:

ԱՍԱՏՈՒՐ. Քեզ ասում եմ մեջտեղն արյուն կլինի:

(Կացարանում)

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ. (Կանահորդ) Ո՞ւր ես, տնաշեն, կարոտեցինք:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ. Յո՞ւ, Բագրատունյաց վագրը թաթը բարձրացրել է:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ. Բարձրացրել է թաթը, թաթի տակ՝ գո՞ւնդ:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ. Թաթի տակ, այո, գունդ:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Երկրի՝ գունդը:**

**ՏԵՐ-ՍԱՐԳԱՅԻՆՑ. Չէ մի՛ Երկրի: Ուղղակի՝ գունդ, արեգակ, շարժում,  
խաղ, գեղեցկություն:**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Ախ, իհարկե շարժում, իհարկե հավերժի անիվ:**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Ուրեմն Երկրի՝ գունդը չի:**

**ՏԵՐ-ՍԱՐԳԱՅԻՆՑ. Դուք մտածել եք, թե Երկրի՝ գունդն է: (Շա-  
րունակում է ճարտարապետի կիսատ թողած նկարը):**

**ՎԱՆԱՐԱՅՐ. Դե ինքն իրեն մտածվում էր թե Երկրագունդն է, դե մենք  
էլ մտածում էինք:**

**ԲԱՐԱԹՐՅԱՆ. Նստել ենք ահա ցամաք ջրհորի հատակին ու մեծ-մեծ  
բաներ ենք մտածում - բարձր Զվարթնոց, Բագրատունյաց Երկ-  
րագունդ, Եվրոպական ճարտարապետության հայոց սկզբունք,  
Վասիլ Պալեոլոգ հայ թագավոր... Մի խոսքով՝ քո պրոֆեսորից  
վարձատրության ոչ մի սպասելիք մի ունեցիր: Իր գործը նա քեզ  
հետ վերջացրել է մի շնորհակալությանք ու հիսուն կրոն փողով:  
Դիսուն կրոնը, քեզ ի՞նչ ասեմ, մի խոսքով հիսուն կրոնը չի  
կարելի փոստին հանձնել՝ թե տարեք այստեղից այնտեղ: Դի-  
սուն կրոնը մի տուփ լավ ծխախոտ է: Քո պրոֆեսորը քեզ  
կողոպտել է: Ցավալի է իհարկե, բայց ես չեմ կարողանում  
ցավակցել, որովհետև չեմ հասկանում ինչ է կողոպտել և ինչու է  
կողոպտել:**

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏԸ. Նամակում ի՞նչ է գրած:**

**ԲԱՐԱԹՐՅԱՆ. Նամակում գրված է, որ... Վարյա, նամակում ի՞նչ է  
գրված:**

**ՏՈՒՄԱՆՈՎԱ. Չեր մեծ ծառայությունների համար պրոֆեսորը խորա-  
պես զգացված է, պրոֆեսորն սպասում է ձեր ու հայ ողջ  
ժողովրդի երախտագիտությանը:**

**ԲԱՐԱԹՐՅԱՆ. Վարյա, մի խաբիր:**

**ՏՈՒՄԱՆՈՎԱ. Սաշա:**

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Մի խաբվիր, ճարտարապետ: Նամակում գրված է, որ մենք տգետ ու աղքատ ենք, որ դու կրթություն չունես և գիրք տպելու հնարավորություն չունես:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏ. Ծիշտ է:**

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ծիշտ չի: Դու գիտնական ես, դու քո հավասարը չունես, դու ուխտավոր ես, բայց ինչի գիտնականն ես, ինչի ուխտավորն ես - ահա թե ինչու չեմ կարողանում ցավակցել կողոպտվածիդ:

**ՇՎԵԴՈՎ.** (Արգուտինսկուն) Արի այստեղ: Եկ այստեղ: (Երկուսով կռանում, ապա ծնկի են գալիս: Երկուսով կարդում են. «Ա յ ս - է - տ ա պ ա ն... - Ա ր դ ո ւ թ ե ա ն...»): Դասկացա՞ր, այս է տապան քոյիդ:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Այս է տապան քոյիդ:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏ.** Այո, Արդությանների վեց տապանաքար կա այստեղ և դրսի խաչքարը՝ Արդության աղջիկներից մեկի վրա:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ես դեռ Պետերբուրգում եմ քվեարկել քո թոշակի օգտին, բայց ինձ պիտի մի բան բացատրես. ինձ պիտի հասկացնես, թե քսան տարի ինչ ես անում ավերակների մեջ: Ավերակն ավերակ է, արդեն ավերակ է, նոր շենքի մասին է հարկավոր մտածել: Ետ ենք նայում ու դեմներիս փոսը չենք տեսնում, ետ ենք նայում ու ուժըներիս առաջը չենք տեսնում:

**ԲԱՐՏԱՐԱՊԵՏ.** Փողը ինձ շատ է պետք: Շատ շատ է պետք, և շնորհակալություն՝ այդպես ողորմածարար վստահելուդ համար: Բայց ձեր թոշակը ես չեմ վերցնի, որովհետև չեմ կարող ձեզ բացատրել, թե ինչի եմ ավերակների մեջ վայում արդեն քսան տարի: Այս գործի իմաստը ես ինքս էլ չեմ հասկանում: Այս գործից ես զգվում եմ: Այս գործը ես ատում եմ: Այս գործը իմ

կյանքը ոչ թե փշացրել է, ոչ, չի փշացրել - իմ կյանքն իմ միջից դուրս է արել, ինքը նստել է իմ մեջ ու ինձ խաքում է՝ թե ինքն է իմ կյանքը:

Բայց փողն ինձ հարկավոր է որ կարողանամ այս բեռը տեղ հասցնել: Իսկ թե որտեղ... Ներիր, բայց քո պայմանը դու չե՞ս փոխի: Ասա՝ Երգիր: Ասա՝ ծուղրուղու կանչիր: Ասա՝ մինչև երեք հարյուր մի շունչ հաշվիր: Ասա՝ Երեսուն րոպէ անընդհատ հազա - կիազամ, բայց չեմ կարող ձեզ բացատրել այս գործի իմաստը, որովհետև ես չեմ այս գործը տանում - ինքը գործն է ինձ տանում:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ե՛, չէ, ծուղրուղու կանչելու համար քեզ ո՞վ փող կտա, ոչ ոք էլ չի տա:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Տը տակ ուվերեն վ սոբստվենոյ պրավոտե, չտո խոչեց դորոգոգո վրստավլյատ տուտ շուտո՞մ.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Տը լուչշե դրւմայ օ սվոեմ զավտրաշնեմ դնե. Կե՞մ տը նամերեն ստատ - պոպոմ իլի արխիտեկտորոմ.

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Ետոնու նարողու նելզյա տերյատ նիշեգո իզ տո - գո, չտո օն սոզդալ, վոտ օ չյոմ յա գովորյու.

**ԾՎԵՇՈՎ.** Պոսլուշայտե, ետո վայո-տակի նեպրիլիշնո. Գովորիտե պո - արմյանսկի. (Կիսատ նկարի մասին) Բագրատունիների վագրը... Որքա՞ն է մաշվել, տակը բան չի մնացել: Փառահեղ գազան է, բայց վախ իր մեջ անպայման ունի: Ունի, որովհետև անտառի իր ինացությունը թերի է: Այ, լուսանը: Բացարձակապես անվախ է, որովհետև անտառի մասին գիտե ամեն ինչ, ոչինչ իրենից թաքուն չէ:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** (Գետնին ծնկասող է տալիս) Մոի վսե զդես, օ բոժե, բոժե.

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Եվրոպայում վանքեր դեռ կառուցում են, բայց ինչպես

Են կառուցում - այսօրվա նյութերով ու այսօրվա ոճերով. որևէ բան սա ձեզ հուշո՞ւմ է:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Ախ քքել եմ քո այդ Եվրոպայի վրա...

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Զի կարելի վերև թքել, քեզ լավ է հայտնի, թե ինչ է լինում, երբ վերև են թքում:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Ախ ես այնպես կուգենայի ունենալ իմ առանձին, անկախ, բոլորից անջատ, ինքն իր համար՝ ինքն իր մեջ հայրենիքը, ջարդարարների քո Եվրոպայից հեռու, ջարդարարների քո Եվրոպային անտեղյակ իմ փոքրիկ հայրենիքը:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Բրիների Ասիայից ահա Եվրոպային է բոլի համարում:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Լսիր, լսիր: Ժողովրդին ժողովուրդ է դարձնում ժողովրդային իր հիշողությունը: Այս շենքերը այս ժողովրդի լավ հիշողությունն է իր մասին: Այս շենքերին այս ժողովուրդը նայում ասում է՝ ես ես եմ, ես հայ եմ: Այս շենքերը պիտի պահպանվեն, որպեսզի այս ժողովուրդը միշտ ասի՝ ես հայ եմ արդեն հազար տարի, մի ուրիշը չեմ, լեզգի չեմ, թուրք չեմ, ֆրանկ չեմ, նասրանի չեմ - ես հայ եմ: Բայց սա քեզ համար կարևոր չի. Դու քեզ մեծ նավ ես համարում ու քո կարծիքով քեզ համար մեծ ծով ես գտել - այս լճակը քեզ մեղ է գալիս, քեզ հարկավոր չի այս լճակը:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. ճահիճը:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Դու քո ուրիշ երկրներից հիշողություններ մի պատմիր:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Դայի քո քրիստոնությունը բան չես տեսնում:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ. Տեսնում եմ, ինչու, տեսնում եմ իր տունն ու ծնող-ներին հայույթով փախչողիդ թիկունքը:

ԲԱՐԱԹՐՅԱՆ. Շատ բարի. չեմ փախչում, ետ եմ դառնում ու բերանս փակում եմ, չեմ հայույթում. բերանս փակ ահա ես՝ գործող

ճարտարապետս, քեզ էլեկտրաղաց եմ տալիս: Իմ էլեվատորի համար ո՞ւր է ազգային քո հացը:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Իմ ազգային մի բուռ հացի համար դու նախ մի ջաղաց կապիր:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Պողպատաձուլարանների ու էլեվատորների քսաներորդ դար ես մտել:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Ե՞ս: Ես՝ հայու մանչըս, քսաներորդ դար չեմ հասել: Ես տասնմեկերորդ դարի ձորում գլխիս խփած մնացել ու սողալով մագլցում եմ, ի՞նչ քսաներորդ դար:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Այդ դեպքում՝ ավելի լավ է ետ դարձիր:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Իսկ դու քո քսաներորդ դարի գլխից ղեկավարիր՝ թե ինչպես ետ դառնամ:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Չես ուզում՝ էդ էլ չեմ անի:

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ. (Ճատակին ծնկասող է անում) Օ բոժե, բոժե...

**ԾՎԵՇՈՎ.** (Արգուտինսկու մասին) Սուվորով զորավարը փնտրում է թշնամու հետքերը:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Քո նախնին պարսիկից, արարից, թուրքից, քրողից, տիֆից իր արյունը փրկել, բերել տվել է քեզ: Քեզ համար է փրկել: Քո արյան կճուճը ճանապարհին չի կոտրել: Մի վայրկյանում ոչինչը կօծեր քո մի պուտ արյունը, իհնա ոչինչ կլինեիր: Բայց կաս, ճարտարապետ ես, մեջդ արյուն է եռում, կարծում ես եռում է քո արյունը: Մոռացել ես էն խեղճին, որ քրոջի, տիֆի, բորի, թուրքի ու արարի արանքներով քեզ բերում էր:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Է, շնորհակալ ենք:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Այո, ո՞ւր է քո շնորհակալությունը:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Բոլորս էլ երբեմ մի որևէ նեղվածքում եղել ենք - թիթեռը բոժոժի մեջ, քուռակը ձիու փորում, մենք՝ մեր ազգային:

Հետո նեղվածքը ներ է գալիս, և թիթեռին՝ հովիտը, քուռակին՝ տարածությունն ու վազքը, մեզ՝ ամբողջ աշխարհը:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Հետո դագաղդ զավակներիդ ուսը կտա՞ւ՝ թե «ինձ հայրենիքի մի արշին հողին արժանացրեք»: Զգուշացնում եմ, որ դռնից ետ եմ տալու: Դագաղդ հայրենիքի դռնից ետ է գնալու, զգուշացնում եմ:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Է՛լի ողորմածիկ տերտերը, Է՛լի հանգուցյալ տերտերականությունը: Մահիցս հետո իմ ոտքից բռնեք ու աղբանոց շպրտեք՝ իմ կտակը:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆՑ.** Ինչո՞ւ, ուրիշ պատկեր էլ կա, ինչո՞ւ աղբանոց ահա տասնինգորդարյա վանքը, ահա վանքի կառուցողը, ահա Խորենացու քարը, ահա Շիրակացունը, ահա մեծ Սահակը, ահա Նարեկացի Գրիգորը, Պահլավունի իշխանը, Ոշտունցի Թեոդորը, Երկարե Աշոտը, ահա Սմբատ Օրենսդիր սպարապետը, Խաչատուր Աբովյանը, Յովիաննես Թումանյանը և ես ու դու - մտքի, կամքի, բազկի վիթխարիներ... ուսուցիչը պանթեոնում դանդաղ պտտվում ու երեխաներին պատմում է նրանց պապերի՝ մեր մասին: Երեխաները լսում, խաժ աչքները թարթում ու թաքուն ժպտում են. Է՞ ձեր Պուշկինը, ես էլ մեր Թումանյանը: Վա՞տ է: Վատ չէ, քանի որ ոչ ոք վիրավորված ու ճնշված չմնաց:

**ԾՎԵՇՈՎ.** (Քարտեզի դեմ) Օ՛յ, տղայք, ձեր զրույցից վատ հոտ է գալիս, վատ հոտ եմ առնում ձեր զրույցից: Ձեր զրույցը լսում և ամաչում եմ մեծ տերությունների փոխարեն: Լսում և էգոհզմի ու պատերազմի հոտ եմ առնում: Օ՛յ, տիարք. մարդը միևնույն է իր գազանին հաղթելու է, և ուրեմն կեցցեն այն պայմանները՝ որ մարդուն օգնելու են գազանին հաղթել:

(Գավթի դռանը)

**ԱՇՈՒՂ.** Ասա՝ ի՞նչ գործ ունես Յոռմի հետ. Երեսդ Կասպից ժովին արա՝ մանր ցեղեր, ազատ տեղեր, շենքով-շնորհքով ժողովուրդ կա, ալբան-մալբան, արխազ-մարխազ, մառք-մուռք, բեր, խառնիր, ձուլիր, անունը դիր հայ՝ ի հիշատակ քոյիդ ու քո հայկազուն ցեղի, ի՞նչ գործ ունես, փատած Յոռմի հետ գլուխ ես դնում: Մեռելի դեմ բա կկովե՞ն: Բա չգիտե՞ս, որ մեռելի դեմ չեն կովի:

**ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ.** Եդ ո՞ւմ վրա ես դիվոտում, աշուղ Սուսեր:

**ԱՇՈՒՂ.** Տիգրանի: Մեր Տիգրանի: Տիգրան թագավորի:

**ԳՅՈՒՂ.** Բա, տնաշեն, Տիգրանը երք է եղե՛լ...

**ԱՇՈՒՂ.** Երեկ, եսօր, էգուց: Կողքիս կանգնած է: Բա որ ես կույր եմ, բա որ դու աղքատ ես, բա որ ես գուսան չեմ՝ աշուղ եմ, եդ ո՞ւմ մեղքն է: Կողքիս կանգնած է, մեջս ծանը՛ր նստած է: Թողեց անտեր էս ժողովորին, կանանցն առավ ու փախավ:

**ԳՅՈՒՂ.** Ա դե ձեռ քաշի, է:

(Կացարանում)

**ԲԱՐԱԹՐՅԱՆ** (ճարտարապետին) Ինքնուրո՛ւյն, սեփական, քեզանի՛ց - մի բան ստեղծելու ցանկություն քո մեջ կա՝ թե չկա: Առանձին, անկախ, ոչ թե ուրիշի ճորտը, այլ քո սեփական անձի ու երևակայության թագավորը լինելու ցանկություն քո մեջ կա՝ թե չկա: **ԾԱՐՏԱՐՎՊԵՏԸ.** Երևակայեք, որ կա: Ես ու վարդապետը որոշել ենք, որ երբ նորից ծնվենք՝ լինելու ենք արդեն մեր անձի թագավորն ու մեր երևակայության կատարածուն, թևեր ենք հազմելու թոշենք: Քինա չենք կարող, որովհետև սա գործ է, պիտի արվի: Վարդապետ, երիտասարդ պարոնին խոստացել եմ թոշակի դիմաց մի երկար ծուղրուդու կանչել: Վարդապետ, վախենում եմ հազս բռնի:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Դու մի վիրավորվիր:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Ես չեմ վիրավորվում, արդեն չեմ վիրավորվում: Ենքա՞ն են վիրավորել, որ արդեն կոշտացել եմ: Կանչե՞նք ծուղություն:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Ոչ, ավելի ազնիվ կլիներ, եթե քո գործի մեջ քո տեսած իմաստը մեր առջև բացեիր:

**ՏԱՐՏԱՐԱՊԵՏԸ.** Վաճք է, կանգնած է, դեռ կանգնած է, մոմի չափ բարակ չորս սյան վրա հարյուր տոնն ծանրություն է ու հազար տարի է կա, դեռ կա, չի խորտակվում, շինարարական արհեստի բոլոր օրենքներով պիտի մի րոպե էլ չմնար ոտքի վրա, բայց մնում է: Մնում է, մենք էլ ահա չափում ենք, չափագում ենք, հաշվում ենք, նկարում ենք - մենք մեզանից ի՞նչ իմաստ պահանջենք: Եթե մի երկու սայլ կիր ու մի երկու օգնական որմնադիր ունենայի կիրը պարկով կշալակեի, վարպետներին ետևիցս գցած կգնայի մեկ առ մեկ կկարկատեի, որպեսզի մի հարյուր տարի էլ մնային ոտի վրա, և ոչ թե կնկարեի ու կչափչի: Մեզանից ի՞նչ իմաստ դմենք: Իսկ Յովվավանքինը եղ չորս սյունն էլ չկա, կախված է, ողկույզի պես կախված է, որտեղի՞ց... Ես ինչ գիտեմ որտեղից - երկնքից: Մեզանից մեծ մի բանի առաջ եկել ծնկել ենք - դուք եկել հարցնում եք՝ թե ինչու ենք ծնկել: Է, ծնկել ենք:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԸ.** Բագրատունյաց վագրը բարձրացրեց թաթը: Յոյակապ գազան դուրս եկավ, ճարտարապետ:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Տար կպցրու Կրուպայի ծուլարանների պատին:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԸ.** Ոչ, խարամելու եմ հայի քո ճակատին, որ ուր էլ խցկես՝ դնչիդ խփեն - դուռդ ո՞ւր է, արմյաշկա, գնա քո դռանը հաչիր:

**ԲԱՐԱԹՐՅԱՆ.** Վիրավորում ես:

**ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԸ.** Դու շատ լավ գիտես, որ իմ խոսքը չի, վիրավո-

որող ես չեմ:

ԱՐԳՈՒՏԻՆՆԿԻ. Ալեկսանդր, դորոգոյ մոյ, կոգդա յա ումրու վ Պետերբուրգե, պրիվեզի սյուդա, պոժալույստա, պրիվեզի սյուդա մոյո տելո, վլոտ տուտ, վիդիշ, եստ սվորողնոյե մեստո, վըրոյ մնե զդես մոգիլու ի պոխորոնի մենյա զդես, Ալեկսանդր.

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. (Բահաթրյանին) Դու իհարկե ճիշտ ես: ճիշտը իհարկե դու ես: Բայց ես զարմանում եմ, թե դու եղ ինչպե՞ս ես կարողանում ճիշտ լինել: Ճահիճը: Այո, ճահիճը: Միայն ճահիճը: Գյումրեցի Ղուկասովը բերեց նվիրեց այս գրամոֆոնը և չհանգստացավ՝ մինչև լրագրով երախտագիտություն չհայտնեցի: Մանթաշովի շալվարը թիֆլիսեցիք դրկել են ու սպասում են, որ լրագրով հայտնեն, թե ահա հազիս շալվար չկար, իսկ հիմա կա ձեր ուղարկած շալվարը: Իհարկե ճահիճ: Բայց դու ինչպե՞ս ես կարողանում ճահիճն ճահիճ ասել: Դու ինձ բացատրիր, որպեսզի ես էլ կարողանամ, քեզ նման, հեռու մնալ, արթուն, սրափ, ճիշտ լինել, գեղեցիկ ու խելացի մնալ - չխելագարվել:

ԾՎԵՌՈՎ. (Արգուտինսկուն) Փորդր կմրսի, Պետերբուրգ չես մեռնի, հենց այդտեղ էլ կմեռնես:

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ. Բայց դե մարդ ես, ասում ես իմ արածն ի՞նչ է: Մթնում ու լուսանում է, մթնում ու լուսանում է, կարծես անընդհատ նույնն է, ժամացույցիդ երբ էլ նայում ես՝ ասես միշտ ժամի տասներկուսն է, բայց թե թղթեր են ավելացել, նկարները շատացել են, մատիտն էլ կարճացել է - ուրեմն ժամանակ է անցել, և մարդս էլ անմահ չի: Ուրեմն՝ իմ արածն ի՞նչ է: Այսքան օդ ահա շնչել են: Վարդապետն ասում է Պլատոնի բաժին օդն են շնչել: Սիմոնը գետից ձուկ է բերել, ձուկը ջրում կար՝ էլ չկա, մատիտը կար՝ չկա, մեր աղջիկը սուրճ է սարքել, մեր աղջիկը գեղեցկուիի էր, նայել են աչքս լիացել է, մի խոսքով վայելել են այս ամբողջ

գեղեցիկ աշխարհը, մի խոսքով՝ այս գեղեցիկ աշխարհից անդառնալիորեն փչացրել եմ այսքան բան, ի՞նչ է իմ տվածը այս աշխարհին: Ոչինչ: Բայց դե մարդ ես, ուզում ես իմաստ գտնես քո գործի մեջ ու իմ մեջ ահա հնարվել է, թե վաղը, երբ այս ժողովուրդը ամբողջ ու հարուստ կլինի և դարձյալ, ուր հարյուր տարի հետո, հնարավորություն կունենա քարին քար դնելու, իսկ այս ավերակները արդեն չեն լինի, որովհետև արդեն շատ են ծեր, այդ ժամանակ ահա իմ թղթերի մեջ գուցե մի խորհուրդ, մի գեղեցիկ նախշ, կամարների մի շարք, պետքական որևէ բան գտնեն: Իսկ եթե չեն գտնի՝ չեն գտնի, մի կյանք էլ թող անցած լինի անտեղի:

(Գավթի դռանը)

ՄԻՄՈՆ. (Խաչքարի վրա կարդում է) Տ Ա Ր... Տ Ա Ր Ի Ա Տ... Մ Ա- Ր Ի  
Ա Տ Ի... Մ Ա Ր Ի Ա Տ... Մ Ա Ր Ի Ա Մ Ի... Օֆ, տեսնես ով է  
թաղված, ում է ճնշում էս ահագին քարը: (Նկատում է Շողերի  
արտասվելը): Դժգո՞հ, դժգո՞հ, դժգո՞հ... ինչ է եղել, շնչիս վրա  
ինչ ես թթվել:

ԾՈՂԵՐ. Ես եմ թաղված, իմ վրա է քո եդ անտեր քարը, իմ վրա ես  
չխկչխկացնում: (Արտասվելով անցնում է վանք):

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Սիմո՞ն... Շողերիդ ինչի՞ ես տխրեցնում: Թե  
սրտովդ չի՝ ծախիր, առնում եմ:

ՄԻՄՈՆ. Ծախում եմ, ինչո՞վ ես առնում, տկլոր:

ԳՅՈՒՂ. Մեր կնկանը տալիս ենք, իինգ երեխան էլ վերադիր:

ԱՇՈՒՂ. Անդրանիկ... Եդ ո՞վ է ում ծախում, եդ ինչ փոխուտուրս է:

ԹՈՌՈՉ. Չեն ծախում, պապի. ուզում են լացեն՝ ծիծաղ է դուրս գալիս:

ԱՇՈՒՂ. Յա, մատաղդ եմ, տեղդ ինչքան էլ նեղացնեն՝ ծիծաղը բե-  
րանիդ պատասխանիր:

(Վանքում)

ՍԻՄՈՆ. (Շողերին, որ աղոթում էր) Քո տվածը է՛տ խեղճ աստծուն ինչ  
է, որ իրենից դու բան ես խնդրում: Դու ի՞նչ իրավունքով ես իրե-  
նից բան խնդրում: Դու իրեն ի՞նչ ես պահ տվել՝ որ ետ ես ուզում:  
ՇՈՂԵՐ. Բա՛խտս, թևերս, իմ բախտը... Թևերս իրեն եմ տվել, ետ եմ  
ուզում, խլացել է, չի լսում... Թռչեմ, չկինեմ, վերանամ, կորչեմ  
ձեզանից՝ քեզանից, քո ճարտարապետից, քո հայր սրբից...  
Դուք ի՞նչ տղամարդ եք, դուք վանքի դռան աղքատ եք: Իմ ճա-  
կատագիրը, իմ բախտը, իմ թևերը:

(Գավթի դռանը)

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Խոտհարքը չորացավ, աճո՛ւրդ:

ԱՃՈՒՐԴ:

ԱՃՈՒՐ. (Յանկարծ, չունգուրին զարկելով)

Քշել էր իր ծին Թուրանից Իրան,  
Իրանից Յաբաշ քշել էր իր ծին,  
Ազատ ճամփեքով,  
Անմարդ ճամփեքով,  
Սարսափով, (չգիտեմ ինչ),  
Ահով ու մահով լցված ճամփեքով  
Քշել էր իր ծին...

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Է՛տ ո՞վ էր քշել:

ԱՃՈՒՐ. Մելջուկի Արփ-Արսլանը: Զիավոր զորքը ետևից դղորալով,  
ինչպես որ սարսափած նախիրը փախս ընկնի ու ճամփին կանգ-  
նած կույր լինես ու կողքովդ դղորդա, իր ծիավոր զորքը ետևից  
դղորալով, լեռը դաշտ անելով ու դաշտը՝ ձոր,

Քշել էր իր ծին,  
Իրանից Յաբաշ, Յաբաշից Մսըր,  
Ու մարդ չէր տեսել.  
Ոչ մի կրօքի տակ առնականության կայծքար չէր տեսել,  
Ոչ մի սրտի մեջ տղամարդության

Պողպատ չէր տեսել իր թրի շեղը,  
Ոչ մի հարվածից կայժակ չէր ելել,-  
Բոլորը փափուկ,  
Բոլորը կակղած... քանակներ էին:  
Տղամարդը նա էր,  
Մենք ի՞նչ տղամարդ ենք:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Էդ ո՞վ է, ո՞վ:

ԱՇՈՒՂ. Արփ-Արսլան թուրքը՝ ասացինք: Յետո կանգնեց մեր Անիի  
դեմ. դիպավ ու ետ ընկավ, մեկ էլ՝ դիպավ ու ետ ընկավ.  
քառասուն անգամ դիպավ ու ետ գլորվեց. նայեց տեսավ դեմը  
Անի քաղաքն է. իրար դեմ կանգնեցին: «Ես անցորդ եմ,  
անցնելու եմ, դու հավերժիր, Անի քաղաք»:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Ես ահազին երկրում մի հայ չկա՞», որ թուրքին ես  
գովում:

ԱՇՈՒՂ. Համբերություն ունեցիր, տես ինչ եմ ասում: Ասում եմ՝ քաջա-  
ցավ, քանզի նրա դեմ կանգնեց մեր Անին: Իրար արժանի երկու  
վագր իրար դեմ ծառս եղան, Մայր տաճար կանաչ-կարմիր վան-  
քը կանգնեց նայելու, հետո՝

Տղամարդը նրանք էին,  
Մենք ի՞նչ տղամարդ ենք:

Սիրտը թնդում էր՝ որ պարիսայը բարանը ջարդում էր, որ սուրը  
վահանի վրա փշրվում էր: Յետո՝

Տղամարդը նա էր, մենք ի՞նչ տղամարդ ենք...

Կապերը մի կարգին կապեմ, «Հալեպ քաղաքի» եղանակը բերեմ  
գցեմ վրան... Անդրանիկ...

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Փախչում նտնում ես չեղած պատմությունների  
մեջ ու դուռը ետևիցդ փակում: Վարդանի Դավիթը իրեն գիշերը  
խումբ է տարել, ինչ պակաս տղերք են՝ որ երգդ ափսոսում ես:

**ԱՇՈՒՂ.** Խոսքս չեմ ափսոսում, ե, իրենց եմ ափսոսում, իրենց՝ որ թշնամի չունեն, որ մարդուս թշնամին էլ պիտի մարդ լինի, որ ժամանակը հերոսների ժամանակ չի, որ իհմա «հա» են ասում ու «չէ» անում, «չէ» են ասում ու «հա» անում, ծիծաղում ու վատդ են ուզում: Երեխեքը գնալու կորչելու են ու չես հասկանալու ով կորցրեց՝ բարեկա՞մը, թշնամի՞ն, չոբանաշո՞ւնը...

Սահմանապահ զորքերի օֆիցերը դանդաղ առաջանում, գալիս կանգ է առնում խաչքարի մոտ, ուր իր վառած մոմի առջև աղոթք է մրմնջում մի պառավ:

Ես ինչի՞ լռեցիք, ինչի՞ եք պապանձվել:

**ՊԱՌԱՎ.** (Սահմանապահի մասին) Տնից-տեղից, հորից-մորից կտրված, օտար դռների, սոված-ծարավ... Մինըդ իրա հացին չի կանչում: Բա հոր-մոր երեխա է, չէ՞, բա իրա հերնումերը իրա կարոտը քաշում են, չէ՞...

(Կացարանում)

**ՎԱՆԱՐԱՅՐ.** Աաա~ա... հերն անիծած, կապրենք, ճարտարապետ, լոբուտը ծաղկել է: (Կացարանից ելնում է): Աա~ճուրդ: Ինչքան շատ տաք ճարտարապետի օգուտն է - լոբուց-բանից, պանրից-բանից, թութունից-բանից, մածնից-բանից... Աճուրդի եմ դնում: Աա~ճուրդ: Փղշտացիներ, չնչահավատներ, թերահավատներ, փարիսեցիներ, ինչո՞ւ եք եղբան լավը, ինչ որ ուզում ենք՝ էն տվեք, ինչո՞ւ եք ձեր երեխեքի բերանից կտրում մեզ տալիս, ճարտարապետությունը ձեր ինչի՞ն է պետք, աճուրդ... Մայր տաճարի շրջակայքը՝ երեք ռուբլի, գինն եջմիածինն է նշանակել, աճուրդ, մեկ էլ՝ պանրից-բանից, հացից-բանից, խղճից-բանից, քանի որ դուք եք ու մենք ենք, ուրիշ տեղ ուրիշ

հայ չկա, փողն Եջմիածնին, լորին՝ մեզ, աճուրդ... Դուք մեզ լավ պահեք, որովհետև մեր մեջ ձեր վաղվա օրն է, լոբուց-բանից, կարտոլից-բանից, խելքից-բանից... Զեզ համար մի հատուկ, հայացի ավետարան եմ գրելու, քանի որ Քրիստոսի ավետարանը ձեզ վրա չի ազդում: Գրելու եմ, որ դուք ամենալավն եք, գրելու եմ, որ ձեզ թույլ եմ տալիս շնանալ, գողանալ, ուրանալ, քանի որ է՛տ ձեզ չի ասած՝ մի՛ շնացեք, մի՛ ուրացեք, մի՛ գողացեք, քանի որ դուք չեք շնանում, չեք գողանում, չեք ուրանում, քանի որ ո՞ւմ հետ շնանաք, ի՞նչ գողանաք, ի՞նչն ուրանաք, և էղպես՝ ձեզ պես, ես շան ու գողի աշխարհում ապրել չի լինի: Գրելու եմ, որ ամբողջ աշխարհի, ամբո՞ղջ-ամբողջ աշխարհի, աստόւ տակի ես մեծ երկրում խղճի անդրին դրվելու է ես հողին, և խղճի անդրին ունենալու է ձեր կերպարանքը: Հացից-բանից, գարուց-բանից... մի՛ վախեցեք, իինա չէ - աշնանը... Յիմա մեր լոբուտը ծաղկել է, գետում լոք ձուկ կա, գետը սառած չի, կապրենք մինչև աշուն, դուք եք ձմեռվա մեր աստվածը:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. Բայց ախար թանկ է, հայր սուրբ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Ինչի՞ց է թանկ՝ ինձանի՞ց, ճարտարապետի՞ց: Թանկ է, դժվար է, ծանր է, մեռնիչ է - է՛տ է:

ՆՈՒՅՆ ԳՅՈՒՂԱՑԻՆ. Վերցնում եմ:

ՎԱՆԱՐԱՅՐ. Ուշբափայի քո ցանքից՝ երկու պարկ կարտոլ: Մե՞կ...  
երկու... երեք: Կաթողիկեի շրջակայքը գնաց: Միջնաբերդը՝  
լանջերով - երեք ոուրի ու մի տոպրակ լորի:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՑ. (Ասատուրին) Քո իին խոտհարքն է, վերցրու:

ՎԱՆԱՐԱՅՐ. Միջնաբերդը՝ լանջերով: Էնտեղ իշխանները խոսք խոս-  
քի են զարկել հայոց ճակատագրի վրա ու խոսքակռվից կայ-  
ծակներ են թռել... Մայիսի մեկից տավարի, ոչխարի, մինչև ան-

գամ այծի ուս չի տեսել - Միջնաբերդը՝ լանջերով, ի՞նչ է մի տոպրակ լոբին քանդակազարդ հայոց ապագայի առաջ...

**ԱՂՋԱՆԱԿ.** (Դեռ քարացած) Լավ, էլի... Ազատիր, էլի...

**ԱԲԵԼ.** Էլի՝ կխաղաս:

**ԱՂՋԱՆԱԿ.** Քա ուրիշ ի՞նչ անեմ:

**ԱԲԵԼ.** Դե որ կխաղաս՝ մնա: (Շարունակում է թուրը մաքրել):

(Կացարանում)

**ՇՎԵԴՈՎ.** Քանի դեռ արևը չի անցել՝ հայոց մեջ ճարտարապետի հետ նկարվենք: Յայերիդ միասին նկարեն: Բոլոր հայերիդ միասին նկարեն:

Կացարանից ելնում են, լուսանկարվելու իրարանցում է սկսվում, լուսանկարում է Շվեդովը, բոլորը, ճարտարապետից բացի, հավաքված-շարված են: Շվեդովը շարք է մտցնում նաև սահմանապահ զորքերի սպային:

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Ա գոե՞ տա կրասավիցա, Մարիա՞ն չտո-լի.

**ՎԱՆԱՐԱՅՐ.** (Վանք է մտնում, ուր Սիմոնն անշարժ նստած է աղոթող Շողերի մոտ) Ինչի՞ ես լաց լինում, հարս, ո՞ւմ ես աղոթում: Ինչ որ կաս՝ դու ես, դու էտ ո՞ւմ ես աղոթում: Վեր կաց, էն ցնդած բիձուն դուր ես եկել, կողքին տեղ է պահում քեզ համար: (Սիմոնին) Վեր կաց, փոշտացի, նկարում են: «Դու քո ծոնը տրտումերես մի պահիր, մանանեխահատիկի չափ քո տիսրությունից ժողովորի առաջ վշտի բերներ մի կապիր... զվարթադե՞ն, զվարթադե՞ն, քանզի...» ի՞նչ է եղել, բան չի եղել, միշտ էլ է եղել: (Վանահայրը տանում և Արգուտինսկին իր կողըն է առնում Շողերին):

**ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ.** Նե բուդ րեվնիվոյ, Վարյա, նե դումայ, չտո տվոյ ստարիկ իզմենյաետ տերե, նիշեգո պոդորնոգո, էտո ու նեգո սենտիմենտալնի վսպլեսկ.

ԾՎԵՂՈՎ. Յիմա հայերից պահանջում ենք մեկ րոպեի անշարժություն: Յայերի համար դա մահացու բան է, բայց մեր գործի շահը պահանջում է մեկ րոպեի հնազանդություն:

Եվ ծերունական մաշված մի ձայն պատմում է այդ «լուսանկար»-պատկերի վրա. ԿԱՆԳՆԱԾ ԵՒՆՔ: ԵՍ ԵՍ ԵՄ, ԱՅՈ, ԹՈՒՐԸ ԱՐԱ ԵՐԵՎՈՒՄ Ե: ՅԻՆ ԹՈՒՐ ԵՐ, ԱՍԻՌԻՄ ԻՆՉ ԻՆՉՔԱՆ ՅԻՇՈՒՄ ԵՄ ՄԱՔՐՈՒՄ ԵՒ: ՇՈՂԵՐ ՄԵՐԸ, ՄԻՄՈՆ ՔԵՐԸ: ԵԱՐՏԱՐԱՊԵՏԸ, ՈՉ, ԶԿԱ, ԽՈՒՍՓԵԼ Է, ՄԻՉՏ ԽՈՒՍՓՈՒՄ ՓԱԽՉՈՒՄ ԵՐ: ԱՍԻՈՎ ԳԱԼԻՍ ԽՄԲԵՐ ԵԻՆ ԱՆՑՆՈՒՄ ՏԱճԿԱՍԱՍ, ԳԱԼԻՍ ԱՍԻ ԵՐԴՎՈՒՄ ԵԻՆ ՈՒ ԱՆՑՆՈՒՄ: ՄԵԾԵՐՆ ԻՆՉԱՆԻՑ ԹԱՔՑՆՈՒՄ ԵԻՆ, ԲԱՅՑ ԵՍ ՈՒՐԵՄՆ ԳԻՏԵՐ՝ ՈՐ ԹՈՒՐ ԵՒ ՄԱՔՐՈՒՄ, ԹՈՒՐԸ ԹԵՇ ԻՆՉԻ ԵՒ ՄԱՔՐԵԼՈՒ: ՈՒ ՄԵԿ ԷԼ ՏՆՔԱԼՈՎ, ԽՈՐ ՏՆՔԱԼՈՎ ԱՐՅՈՒՆ-ՏԱԼՈՎ, ՊԱՏԵՐԸ ԲՈՆԵԼՈՎ ԵԿԱՎ ԿԱՆԳՆԵՑ: (Այդ այդպես էլ լինում է՝ գիշերվա կարմիր հագած տղաներից մեկը գալիս կանգ է առնում «խմբանկար»-պատկերի առաջ): ԻՐԵՆ ՄԵՆՔ ՇՈՒՏ ԵՒՆՔ ՏԵՍԵԼ, ԲԱՅՑ ՊԱՐՈՆ ԾՎԵՂՈՎԸ ՄԻ ՐՈՊԵՒ ՔԱԶՁԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐ ԽՆԴՐԵԼ, ԶԵՒՆՔ ՇԱՐԺՎՈՒՄ: ՄԵՐ ԴԵՍ ԿԱՆԳՆԵԼ ՈՒ ՄԵԶ ԶԵՐ ՏԵՍՆՈՒՄ, ԱՉՔԵՐԸ ՇԱՂՎԱԾ՝ ՆԱՅՈՒՄ ՈՒ ՕՐՈՐՎՈՒՄ ԵՐ... ԶԵՌՔԻՄ ԹՈՒՐԸ ՏԵՍԱԿ, ԽԼԵՑ ԲԱՐՁՐԱՑՐԵՑ ՈՒ «ՆԵՆԱՎԻԺՈՒՒՈՒՈՒ»... (Տղան ուղղությունը կորցնում ու զնկնում է): ԳԻՇԵՐՈՎ ԵԿԵԼ ԱՆՑԵԼ, ԳՆԱՑԵԼ ՍԱՐՄԱՆԻ ՎՐԱ ԴԱՐԱՍՆ ԵԻՆ ԸՆԿԵԼ, ԿՈՏՈՐՎԵԼ, ԱՇՈՒԴ ՍՈՒՏԵՐԸ ՆՐԱՆՑ ՎՐԱ ԵՐԳ ԿԱՊԵՑ, ԺՈՂՈՎՈՒՐԴՅ ԵՐԳՈՒՄ ԵՐ:

1973